

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ 80 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Միջազգային սակարանային փլուզումը քանդեց ամեն պատրանք. ժողովրդային զանգ-ուածներու բարօրութիւնը կարելի չէ երաշխաւորել տնտեսական անըջային աճի կեղծ խոս-տումներով: Վերջին երեք տասնամեակներու գերազատական շրջանակներու փայփայած երազները տիեզերական չափերու հասնող կազմակերպուած խաբէբայութեան մը կերպա-րանքը ստացան: Իրականութիւնը մերկացաւ եւ ժամանակը եկած է լրջանալու, մեր գործե-րուն կարեւորութեան եւ անյետաձգելիութեան անդրադառնալու:

Բնական է, յոբելենական պայմաններ անհրաժեշտ չեն վերոյիշեալ հաստատումները կա-տարելու համար: Իսկ այս տարի մենք մեր Միութեան 80ամեակը կը նշենք ամբողջ աշխար-հի մէջ, սկսելով Հայաստանէն՝ մինչեւ հեռաւոր Աւստրալիա: Այս առթիւ հասարակութեան կը ներկայացնենք մեր տասնամեակներու գործունեութեան ընդհանուր հաշուեկշիռը, կը մե-ծարենք մշակոյթի ու դպրութեան մեր անխոնջ ծառաները, կը կատարենք դպրոցի եւ գե-ղարուեստի քարոզչութիւնը, ձեւով մը կը վերանորոգենք այս մարզերէն ներս աշխատելու եւ յառաջդիմելու մեր ուխտը, որպէսզի Համազգայինը կարենայ շարունակել տէր կանգնիլ իր առաքելութեան: Առաքելութիւն՝ որուն կատարման համար սփիւռքեան պայմանները ժա-մանակի ընթացքին աւելի ու աւելի աննպաստ կը դառնան:

Համազգայինի գործունեութեան դաշտէն ներս այս իմաստով յատուկ տեղ կը գրաւէ **Բա-զինը**, որովհետեւ այստեղ դժուարութիւնները հասկնալի պատճառներով աւելի մեծաթիւ են: Պարը, երգը, թատրոնն ու երաժշտութիւնը նոր սերունդը գրաւող սեռեր են: Դպրոցը, տար-րական հայագիտութեան կողքին, երեխային ու պատանիին կու տայ կեանքը նուաճելու գէնքերը: Իսկ **Բազին** հիմնականօրէն գրականութիւն կը նշանակէ: Հայկական գրականու-թիւն մշակողին հաշւոյն ալ, սիրոյ եւ տաղանդի կողքին, հայերէսի բացառիկ տիրապետու-թիւն կ'ենթադրէ, եթէ ոչ՝ բացարձակ. ասեղ՝ յարգանքի մէջ: Նոյն ձեւի պայմաններ ի զօ-րու են նաեւ ընթերցողին համար: Իսկ թուական հաւանականութիւնները իրարու հետ բազ-մապատկուելով աւելի՛ եւս կը փոքրանան: Արդիւնքը՝ սակաւաթիւ ընթերցողներ դեռ աւելի սակաւաթիւ գրողներու դիմաց: Ծախսը՝ բարձր. եկամուտը՝ անհամեմատօրէն ցած, չըսելու համար՝ գրեթէ անգոյ:

Այս վիճակը նոր չէ սակայն: Հայ գրականութեան համար սփիւռքեան վիճակը երբեք նպաստաւոր չէ եղած: Հակառակ այս իրողութեան, մենք վկան հանդիսացած ենք գրական ճառագայթող փայլատակումներու: Վստահաբար արժեքներ յայտնաբերուեցան մեր գե-ղարուեստական պարբերական մամուլի էջերուն շնորհիւ: Թերեւս գրական դպրոցներ չգար-գացան, բայց բոլորովին չանհետացաւ բացառիկ էջեր կարդալու հաճոյքը: Քազանծաքիսի **Չորպայի**ն պէս, որ առաջին աշխարհամարտի յաջորդող ահաւոր տնտեսական պայմաննե-րուն մէջ, իր գրագետ վարպետը հեռագրով կը հրաւիրէր անմիջապէս երկար ճամբորդու-թեան ձեռնարկելու, իր քով գալու, տեսնելու համար հանքի մը մէջ իր գտած «սքանչելի կա-նաչ քարը»: Վարպետի մերժումին արժանանալով ան կը պատասխանէր. «Ամէն յարգան-քովս, վարպետ, գրչակ մըն ես: Դուն ալ, խեղճս, կեանքիդ մէջ անգամ մը գեղեցիկ կանաչ քար մը տեսնելու առիթը ունեցար, բայց չտեսար: Անգործ եղած ժամանակս ինքզինքիս հարց կու տայի, «արդեօք դժոխքը գոյութիւն ունի», թէ ոչ»: Բայց երէկ նամակդ ստանալուս պէս մտածեցի, թէ քեզի նման գրչակներուն համար վստահաբար դժոխք մը ըլլալու է»:

Համազգայինի պատգամաւորական ժողովները եւ անոնցմէ բխող կեդրոնական վարչու-թիւնները միշտ առաջնորդուեցան Չորպայի սկզբունքով՝ «գեղեցիկ կանաչ քարը» տեսնե-լու հրայրքը ապրելու սպասումով. բազում զոհողութիւններ՝ փնտռելու եւ գտնելու համար փոքրաթիւ առանձնաշնորհեալներու հոգիներու եւ ուղեղներու մէջ թաքնուած հազուագիւտ գեղեցիկին գէթ ասուպանման գրչային արտայայտութիւնը:

Ըսինք արդէն՝ ժամանակները աննպաստ էին առաջ ալ, իսկ ներկայիս համաշխարհային տնտեսութեան սպառնացող երկրաշարժը կը խոստանայ մեր գործը աւելի եւս դժուարաց-նել: Սակայն կը բաւէ մտաբերել Նիկոլ Աղբալեանի փոքրիկ տպագրական մեքենան եւ անոր արտադրութիւնը՝ հրաժարելու համար հրաժարականէն:

Մեր կողմէ գեղեցիկ էջի փնտռողները կը շարունակուի:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՈՆՈՒԼ ԵՒ ՄՏԱԾԵԼ՝ ԶԵՏԵԻԵԼՈՎ Գ. ԳԻԻԶԱԼԵԱՆԻ ԶԱՄԱԶԳԱՅԻՆԸ ՊԱՏՄԵԼՈՒ ՓՈՐՁԻՆ*

Պաշել այսօրս չայոհեիմ, այսօրս չայոհեիմ մե սեղծել, որ ոչ թէ մարտեղոյ, թարոյեղոյ եւ մոմ պառելոյ չաւար եկեղեցի պ'երթայ, եւ առնձառով պ'ոգեհորոհի, այլ չայրենիք պ'ոյժէ, աջաճ եւ աւանդ չայրենիք չաւար պո շոչոհի: Դորոճիմ մեջ մեր փոքրիկներուն ՊէՏք է սորվեցնել, թէ դոյք չայրենիք ունիք, յաճճապոյած չայրենիք, առնձ ապէն Սա ՊէՏք է սորվեցնել՝ գիտեհիմ, լեշոյ, սպարճոհիմ, Սայճ ապէն Սաք առաջ եւ ապէն Սաք պեր մէկ Սա սորվեցնել՝ չայոհեիմ...

Նորոյ Աղբալեան


Հասում՝ 28 Մայիս 1928ին արսասանած հոսքէն

ԶԱՄԱԶԳԱՅԻՆԻ 80ամեակն է:

Սերունդներ փոխուեցան, վկաները դարձան յիշատակ: 25ամեակի նուիրում հատորին մէջ, Գառնիկ Գիւզալեան կը պատմէ: Զետաքրքրական պատում մը, ուր մարդիկ, անմիջական անցեալ եւ անկէ բխող դառնութիւն, Եղեռն, անկախութեան նուաճում եւ կորուստ դեռ յիշատակ չէին:

Համագգայինի ստեղծման ենթահողը կը նկարագրէ Գ. Գիւզալեան.

«Հայաստանի անկումը ծանր հարուած մըն էր ոչ միայն երկրի մէջ ապրող հայութեան, այլեւ ամէն տեղ ապաստանած, տարագրուած հայ ժողովուրդի բեկորներուն համար: ...Եւ հիմա Հայաստան չկար, անոր անկումը ընդհանուր լքում առաջացուց հայ ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ: ...ատոր հետեւանքով, արտասահմանի մէջ ցրուած հայութիւնը աստիճանաբար տեղաւորուեցաւ եւ իրեն համար փնտռեց յարմար վայր ու նոր հայրենիք»: ... Շուտով հայ ժողովուրդին հասաւ երկրորդ ծանր հարուածը: 1923 Յուլիս 24ին «մեր մեծ դաշնակիցները» թուրքերուն



հետ կնքեցին Լոզանի դաշնագիրը, որով խաչ կը քաշուէր հայկական պահանջներուն վրայ: Վաթսուն եւ հինգ տարուան դիւանագիտական պատմութիւն ունեցող հայկական հարցը կը ստանար իր տխուր վախճանը: ...Մեր հայրենիքին մէջ նորէն իշխեցին անոր երկու հին տէրերը՝ Ռուսաստանն ու Թուրքիան՝ հիմնովին կերպարանափոխուած» (էջ 6): ...«Բայց ամբողջական այս փլուզումի պահուն փոքրիկ բան մը փրկուեցաւ. Հայաստանի շատ փոքր մէկ մասը՝ ծուարած Սեւանայ լճի շուրջը» (էջ 7):

Յաջորդական ալիքներով կը կազմուին գաղութները: Նոր պայմաններուն մէջ կը ստեղծուին ընկերային շերտեր.

«Ամենուրեք հայերը կը հաստատուէին քաղաքներու մէջ, Միջերկրական ծովու ափերը: ...Ընդունակ, ճարպիկ հայը, որ երէկ կապուած էր հողին եւ ջուրին, այժմ դարձած էր առետրական...: Շուտով յարմարեցաւ նոր պայմաններուն: Ոմանք մեծ արագութեամբ տէր դարձան դրամագլուխի...» (էջ 8):

Ինչ որ ներկայիս կը նկատենք, որպէս ազգային ինքնութեան ու դիմագիծի փոփոխութիւն, սկսած էր Սփիւռքի կազմութեան առաջին օրերէն, այժմ այդ տեղատուութիւնը լայն տարածում ունի, համայնակուլ է, քանդիչ:

«Նոր պայմաններուն մէջ յեղաշրջուեցաւ նաեւ հայուն կենցաղը, բարոյականն ու մտայնութիւնը: Նախկին նահապետական վարքն ու բարքը մեռեր էր: Հայը փոխեր էր իր տեղը: Գիւղացին դարձեր էր վաճառական, արհեստաւոր, արդիւնաբերող: Արօրի եւ գութանի փոխարէն ան ձեռք առեր էր մուրճն ու մեթըրը: Փոխուէր էին նաեւ բարոյական ըմբռնումները. քաղաքի մէջ ան կը հանդիպէր հազար ու մէկ մրցորդներու, որոնց դէմ պէտք էր պայքարիլ, պէտք էր յաղթել: Կը ստեղծուէր բարոյական նոր ըմբռնում - յաջողիլ, տեղ գրաւել քաղքենիներու շարքին: Հայու հոգին քաղքենիացաւ. յաջողիլը՝ ինչ միջոցներով ալ ըլլայ՝ դարձաւ անոր նպատակը: Բնական է, որ այսպիսի միջավայրի մէջ անաղարտ չէր կրնար մնալ

գիւղացի եւ պարզունակ հայու նկարագիրը» (էջ 8-9):

Այս էր ստեղծուող ենթահողը, որուն դէմ հարկ էր թումբ կանգնել, որպէսզի ազգը տոկայ եւ տեւէ: Այս մասին է որ կը գրէ Գառնիկ Գիւզալեան.

«Ահա այս տարագիր, ցիրուցան հայութիւնն է, որ պէտք էր կազմակերպել եւ միացնել: Անոր բոլոր հատուածներուն մէջ պէտք էր կապ ստեղծել, կառուցանել մէկ հայութիւն, ոգեկան հայութիւն: ...«Այս գործին ամենէն առաջ կը նուիրուի Կիլիկիոյ կաթողիկոսարանը: Ան կը փորձէ ցրուած եւ ճղակտոր եղած հօտը ի մի հաւաքել: ... Անոր ճիգերով Սուրիոյ եւ Լիբանանի մէջ ի զօրու կը դառնայ Ազգային սահմանադրութիւնը: ... Այստեղ ու այնտեղ կը բացուին դպրոցներ, կը հրատարակուին դասագրքեր... (էջ 9):

«Հայը հայ պահելու ցանկութիւնը եւ ճիգը բաւարար չէին, եթէ համապատասխան լուծում չգտնուէր «հրամայական պահանջ»ին որ էր «հայ մտաւորականութիւն ստեղծել»: Այս մասին յատկանշական է Գառնիկ Գիւզալեանի մտածումը, որ ձեւով մը կ'ամփոփէ Համազգայինի ծննդոցի մեկնակէտը, զոր հարկ է միշտ վերաթարմացնել.

«Մտաւորականութիւնն է հանրային գաղափարներ մշակողը, ազգութիւնը մէկ մտքի շուրջ հաւաքողը եւ հոգեւոր աշխարհի ղեկավարը: Ուր մտաւորականութիւն չկայ, այնտեղ ղեկավար գաղափար չկայ եւ անոր համար մղուող պայքար չկայ... Պէտք էր ստեղծել նոր մտաւորականութիւն, որ նոր պայմաններու մէջ մէկ կողմէ մշակէր ազգային-քաղաքական նպատակներ, միւս կողմէ իր ճիգերը նուիրէր հոծ զանգուածներու պաշտպանութեան եւ հայութեան յարատեւութեան գործին: Ազգային տարրական դպրոցներէն չէ, որ պիտի ելլէին այսպիսի մարդիկ. ուստի կենսական հարց էր միջնակարգ դպրոցի հիմնադրութիւնը: Ան պիտի դառնար ոգին ցրուած հայութեան հոգեղէն հայրենիքի» (էջ 10):

ՕՏԱՐ ԳԵՂՈՒԹՅՆԵՐՈՒ ՄԷՋ, ՀՐԶԱՊԱՏԻ ԱՂԱՏԵՐՈՒ

Ե՛ք ԼՊՈՎԶԳԱՅԻՆՆԵՐՈՒ ՀԱՉԱՐ ՈՒ ՄԵՎ ԿՏԱՆԳՆԵՐՈՒՄ ԴԵՋ Ի՛ՆՉՊԵՆ ԿՐՆԱՂ ՆՈՐ ՍԵՐՈՒՄՆԻՐ ԸՂՈՐՈՐ Ե՛ ԼՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՄԴԵՂ: ՄԱՆԱԽԱՆ՝ Ի՛ՆՉՊԵՆ ՀՈԳԻՌՈՎ ՀԱՂ ՄԱՂ: ՄԱՅԻՍ 28Ը ԼՆՅԱԵՂ ԿԸ ԴԱՌՆԱՂ, ՄԻՆՉ ԼՆ ՊԵՏԵ Է ԼՊՈՎԳԱՅԻ ՏԵՆՉ ՄԸ ԸՂՈՂ: Ո՛Վ ՊԵՏԵ Է ԿԱՏԱՐԷ ԼՍ ԴԵՐԸ. ՀԱՅՐԵՆԻՐ ԶԿԱՂ... ԵՐԿՈՒ ՄԻԶՈՅ ԿԱՂ՝ ԴՊՐՈՅ Ե՛ ԳԻՐԸ, ՈՐՈՆԸ ՄԻՂՆ ԿՐՆԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԴԵՐ ԿԱՏԱՐԵՂ, ՀԱՂ ՄԱՂՈՒ ՊԱՅՔԱՐԸ ՄԴԵՂ, ՀԱՂ ՀՈԳԻՆԵՐՈՒ ԴԵՋ ԼՉԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՊԱՏՐԱՍԵՂ:

ԼԵԻՈՆ ՇԱՆԹ

**Հատուած՝ 28 Մայիս 1928ին
արտասանած խօսքէն**

Այս միտքը ինքզինք արդարացուց Սփիւռքի մէջ, ուր, հակառակ թերահաւատութիւններու եւ քաղաքական համարուած անտեղի մրցակցութիւններու, գաղթական զանգուածներուն հաւաքական գիտակցութիւն ներշնչեցին հայկական երկրորդական վարժարաններու սաները, ազգային կեանքի բոլոր կալուածներէն ներս, պայքարելով ամէն կարգի օտարումներու դէմ: Այս նպատակին հասնելու համար կար նաեւ այլ անհրաժեշտութիւն.

«...տարագիր հայուԹեան ձեռքը պէտք էր

տալ գիրք. գրի եւ դպրոցի միջոցով կենդանի պահել հայ լեզուն՝ դպրոցէն դուրս, ընտանիքներու մէջ: Բազմազան ազդեցութիւններու ենթարկուող հայ զանգուածներուն համար գիրքը պիտի դառնար միացնող, զօդող ուժ: Անհրաժէշտ էր հրատարակել մեր դասական գրականութիւնը, պետք էր կապել հայը իր անցեալին հետ, տէր դարձնել զայն իր պատմութեան, դարաւոր ժառանգութեան, հարուստ մշակոյթին..... պարտաւոր է շարունակել նախորդ սերունդներուն մեծ գործը»(էջ 10):

Այնքան այժմեական էին եւ այսօր ալ եւ այս միտքերը: Եւ այս բնական է, քանի դեռ տարագրուած սերունդներ ենք, տոյնիսկ եթէ կ'ըսենք որ մերուած ենք: Խօսքը չի վերաբերիր ձուլուածներու եւ «ծագումով հայեր»ու: Մշակութային կազմակերպութիւններու դեկավարութիւնները որքան լաւ պիտի ընէին աչքի առաջ ունենալով այս տողերը եւ զանոնք տարածելով, քանի որ այդ օրերու խնդիրները կան նաեւ այսօր, տարբեր ձեւերով:

Գառնիկ Գիւլաւեան կը վկայէ խմորում-
ներու մասին.



«Փարիզի մէջ, հայ քաղաքական դեկավարներու շրջանակին մէջ, մանաւանդ Լոզանէն վերջ, քննութեան նիւթ կը դառնայ տարագիր զանգուածները հայ պահելու խնդիրը: Համոզուած են, որ քաղաքական իրադարձութիւնները եւ եւրոպական մեծ պետութիւններու հակամարտութիւնները երկար ժամանակ նպաստաւոր պիտի չըլլան հայկական հարցի լուծման համար: Հայութեան կէտը երկար ժամանակ պիտի ապրի հայրենիքէն դուրս»:... Փարիզի մէջ, Հայաստանի Պատուիրակութեան մէջ Ա. Ահարոնեանի գլխաւորութեամբ հայ քաղաքական գործիչները կը խորհէին, որ քաղաքական ճակատի վրայ պարտուելէ ետք, պէտք է պայքարը շարունակել մշակութային ճակատի վրայ. պէտք է հիմքը դնել մեծ ընկերութեան մը, որուն նպատակը ըլլար Հայ դպրոցներ բանալը, հայ գրքի հրատարակութիւնը» (էջ 12):

Արդէն կը հասուննային եւ կը գծուէին «Համագգային»ի գործունեութեան դաշտն ու առաջադրանքները:

Գառնիկ Գիւզալեան չէր կրնար երեւակայել որ Հայաստանի Հանրապետութեան վերանկախացումէն ետք, «հայութեան կէտը», որուն կ'ակնարկէր, պիտի գերաճէր, անհետեթե իոլովոյթ մը, որուն ներկայ եւ ապագայ հետեւանքները դեռ ոչ ոք ուզեց ըստ արժանւոյն քննել:

Ինչպէս կը նշէ Գառնիկ Գիւզալեան, հայութեան պահպանման գուգահեռ կը դրուէր «...հայ մշակոյթի պահպանման եւ յաւերժացման» հարցը, մասնաւորաբար միջինարեւելեան երկիրներու համար, ուր հայկական զանգուած հաստատուած էր: Օրակարգ դարձած էր կեդրոնական եւ նախակրթութենէն անդին գացող վարժարանի հարցը, ճեմարան՝ «...թափառիկ, ցանուցիր հայութեան կեանքին մէջ խաղար այն դերը, ինչ որ Էջմիածնի Գեորգեան ճեմարանը եւ Պոլսոյ Կեդրոնականը (էջ 12-13): Շարք մը մտաւորականներ, Լեւոն Շանթ եւ Նիկոլ Աղբալեան այդ ուղղութեամբ մտածած են: Վերջին երկուքը ուսուցիչ էին Աղեքսանդրիոյ Պօղոսեան վարժարանին մէջ «եւ իրենց

խնամքին յանձնուած դպրոցը կը տանէին այդ ուղղութեամբ» (էջ 13): Սփիւռքի ներագգային պայքարները բացասական դեր ունեցած են: Համագործակցութեան անկարելիութիւնը ընդունելով, Լ. Շանթ կը ծրագրէ. «Հասած է ժամը, որ մենք խորհիւնք հիմնադրումի մը մասին վարժարանի մը որ մերը պիտի ըլլայ, մեր սեփականութիւնը ամէն բանով, ինչպէս որ մերն է «Յուսաբեր»ը, մերն է «Յառաջդիմասեր»ը, «Նաւասարդը» (էջ 14): Մտածումներու խմորման այս մթնոլորտին մէջ «Լ. Շանթ կ'առաջարկէ կազմել «ԼՈՅՍ» անունով կրթական-մշակութային ընկերութիւն: Այս ընկերութիւնը պիտի պահէ միայն մէկ վարժարան Եգիպտոսի կամ Լիբանանի մէջ: Ընկերութեան վարիչ մարմնի անդամկրնան ըլլալ թէ կուսակցականներ եւ թէ չէզոքներ, բաւական է, որ ըլլան հայ մշակոյթին եւ դպրոցին մօտիկ մարդիկ» (էջ 14):

Ծրագրին հանդէպ Նիկոլ Աղբալեան վերապահութիւն կը յայտնէ. «Լաւ միտք է, կ'ըսէ ան,- սակայն փո'ղը, դրամը գաղափար չունի, իսկ գաղափարը՝ դրամ չունի, իսկ ով գաղափար չունի՝ նա դրամ ունի: Եդ հազար ոսկին դուք ո'րտեղից պիտի առնէք, ո'վ ձեզ հազար ոսկի կը տայ»... (էջ 15):

Լ. Շանթի կը միանան, առաջին հերթին, Նիկոլ Աղբալեան եւ Վահան Նաւասարդեան, ապա Ստեփան Եսայեան, Համօ Օհանջանեան, Գասպար Իփեքեան: Եւ կը գումարուի հիմնադիր ժողովը, որուն կը մասնակցին Նաեւ Մ. Խաչատուրեան, Յ. եւ Ս. Պալըզճեան, Գ. Մխիթարեան եւ Կ. Մալխասեան (էջ 15): Խիստ ուշագրաւ է Գառնիկ Գիւզալեանի վկայութեան մէջ հետեւեալը.:

«Այս ժողովին մէջ **երկու տեսակետներ** կը բախին իրարու: Լ. Շանթ, որուն միացած էր Ն. Աղբալեան, կողմնակից էին սահմանափակ ծրագրով գործունեութեան: Անոնք կը բաւարարուէին մէկ միջնակարգ դպրոց պահելով, անոնք յոյս չունէին աւելի ընդարձակ գործունեութեան մը վրայ՝ նիւթականի պակասէն: Վ. Նաւասարդեան, ԲԺ. Համօ Օհանջանեան, Ս. (ճշդում՝ պիտի ըլլայ Կ.) Մալ-

խասեան կը պաշտպանէին աւելի ընդարձակ ծրագիր: Ընկերութիւնը իր գործունէութեան դաշտը պիտի դարձնէր ամբողջ գաղթաշխարհը:... Ժողովը ի վերջոյ կ'ընդունի երկրորդ տեսակետը եւ նոր ընկերութեան անունն ալ կը կնքուի «Հայ Կրթական եւ Հրատարակչական Համագգային Ընկերութիւն» (էջ 16 եւ 18):

Կը գոյացուի անդրանիկ հիմնադրամը՝ 825 եգիպտական ոսկի:

«Արդէն որոշ ու բանաձեւուած նպատակը ամբողջութեամբ պատրաստ էր 1928 Մայիս 28ին:... Այդ օրուան նիստն ալ կը համարուի նոր ընկերութեան հիմնադիր առաջին նիստը» (էջ 18):

Նոր եւ անոյգ Հայոցութիւն է ՊԵՏԵ, ոչ այն Հայոցութիւնը, որ աճած է, որ աճած է. օրհնեալ թլլա անոր յիշատակը: Ոչ այն Հայոցութիւնը, որ աճարձեր է Հայ Կեանքի երեւոյթներուն Հանդէպ, աճարձեր է միջ-գեղի իսկ ճակատագրական Հարողծներուն Հանդէպ:... Հրապարակուած ենք աճարձ եւ քանի որ ուրիշ, Հարկ է նոր եւ մոլեռանդ Հայոցութիւն մը ստեղծել՝ դիմագրա-բելով Հաւար այն ուրիշը, որոնք աճէն Կորսէ Կը Խոր-ժեն Հայը ոչնչացնելով Հաւար:

ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼԵԱՆ Հատուած՝ 28 Մայիս 1928ին արտասանած խօսքէն

Եւ կը սկսի կազմակերպական աշխատանքը. օրինական ճանաչում, մասնաճիւղերու ստեղծում: «...կը կազմուի նաեւ Համագգայինի վարչութիւնը. նախագահ կ'ընտրուի բժ. Համօ Օհանջանեան, գանձապահ՝ Ստ. Եսայեան, իսկ նոր վարչութեան երեք անդամները կ'ընտրուին Ն. Աղբալեան, Գ. Իփեքեան եւ Լեւոն Շանթ» (էջ 18):

Գառնիկ Գիւզալեան, ամփոփելով Լեւոն Շանթի մտածումը եւ այդ օրերու մտայնութիւնը - որ, ի դէպ, մեր օրերուն ահագնութեամբ շեշտուած է -, կը գրէ. «Կան մարդիկ, նոյնիսկ հոսանքներ, որոնց համար ոչ հայ դպրոցը, ոչ ալ հայ գրականութիւնը անհրաժեշտ են. աւելին՝ անոնք կը ժխտեն նաեւ հայ անկախութիւն ունենալու ձգտումը եւ

կը քարոզեն յարմարիլ տեղական պայմաններուն» (էջ 20):

Ծնունդ կ'առնէ Հայ Ճեմարանը: Կը շարունակուի երթը եւ կը ծնին Ճեմարաններ տարբեր ցամաքամասերու վրայ: Ազգի կենսունակութեան համար պետք է ամբօրէն հաւատալ որ այդ երթը կը շարունակուի, որպէսզի վառ մնայ ազգային ինքնութեան կերտման կողքին «յափշտակուած հայրենիք»ի սուր գիտակցութիւնը եւ անոր ազատագրութեան վառ երազը:

Ուրիշ տասնամեակ առաջ կը սկսէր դպրոցաշինութեան, մշակութային եւ հրատարակչական արշաւը, որ անխափան կերպով կը շարունակուի հակառակ դժուարութիւններու եւ սերունդներու փոփոխութեան:

Իր ծննդոցի դրդապատճառները նոյնքան ներկայ են մեր օրերուն եւ Համագգայինի ընտանիքը նոյն պատմական պատասխանատուութիւնը ունի, ինչ որ ունեցան Հիմնադիրները, առանց տեղի տալու անմիջականի եւ երեւութականի պարտադրանքներուն, ամբոխային տրամաբանութեան եւ տեւաբար պատշաճելով տեղի տալու ապագայ-նացնող ընթացքին առջեւ:

Անհրաժեշտ է յաճախել Հիմնադիրներու հեռանկարներու դպրոցը, եւ ապա մասնաճիւղեր, թատրոն, տպարան, հրատարակչութիւն, երգչախումբ, պարախումբ, գիրք, գրական թերթ եւ այլ կենսունակութեան դրսեւորումներ, անսեթեւեթ կերպով կը շարունակեն հիւսել ցանցը դէպի ազգը եւ անոր յաւերժութիւնը ուղղուած Համագգայինի անանձնական Մեծ Երազներուն:

ԲԱԳԻՆ

Դեկտեմբեր 2008

* ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԵՒ ՆՇԱՆ ՓԱԼԱՆՃԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԸՍԱՆԴԻՆԳԱՄԵԱԿ 1929-1954

Տպարան Համագգային Ընկերութեան, Պէյրութ, 1954

ԵՐԱԽՏԻՔԻ ԶԳԱՅՈՒՄՈՎ



Պատմութիւնը հարուստ է հրաշալի ծնունդներով: Լեւոն Շանթ եւ Նիկոլ Աղբալեան ժողովուրդի թաքուն ուժէն մեզի հասած հերոսներ եղան: Նախախնամութիւնը զարմանալի իրականութիւններ կը ծնի: Ո՞վ կրնար երեւակայել, որ երկու հայ պատանիներ, մէկը Պոլիսէն, միւսը Թիֆլիսէն, պիտի հանդիպէին իրարու Ս. Էջմիածնի Գեորգեան ճեմարանը, եւ ամբողջ կեանք մը միասին թիավարէին հայոց ալեկոծ ծովուն վրայ:

Լ. Շանթ ծնած է 1869ին Պոլիս, Սեդրոս Նահաշպետեանի բարեկեցիկ ընտանիքին մէջ: Շատ կանուխ կորսնցուցած էր հայրը, տակաւին մանուկ, մահացած էր մայրը: Զինք խնամած էին հօրաքոյրները: Այդ օրերուն, թաղի հայոց եկեղեցին հրդեհի մը պատճառով մոխրացած էր, նաեւ անոր մօտ գտնուող Լ. Շանթի բնակարանը: Իրենք հազիւ ազատած էին, նոյնիսկ իրենց ինքնութեան թուրքերը այրած էին: Մանուկ Լ. Շանթ մոռցած էր իր մականունը եւ հօրը անունով կոչուած էր Սեդրոսեան:

Վրաստանի Թիֆլիս քաղաքի Զաւլաբար թաղին մէջ 1873ին կը ծնէր Նիկոլ Աղբալեան: Զայրը փռապան, մայրը ուսումնասէր ազնիւ կին մը, որ ուսման սերը արթնցուցած էր զաւակին մէջ:

Պոլսոյ Սկիւտարի ճեմարանը աւարտելէ ետք Լ. Շանթ 1883ին իր ուսուցիչին՝ Այվազեանի առաջնորդութեամբ, երեսուն աշակերտներու հետ կու գայ Ս. Էջմիածին Միւռնոսօրհնէքի ներկայ ըլլալու եւ Գեորգեան ճեմարանի աշակերտ

դառնալու: Միայն ութը հոգի կը յաջողին քննութեան, որոնց շարքին՝ Լ. Շանթ, Կոմիտաս, Վռամեան...

Լ. Շանթ եօթ տարի կ'ուսանի եւ կ'աւարտէ Գէորգեան ճեմարանը: Տիպար աշակերտ, գիտական եւ գրական հետաքրքրութիւններով, կ'իրացնէ լեզուները եւ աւանդուած նիւթերը:

Ն. Աղբալեան Թիֆլիսի Ներսէսեան ճեմարանի ընթացքը չաւարտած կը մեկնի Ս. Էջմիածին՝ Գէորգեան ճեմարան, ուսումը շարունակելու: Երկու տարի կը մնայ: Բայց դպրոցէն ներս տիրող ոգիէն դժգոհ, ինք եւ խումբ մը դասընկերներ նամակով մը իրենց դպրոցէն հեռանալու պատճառները եւ որոշումը կը յայտնեն նորընտիր կաթողիկոս՝ Խրիմեան Յայրիկին եւ կը խնդրեն, որ Յայրիկը օրինէ զիրենք եւ արձակէ: Աղբալեան ունեցած գումարը կը բաժնէ ընկերներուն, որ իրենց կարիքները հոգան, ինքն ալ կը սկսի շրջիլ Արեւելեան Յայաստանի գիւղերն ու քաղաքները՝ շուրջ վաթսուն չորս գիւղ ու քաղաք: Երկու ամիսէն կը հասնի Թիֆլիս, Յայոց Աշխարհի շրջաններուն լաւապէս ծանօթանալէ ետք: Ներսէսեան եւ Գէորգեան ճեմարաններուն մէջ ան եղած է լուրջ, ընթերցասէր, լայն հետաքրքրութիւններ ունեցող աշակերտ, վերլուծող եւ համադրող միտք:

Այս երկու եզակի պատանիներուն առաջին հանդիպումը տեղի ունեցած էր Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանին մէջ: Երկուքն ալ տաղանդաւոր, բազմաշնորհ, լայն հորիզոն ունեցող եւ մանաւանդ հայրենասէր էին: Հազիւ Գէորգեան ճեմարանը աւարտած, Լ. Շանթ կը հրաւիրուի Պոլիս, Ռոտոսթոյի Ազգային վարժարանը, իբրեւ ուսուցիչ պաշտօնավարելու: Երկու տարի ուսուցչութիւն ընելէ ետք, ուսման ծարաւը զինք կը տանի Գերմանիա, Լայփցիկի, Ենայի, Միւնիխի համալսարանները, կ'ուսանի մարդակազմութիւն, մանկավարժութիւն, հոգեբանութիւն, գրականութիւն եւ գեղարուեստի պատմութիւն: Այդ շրջանին կը ծանօթանայ գերմանական մշակոյթին, միտքն ու հոգին կը բացուին դարը յուզող ընկերային եւ իմացական շարժումներուն: 1882ին կը սկսի ստեղծագործական աշխատանքը. **Լեռան աղջիկը, Երազ օրեր, Դարձը...** Համալսարանը աւարտելէ ետք կ'անցնի Փարիզ, հաշուապահի դասընթացքներու կը հետեւի եւ կը դառնայ դրամատան պաշտօնեայ: Խոստացուած փայլուն ապագայ մը կը մերժէ եւ կ'անցնի Զուիցերիա, ապա Կովկաս: Վերջնական կերպով կ'ընտրէ ուսուցչական եւ գրական ասպարէզները:

Նիկոլ Աղբալեան կ'անցնի Ռուսիա, Փեթերսպուրկի համալսարանին մէջ կ'ուզէ հետեւիլ Փրոֆ. Նիկողայոս Մառի լեզուագիտական դասընթացքներուն, սակայն նիւթական պատճառները արգելք կ'ըլլան: Մոսկուայի մէջ կը հետեւի համալսարանական դասընթացքներու, եւ կը ծանօթանայ ռուսական գրականութեան առաջնակարգ դէմքերուն եւ Ռուսիան յուզող գրական, ընկերային եւ հասարակական խնդիրներուն: Ապա, կ'անցնի Ֆրանսա, կը հետեւի Սորպոնի մէջ Պերկսոնի իմաստասիրական դասախօսութիւններուն: Կ'այցելէ Զուիցերիա, Պալքաններ, Եգիպտոս: Վերջապէս կը վերադառնայ Կովկաս, իբրեւ կուսակցական գործիչ, Կարսի շրջանը:

Երկրորդ հանդիպումը՝ Յ. Թումանեանի «Վերնատան» մէջ. Դ. Աղայեանի, Ա. Իսահակեանի, Դ. Դեմիրճեանի հետ, Լ. Շանթ եւ Ն. Աղբալեան կը կազմեն գրական միջավայր, ուր տեղի կ'ունենան ազգային հարցերու քննարկում, երիտասարդ խոստմնալից գրողներու յայտնաբերում: Ա. Իսահակեան, Վ. Տէրեան, Ս. Զօրեան, Ն. Աղբալեանի գրական հոտառութեան պտուղներէն են: Սայեաթ Նո-

վայի արժանի գնահատանքը եւ ծանօթացումը, մանաւանդ Սփիւռքի մէջ, կը պարտինք Ն. Աղբալեանի: «Վերնատուն»էն կը սկսի նաեւ Յ. Թումանեանի, Դ. Աղայեանի, Լ. Շանթի մանկական գրականութեան ծաղկումը:

1914, Ա. Յամաշխարհային պատերազմ: Հայոց արեւելահայ հատուածը իր բախտը կը կապէ Ռուսիոյ, կը կազմուին Հայոց Ազգային Խորհուրդ եւ հայ կամաւորական զունդերու կազմակերպիչ մարմին: Ն. Աղբալեան երկու մարմիններուն մէջ գործօն դեր կը ստանձնէ: Կռուող զօրքին հետ կը մտնէ Վան, Պիթլիս, մօտէն կը հետեւի ճակատի գործողութիւններուն, միաժամանակ կիսափուլ վանքերու, տուներու մէջէն կը փրկէ ձեռագիրներ եւ թանկարժէք հրատարակութիւններ...

Երրորդ հանդիպում. հինգ տարի տեւող գերմարդկային ճիգեր պահանջող պատերազմէ մը ետք կը ստեղծուի Հայաստանի Անկախ Հանրապետութիւնը, 28 Մայիս 1918ին: Հայութիւնը կ'ունենայ հանրապետական վարչակարգ, խորհրդարան: Խորհրդարանական ընտրութեան Լ. Շանթ կը դառնայ Խորհրդարանի անդամ, ապա՝ նախագահ: Խորհրդարանի անդամ կ'ընտրուի նաեւ Ն. Աղբալեան եւ մինչեւ Հանրապետութեան վախճանը կը մնայ Խորհրդարանի ամենէն պայծառ դէմքերէն մէկը: 1919ին Հայաստանի հանրային լուսաւորութեան նախարարի պաշտօնը կը տանի մեծ հմտութեամբ: Հայաստանի Առաջին Համալսարանի կրթական ծրագիրը կը մշակէ: Կը յայտնաբերէ Եղիշէ Զարենցը, որ Կարսի մէջ համեստ ուսուցիչ մըն էր. կը հրաւիրէ Երեւան եւ իր նախարարական սենեակին մէջ տեղ ու թոշակ կը յատկացնէ, թելադրելով՝ գրել:

Զորրորդ հանդիպում. 1920ին Հայաստանի մէջ կը հաստատուի Խորհրդային իրաւակարգ. համաձայնութիւն կար, որ կառավարութեան անդամները հաւաքածանքի պիտի չենթարկուէին: Խոստումը չի յարգուիր: Լ. Շանթ եւ Ն. Աղբալեան բանտ կը նետուին:

Մահուան կացինը հասած էր անոնց կեանքի թելը կտրելու: Բարեբախտաբար Փետրուարեան Ապստամբութիւնը բանտէն ազատեց զիրենք եւ շատերու հետ անոնք բռնեցին գաղթի ճամբան:

Հինգերորդ հանդիպում. Լ. Շանթ եւ Ն. Աղբալեան օտար երկնքի տակ, կը հաստատուին Եգիպտոս, Գահիրէ, Աղեքսանդրիա, ուսուցիչ, տեսուչ, ազգային գործիչ ըլլալու:

Պէտք էր պահել հայոց լեզուն, մշակոյթը:

28 Մայիս 1928ին, հիմնադիր անդամներէն եղան «Համազգային մշակութային եւ հրատարակչական ընկերակցութեան», իրենց նման հայ լեզուի եւ մշակոյթի գոյատեւման հաւատացող անձնաւորութիւններու հետ, անոնց նիւթական ու բարոյական օգնութեամբ. Հ. Օհանջանեան, Գ. Էփէկեան, Վ. Նաւասարդեան...

3 Մարտ 1930ին, հիմնադիրներու ճիգերով եւ զոհողութեամբ, ծնունդ առաւ Համազգայինի Հայ Գեմարանը, Պէյրութ:

Հայ Գեմարանի գործակից տնօրէններ նշանակուեցան Լ. Շանթ եւ Ն. Աղբալեան: Անոնք հայ ժողովուրդի ցիր ու ցան բեկորները հաւաքեցին, ստեղծեցին հայեցի մթնոլորտ, հոգացին անոնց ֆիզիքական, մտաւոր եւ հոգեկան պէտքերը: Հայ Գեմարանը պահելու համար ոչինչ խնայեցին, ամէն տեսակի դժուարութիւններ յաղթահարեցին: Քաջութեամբ դիմաւորեցին Բ. Յամաշխարհային պատերազմի ծանր օրերը:

Վերջապէս, հին ու կիսափուլ շէնքի մը մէջ հիմնուած դպրոցը ունեցաւ սե-

փական հոյակապ շենք, շնորհիլ անոնց յամառ ու հետեւողական ճիգերուն:

Պէյրուքի Զամազգային Զայ ճեմարանի յարկին տակ Լ. Շանթ եւ Ն. Աղբալեան իրենց կեանքի վերջին տարիները անցուցին զիրար ամբողջացնելով՝ անխոնջ աշխատանքով, հայ լեզուն, մշակոյթը եւ հայրենիքը ծանօթացուցին Սփիւռքի մէջ հասակ նետող սերունդներուն:

Բախտաւոր եղան անոնք, որոնք անոնց անմիջական ներկայութիւնը վայելեցին, հետեւեցան մեծ ուսուցիչներու օրինակին՝ դարձան ուսուցիչ ճեմարանի կամ Ազգային վարժարաններու եւ կամ գործեցին Ազգային կառոյցներու մէջ եւ հայ մշակոյթի ջահը փոխանցեցին նորերուն:

Զայ ճեմարանի առաջին շրջանաւարտներէն բանաստեղծ Մ. Իշխան կը գրէ. «Աղբալեան իր անձին մէջ կը խտացներ այն բոլորը, ինչ որ կը պահանջուի ՄԵԾ ԶԱՅԷ մը», իսկ Շանթի մասին՝ «ՄԱՐԴԸ, որ այնքան ինքնատիպ էր ու ազնուական, յաճախ կը կրկնէր՝ «Աշխատեցէք Մարդ ըլլալ, մարդը տիեզերքի բարձրագոյն արժէքն է»:

Լիբանանի մէջ անոնք ապրուստի համեստ միջոցներով անցուցին իրենց օրերը, միշտ ճեմարանը իրենց ուրախութեան եւ մտահոգութեան առարկան դարձնելով: Տեսուչ, տնօրէն, դասախօս, ուսուցիչ ճեմարանի համար, իսկ գրագէտ, թատերագիր, բանասէր, քննադատ հայ մշակոյթին եւ ժողովուրդին համար:

Ն. Աղբալեան ապրեցաւ առանձին, դպրոցին մօտ վարձու սենեակի մը մէջ, ճաշելով գիշերօթիկներուն հետ: Քիչով գոհացաւ, եւ այդ քիչէն խնայելով Շթորայի հայկական գիւղին մէջ սեփական շենք շինեց, ապագային ուրիշէ կախեալ չըլլալու մտահոգութեամբ: Օրերը դժուար էին իրեն համար: Ընտանիքը մնացած էր Զայաստան, կը լսէր կնոջ եւ զաւակներու տաժանելի կեանքին մասին: Դաւաճանի ընտանիք եւ զաւակներ կը կոչուէին անոնք: Կը տառապէր առանձին, սակայն կ'ապրէր իր «տերվիշ»ի կեանքը ընթերցանութեամբ, ուրախ մթնոլորտ ստեղծելով մտերիմներու շրջանակին մէջ եւ հրաշալի դասախօսութիւններ մատուցելով իր ժողովուրդին:

Լ. Շանթ համեմատաբար աւելի բախտաւոր էր, ընտանիքին խնամքն ու յարգանքը կը վայելէր. աւելի կազմակերպուած, յստակ ժամանակացոյցով հետեւողական աշխատանք կը տանէր: Ոչ ոք կրնար խանգարել իր աշխատանքի յատկացուցած ժամերը, առանց աշխատանքի կեանքը անհիմաստ կը գտներ:

Ն. Աղբալեան կը հաւատար, որ «Զամազգայինի վերապահուած է մեծ դեր. ստեղծել աշխարհիկ հայութիւն, որ կառչած մնայ իր ազգութեան, յենարանը դառնայ հայ դպրոցին եւ հաւատք ունենայ Զայ Դատի յաղթանակին»:

Իսկ Լ. Շանթ կը գրէր. «Զայութիւնը այժմ պէտք ունի նոր եւ թարմ մտաւորականներու, որոնք ուսուցիչ դառնան, գրագէտ ըլլան եթէ ընդունակ են, գաղափարական մտաւորականի պարտաւորութիւնը ստանձնեն եւ լեցնեն այն անհուն պարապը, որ Ապրիլեան եղեռնով բացուեցաւ»:

Զայ ճեմարանի բացման զուգահեռ Ն. Աղբալեան եւ Գասպար Իփէկեան հիմը դրին Զամազգայինի տպարանին: Զոն կը տպուէին Լ. Շանթի Զայ լեզուի դասագիրքերու շարքերը, երկերը, մանկավարժութեան եւ հոգեբանութեան հատորները, Ն. Աղբալեանի Բանասէրի Յուշագիրը, Զայ Գրականութեան Պատմութիւնը (ներածութիւն), որ կիսատ մնաց անակնկալ մահուան պատճառով:

Այսօր, «Վահէ Սէթեան» տպարանը արդիական հրատարակչատուն է իր շքեղ գրախանութով:

Նոյն թուականին Գ. Իփէկեան հիմը կը դնէր «Գասպար Իփէկեան թատերախումբին»: Կը բեմադրուէին Լ. Շանթի թատերգութիւնները՝ Օշին Պայլ, Շղթայուածը, Արա եւ Շամիրամ, հայ ժողովուրդի գեղարուեստական ճաշակը մշակելու մտահոգութեամբ:

12 Օգոստոս 1947ին Ն. Աղբալեան յանկարծամահ եղած, կը գտնուէր իր տան մէջ: Նոյն օրը՝ Օգոստոսի տաք օր մը Պէյրութ իջած էր Զայ Ճեմարանի նոր շէնքի գնման գործերով:

29 Նոյեմբեր 1951ին, (Ճեմարանի նոր շէնքի բացումէն ետք) կը մահանար Լ. Շանթ, հիւանդութեան դէմ պայքարելով, մինչեւ վերջին վայրկեանը գրելով եւ թելադրելով իր վերջին հատորը:

Երկու Մեծ Զայեր, երկու գլխագիր մարդեր կորսնցուց հայ ժողովուրդը: Անոնք, իրենց առաքելութիւնը լրիւ կատարած կը վերադառնային հողին, հեռու հայրենիքէն:

Անոնց յուղարկաւորութիւնը եղաւ համաժողովրդական սուգի արտայայտութիւն: Զայ Ճեմարանէն, Ս. Նշան մայր եկեղեցիէն մինչեւ Ֆըրմ Շըպէի ագգային գերեզմանատունը, ժողովուրդը՝ մեծով-պզտիկով քալեց երկիւղած ու սգաւոր իր Մեծ Զաւակներուն վերջին յարգանքը տալով...

Այսօր, հազարաւոր ճեմարանականներ, ցրուած աշխարհի չորս ծագերուն եւ հայրենիքի մէջ, Ն. Աղբալեանի եւ Լ. Շանթի հաւատացած արժէքներուն հետեւողներ, իրենց յանձնուած Զայ Մշակոյթի ջահը կը շարունակեն վառ պահել եւ փոխանցել նոր սերունդներուն: Անոնցմէ մէկն ալ ես եղայ, անոնք կեանքիս ուղին ճշդող եւ լուսաւորող փարոսներ եղան:

Զամազգայինի 80ամեակի առիթով հաւատքի, հաւատարմութեան երախտիքի տուրքս են այս տողերը. «Սերունդներու ինքնութեան ծնող եղաք, վսեմութեամբ»:

Աւելի քան կէս դար ետք Ն. Աղբալեան եւ Լ. Շանթ քով-քովի են կրկին, դամբարանի քար լռութեան մէջ...

Ինչո՞ւ անոնք յուշ են միայն, սփիւռքը եւ հայրենիքը իրենց մեծ զաւակներուն արժանի տեղը եւ յարգանքը ինչո՞ւ կը զլանան: Ինչո՞ւ անոնց աճիւնները այցելողներ չունին եւ կը մնան իրենց պաշտած հայրենի հողէն հեռու...

Ա. Անկախութեան հիմնադիրները կը սպասեն Բ. Անկախ Զանրապետութեան կոչը:

Ճեմարտութիւն է, որ ներկան անցեալը ապագային կապող կամուրջն է: Զայրենի Պետութեան հիմնական դերը պէտք է ըլլայ Սարդարապատի յաղթանակը, Զայաստանի Ա. Անկախ Զանրապետութեան պատմութիւնը, ֆետայիներու հերոսական պայքարը, Լ. Շանթի, Ն. Աղբալեանի իրականացումները ծանօթացնել նոր սերունդին, որոնք սոսկ դէպքեր չեղան, այլ անդուլ եւ հետեւողական ճիգ, անձնուրաց յարատեւ պայքար... թէ՛ հայրենիքի, թէ՛ սփիւռքի համար: Զայ երիտասարդը պէտք է անցեալէն հասնող պատգամը իմանայ, որպէսզի գիտակցութեամբ եւ յանձնառութեամբ անցեալը կամրջէ ապագային: Այն ատեն միայն կարելի կ'ըլլայ ըսել. «Մէկ ազգ, մէկ մշակոյթ»:

ԱՆԿԱՊ ՅՈՒՇԵՐ

(Համազգայինի հիմնադրման 80ամեակի առիթով)



«Ճառագայթը չի թաղուիր», ըստած է:

Այդպես է միշտ զարմացնող թարմութեամբ Համազգայինը, որ իրեն ծնունդ տուած ժողովուրդին պէս աշխարհագրական սահմաններ չունի:

Յուշեր քրքրել, երազել, ետ նայիլ, ծերութեան նշան է, կ'ըսեն անմիտները, անտեսելով որ «դէպի աղբիւրը» լոյսին վերադարձը, վերանորոգման, ներկան ու ապագան դիմագրաւելու նոր ուժականութեան նուաճման լաւագոյն գրաւականն է:

28 Մայիս 1928-ին, Օհանջանեան, Շանթ, Աղբալեան, Իփէկեան, Եսայեան իրենց անմիջական ընկերներով կը հիմնէին «Համազգային»ը, դրամագլուխ ունենալով իրենց անյողդողդ հաւատքը միայն: Խորհրդանիշ թուականի ընտրութիւնը պատահական չէր ի հարկէ: Երկու տարի ետք, 1930-ին, Պէյրութի մէջ կը հիմնուէր Հայ Գեմարանը, որ կը շարունակէ իր հայակերտման ազնուական առաքելութիւնը, դժուարագոյն պայմաններու մէջ: Այսօր, տասնամեակներու ընթացքին ձեռք բերուած արդիւնքն է գօտեպնդող ուժը: Արդարեւ, այդ տասնամեակները հայ կեանքին մէջ եղան կենսունակութեան ներդրում, որ կը շարունակուի, հիմնադիրներու ոգիով:

Եւ ահա 2008-ին, երբ միջինարեւելեան ապակայունացումը կը շարունակուի իր բոլոր բացասականութիւններով եւ կ'անդրադառնայ նաեւ Լիբանանի ուժական հայ համայնքին, որ Թիֆլիսէն, Պոլիսէն, Եգիպտոսէն, Հալէպէն ետք, հայ մշակոյթի եւ ինքնութեան ճառագայթող կեդրոնը դարձած էր, հայութիւնը

կը ջանայ կանգուն պահել իր բոլոր աշխարհական, քաղաքական, եկեղեցական ու միութենական կառույցները, զոհողութիւններով, (որոնց կարգին՝ 80-ամեայ Համազգայինը), կը վերյիշեմ ապրումներ, դէմքեր, դէպքեր, որոնք քանի մը սերունդ ներշնչեցին եւ ազգ պահեցին:

Համազգայինի անդամները, ճեմարանի շրջանաւարտներս եւ համակիրներու մեծ գերդաստանը, ցմահ դրոշմուած ենք անոր ստեղծած մշակութային քերմիկ ու տոհմիկ մթնոլորտով, անկորնչելի կնիքը կը կրենք, անոնց վերյիշումն իսկ ցնցիչ, բայց միաժամանակ հաճելի սարսուռով կը լեցնէ էութիւնս, եւ կ'ենթադրեմ՝ սերունդներու:

Շուրջ կէս դար անցուցած եմ Համազգայինի իրագործումներէն կարելորագոյնի՝ Նշան Փալանճեան ճեմարանի շրջանակին մէջ: Մեր բնակարանը ուղիղ գծով շուրջ յիսուն մէթր միայն հեռու էր անկէ:

Եւ ահա, «թռչելով մտքով տուն», սրտի կծկումով «յիշատակներս յուշիկ-յուշիկ կ'արթննան»:

Ստովին կ'անցնիմ դարպասէն ներս, բակը, ուր սաղարթախիտ կաղնիներու եւ արմաւենիներու շուքին տիտաններու կիսանդրիները կան: Առաջինը՝ Սիմոն Վրացեանի, խոժոռ ու խոհուն դիմագիծով: Կը յառաջանամ եւ ահա Շանթն է, ապա՝ Աղբալեանը, Կանաչեանը, Գրիգոր Զոհրապը, Դանիէլ Վարուժանը, Ռուբէն Զարդարեանը, Սիամանթօն...: Քարեղէն բայց ոչ քարացած յուշարարներ...

Համազգայինի ժողովէ մը ետք, Լիբանանի քաղաքացիական կռիւներուն պատճառաւ մութի մէջ պահուած բակին մէջ, տղաք ալ կան, գիշերօթիկ ուսանողներ, ոսկի տղաք, որոնք ցերեկները Համազգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի դասընթացքներուն կը հետեւէին, ուր ես ստանձնած էի Հայ Հին Իրաւունքի միութի դասաւանդութիւնները:

Լիբանանի կռիւներու ընթացքին իսկ, այս հիմնարկը բաց պահեց իր դռները: Ու երբ, հանապազօրեայ պարզ երթելէկը՝ արկածախնդրութիւն, կենացմահու հարց էին, արհամարհելով ամէն վտանգ, արեւելեան շրջաններէն, Պուրճ Համուտէն, ուսանողները կու գային ճեմարան, հետեւելու դասընթացքներուն: Այնքա՛ն վառ էր հայ մշակոյթի հանդէպ իրենց սէրը (անոնց հետ էր Անթիլիասի դարեվանքէն կրօնական դասախօս մը, զոր կ'ուղարկէր երջանկայիշատակ Գարեգին Բ Կաթողիկոս, Ինք ալ ճեմարանի Հայ Եկեղեցական Պատմութեան երթեմնի դասախօս):

Համազգայինի ճեմարանի հիմնադիրներու անմիջական եւ արժանաւոր յաջորդներուն ալ կարելի էր հանդիպիլ այնտեղ: Ահա, Երագի պէս անցնող բանաստեղծ Մուշեղ Իշխանը, ալեհեր Գառնիկ Բանեանը, որոնց համար Համազգայինը էութիւն էր, ընդելուզուած էին անոր, իրենց պատանութեան օրերէն:

Իրարայաջորդ նորահաս սերունդներուն մօտ հայ մշակոյթի, եւ մասնաւորաբար Արեւմտահայ Մշակոյթի պահպանման եւ զարգացման մէջ Համազգայինի ունեցած անզուգական դերին մասին խօսիլ այս թռուցիկ յուշերու նիւթէն դուրս է. այդ մասին մանրամասն անհամար ուսումնասիրութիւններ, գրութիւններ կան: Թերեւս օր մը կը գտնուի համապարփակ ուսումնասիրութիւն կատարող մը: Եթէ ոչ հիմա, գէթ... հարիւրամեակի առիթով:

Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամի հանգամանքովս, ճեմարանի առաջին շէնքի տնօրէնութեան սենեակին մէջ, առաջին ժողովին զգացած ցնցումս տակաւին կը յիշեմ: Ատենապետն էր Ս. Վրացեան, քարտուղարը՝

Սարգիս Զէյթեան: Երբ զեկուցումներ սկսան տրուիլ, օրինակ գիշերօթիկ աշակերտի մը քանի մեթր խորանարդ շնչելի օդ ունենալու, առողջապահական այլ վայրերու եւ խոհանոցի մաքրութեան, աշակերտները փոխադրող ինքնաշարժներու մասին, կարծեցի սխալ տեղ եկած ըլլալ: Ապշած, երբ Զէյթեանին նայեցայ, քիթին տակէն ժպտեցաւ ու գլուխը կախեց ատենագրութեան տետրին վրայ:

Ազգային վարժարաններու հոգաբարձութեանց, կամ թաղական խորհուրդներու ժողովներուն մասնակցած էի, երբ իրաւական մասնագիտական հարցեր օրակարգի վրայ ըլլային: Կը կարծէի ուրիշ բան գտնել Համազգայինի Կեդրոնական Վարչութեան ժողովին:

Ս. Վրացեան խոշորացոյց ակնոցներով զեկոյցները համբերութեամբ լսելէ ետք, իւրաքանչիւր հարցի բարօք կարգադրութեան համար պատուիրեց երկու հոգինոց յանձնախումբեր կազմել՝ Զէյթեանի հսկողութեամբ:

Անդրադարձայ որ ճապաղած ու լճացած էր Համազգայինի Կեդր. Վարչութեան գործունեութիւնը, հակառակ այն իրականութեան, որ վաթսունական թուականներուն, Լիբանանի հայութիւնը իր «ոսկեդարը» կ'ապրէր: «Հիներուն», մեր հայրերուն տարած աշխատանքը նոր սերունդներուն վրայ արդիւնաւորուած էր եւ ազգային բոլոր հաստատութիւնները, քաղաքական, եկեղեցական, տնտեսական, ուսումնական, եւայլն, բոլոր մարզերու մէջ, բարգաւաճ շրջանի մէջ էին:

Ս. Վրացեան կ'ուզէր այս յառաջխաղացքին մասնակից դարձնել Համազգայինը եւս, տեղքայլէ դուրս գալ ու նոր դիմագիծ տալ անոր: Չէինք ուզեր մանրութներու մէջ մխրճուիլ ու փոքրանալ, բայց յստակ փաստեր ցոյց կու տային, որ այդ կացութեան պատճառը, Համազգայինի քանի մը «բանգէտներու» ձեռք ձգուած ըլլալն էր, զորս չէզոքացնելու խիզախութիւնը ունեցաւ Վրացեան, առողջ ուղեգիծի վրայ դնելով Համազգայինը: Անցողակի ըսենք, որ նմանապէս կուսակցական կեանքը եւս վիրաւոր էր, աթոռասիրութիւն մը ծնունդ առած էր, այդ պատճառով ալ արժանաւորներ մէկդի կը դրուէին: Օրուան կուսակցական «մանր իշխանաւորները» (որոնցմէ ոմանք տակաւին կը շնչեն) կ'ակնածէին, կը քաշուէին իրմէ: Հայաստանի անդրանիկ Հանրապետութեան վերջին վարչապետին, հին դաշնակցականի պատմութեանը հազած անձիններկայութեան չէին կրնար ազատօրէն շարունակել պարել, խաղալ. անոր շուքը շատ ծանր կու գար իրենց վրայ:

Ժողովի վերջաւորութեան սակայն, կացութիւնը բարեփոխուեցաւ եւ յուսազինուեցայ, երբ Վրացեան ժողովը տարբեր մակարդակի վրայ բարձրացնելով, հատիկ-հատիկ բառերը շեշտելով խօսիլ սկսաւ.

- Ես Համազգայինի եւ ճեմարանի ապագային մասին կ'ուզեմ արտայայտուիլ...

Ու պարզեց իր գաղափարները. զարգացնել Համազգայինի խորհրդածոյովներու կազմակերպումը, մասնակցութեամբ ոչ միայն Լիբանանի, այլեւ արտերկրի Համազգայինի Շրջանային եւ մասնաճիւղերու վարչութիւններուն, ճշդելով մօտաւոր թուական, տալով յանձնախումբի մը անդամներու անուններ, Եւրոպայի ոստանները ուսանողներ ուղարկել, յիշելով երկիրները, անձերը, այն ճիւղերը, որոնց պէտք էր հետեւէին: Խօսեցաւ ճեմարանը քաղաքէն դուրս փոխադրելու անհրաժեշտութեան մասին, յիշելով որոշ շրջաններ, հողամասի տարածութիւններ, պիտոճէն ապահովելու աղբիւրներ, յանձնախումբ-

քի մասնագետ անձեր, եւայլն:

Ժողովը ընթացիկ հոգաբարձական հանդիպում ըլլալէ դադրած էր...

Վրացեան Համազգայինի համար հեռանկար ունեցող մարդ էր: Կ'ուզէր անոր իրապէս համահայկական բնոյթ տալ, հարցերուն կազմակերպչական, գործնական եւ վերահսկողական մօտեցումով եւ ոչ թէ օդի մէջ նետուած լոկ գաղափարներով, փափաքներով:

Հակառակ իր յառաջացեալ տարիքին, անցեալի փորձառութեամբ բեղմնաւոր, առանց կտրուելու ներկայէն, բոլոր մարզերու մէջ լուսարձակները վառ բացած ապագայի հեռանկար եւ տեսիլք ունեցող մարդ էր Վրացեան, թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ Հայաստանի նկատմամբ:

Մօտէն կը ճանչնայի զինք, ամուսնութեանս եւ զաւակներուս կնքահայրը ըլլալով, մեր ընտանիքին մէկ անդամը կը համարուէր: Մտերմութիւն մը՝ ուրկէ կը քաղէի իր կեանքի հասունութեան դասերը:

Ընթրիքէ ետք, մեր պնդումներուն ընդառաջելով, երբեմն, թէեւ որոշ վերապահութիւններով, սակայն իր հրատարակութիւններուն մէջ չիշուած Հայաստանի Հանրապետութեան կազմաւորման նախորդող անցուդարձերու մասին կը պատմէր: Դէպքեր, որոնց մասին չի գրուիր, եւ որոնք կ'անհետանան տեղեակ եղողներուն հետ: Ու մենք խորհրդաւոր պահեր ապրողի հոգեվիճակով եւ ակնածանքով, բերնէն կախուած, կ'ունկնդրէինք, քնանալէ ետք եւս ուրիշ աշխարհի փոխադրուելով:

Իր հոգւոյն խորքը, մտքի պաստառին վրայ, առկայ էին Հայաստանի անցեալը եւ անոր ապագայի տեսիլքը, առանց կտրուելու տեղական, սփիւռքեան եւ անմիջական շրջապատէն:

Նոյն տպաւորութիւնը կարելի էր ունենալ Դրոյի ալ արտայայտութիւններէն (որոն փաստաբանը եղած եմ որոշ դատերու մէջ):

Ատենին ինծի անիմանալի, անըմբռնելի կամ պղտոր թուացող եւ մտքիս փոշիներուն մէջ անթեղուած Վրացեանի խօսքերը, արտայայտութիւնները իմաստ առնել եւ պայծառանալ սկսան Հայաստանի վերստին անկախացումէն ետք: Այդ մարդը, Հ.Յ.Դաշնակցութեան որդեգրած առաջադրանքը՝ Հ. Մարգարեանի կողմէ բանաձեւուած «Սփիւռքը պէտք է հզօր լինի Հայաստանով, Հայաստանը՝ Սփիւռքով» լոգունգը տասնեակ տարիներ առաջ զգացնել տուած էր մարգարեական իր արտայայտութիւններով, մտքի սաւառնումներով: Հայաստանի իրավիճակէն լաւատեղեակ՝ կը գիտակցէր որ Սփիւռքի գոյապահպանումը անհրաժեշտ էր յետագային Հայաստանի օժանդակելու համար:

Կարծէք անցումային, բայց անորոշ ժամանակաշրջան կը համարէր Սփիւռքը, քաջ գիտակցելով սակայն որ պիտի գոյատեւէր ան եւ այդ նպատակով ալ Համազգայինի մշակութապահպանման կառոյցները կ'ուզէր ներդրումներով ամրացնել:

Համայնավարութիւնը բռնագրաւած էր Հայաստանը եւ այլ երկիրներ: Այդ մասին խօսուելու պահուն, օր մը մօտաւորապէս հետեւեալը ըսաւ Վրացեան. «Բռնատիրութիւններ չեն կրնար յարատեւել, ազգերու անկախ հայրենիք ունենալու, ազատատենչութեան, հայրենասիրութեան բնագոյային զգացումները չեն կրնար խեղդել, օրը կու գայ եւ վերջ կը գտնեն սովետական (իմա՝ համայնավարական) կարգերը Հայաստանի մէջ»:

Բայց Հայաստանը աշխարհագրականօրէն ռուս մեծ ազգին հովանիին տակ պիտի մնար անշուշտ:

Ու օր մը, մեր խնդրանքին ընդառաջելով եւ քաջալերելով մեզ, շրջան մը մեր փոքր խմբակին ռուսերէն դասեր տուաւ...

Անկախ Հայաստանի կախարդիչ եւ լուսաշող տեսլականը ունէր Վրացեան: Ռաֆֆիի «Խենթ»-ին երազը:

Բայց ահա, չարաղէտ օր մը, տապալեցաւ տիտանը իր հետ տանելով իր երազները եւ ծրագիրները: Գեմարանի Գ շէնքի կաղ վերելակին առջեւի աստիճանէ մը սահելով կոտրեցան անոր զիստի-կոնքի ոսկորները:

Համազգայինի եւ Գեմարանի ընտանիքը ցնցուեցաւ: Գուրգուրոտ խնամքի տակ էր ու թէւ ֆիզիքապէս անշարժացած, անկողին գամուած, սակայն արթուն մտքով, սուր հետաքրքրութեամբ տեղեկութիւններ կ'ուզէր օրուան անցուդարձերու մասին, նմանապէս Համազգայինի եւ Գեմարանի հետ աղերս ունեցող իրաւական հարցերու մասին զեկուցում կ'ուզէր ինձմէ...

Գրեթէ ամէն օր տիկնոջս հետ կ'այցելէինք իրեն, յաճախ հանդիպելով Կոմսին, որ պահ մը եւս մնալով մեզի հետ, կը հեռանար: Ու կանխելու համար Վրացեանի նստիլ փորձելու շարժումները, կու տար իր անփոփոխ պատուէրը. «Սիմոն, սնունդ եւ հանգիստ, հանգիստ եւ սնունդ, ու շուտով ոտքի կ'ելլես»:

Անհամար այցելումներէն էր նաեւ Հրայր Մարութեանի հայրը:

Ու այնպէս պատահեցաւ, որ իրաւաբանական աշխատանքներուս խճողումին պատճառաւ, երբ քանի մը օր բացակայելէ ետք, իմ խելքովս իր բարոյական կորովը բարձրացնելու եւ թեթեւ մթնոլորտ ստեղծելու համար, բարձրաձայն երբ «Վարդգէս եւ Իզա, ներկայ»-ով մը մտանք իր սենեակը, անմիջապէս չպատասխանեց. ապա, ցած ձայնով ու բառերը երկարելով ըսաւ. «Իզան ծանօթ է ինձի, բայց Վարդգէսը ո՞վ է...», իրեն յատուկ նուրբ սրամտութեամբ մեղմօրէն կը յանդիմանէր զիս բացակայութիւններուս համար:

Եւ օր մըն ալ, հաւանաբար Մասիսներու համայնապատկերը մտքին մէջ, յաւէտ բաժնուեցաւ մեզմէ, խոր տրտմութեան եւ անսփոփելի սուգի շղարշով պատելով Համազգայինի ու Գեմարանի ամբողջ ընտանիքը:

Հայաստանի անդրանիկ Հանրապետութեան գերմարդերէն մէկն ալ կ'անհետանար, զրկելով հայութիւնը իր իմաստուն ռաիվիրայութենէն:

Եթէ յիշողութիւնս չի դաւաճաներ, Փոլ Վալերին, իր գիրքերէն մէկուն՝ Մելանժին մէջ նոյն երեւոյթը նկարագրած է մօտաւորապէս հետեւեալ ձեւով. երբեմն այնպիսի զգայացումնց դէպքեր կը պատահին մեզի, որ կը կարծենք թէ այդ տպաւորութեան ազդեցութիւնը նոյնքան ուժեղ պիտի ըլլայ վերյիշումի պարագային, իսկ պահեր ալ կան, որոնք իրենց ատենին գրեթէ չեն տպաւորեր մեզ, բայց անոնց վերյիշումը, երեւակայութեամբ աւելի ուժգին կ'ըլլայ:

Իր մահէն (1969) շուրջ 40 տարիներ ետք նոյնանման տպաւորութեան տակ կը գտնուիմ, երբ կը վերյիշեմ անցեալը, որ ուժգնօրէն կը ցնցէ էութիւնս, բայց միաժամանակ կ'իմաստաւորէ ներկան: Ու կը կրկնեմ այլ առիթով ըսած խօսքերս, աշխարհի ոսկին՝ աշխարհին, իմ յուշերս, խոկերս, անուրջներս ու գաղափարական համոզումներս են իմ գանձերս:

Այո՛, ոչ միայն «ճառագայթը չի թաղուիր», այլեւ, Համազգայինը, տեղ-տեղ տեղքայլ ընելով հանդերձ, չի դադրիր Հայ Մշակոյթի ճառագայթող քուրայ ու աշխատանոց մը ըլլալէ:

ՄԵԹՐ ՎԱՐԴԳԵՍ ՇԱՍԼԵԱՆ

Լիբանանի խորհրդարանի նախկին անդամ
Մոնթրէալ, Մայիս 2008

ՄՕՏԱԽՈՐ ԱՆՑԵԱԼԵՆ ՈՐ ԱՅԴՔԱՆ ԱԼ ՄՕՏԱԽՈՐ ՉԷ

«Վարի քաղաք», քաղաքին սիրտը, կամ մայր քաղաք Մայրեաց երկիրի: Հոգի ջրհեղեղին ետք, ծովու ալիքները հոն նետած էին ճողոպրած փշրանքները մեր ազգին: Լիբանան՝ առաջին հանգրուան մեր խաչուած ժողովուրդին: Ամէն ինչ սկիզբէն պէտք էր սկսէր: Հոն է որ աշխարհ եկած էի,- ըստ ծնողքիս վկայութեան, շատ տարիներ ետք ջուրերէն քաշած դուրս բերած էին զիս, այդ արեւոտ ափերուն: Ըստ իրենց, ծովու ծնունդ էի ծովանուշի ման: Յամենայն դէպս իրողութիւն մը՝ քաղցր ու սիրելի անոնց համար, որոնք ամէն ինչ կորսնցուցած էին զոհ երթալով գազանի տարերային մոլուցքին: Նախ՝ վրանաբնակ, ապա աստանդական քաղաքի գանազան թաղերուն մէջ, մինչեւ վերջնական կայք՝ քաղաքին կեդրոնը: Հայոց Ս. Նշան մայր եկեղեցիի շուքին, հազիւ քանի մը հարիւր մերթը հեռու անկէ: Ուր կար նաեւ համանուն վարժարանը:

Մեր տան կից կը գտնուէր քաղաքի «Մեծ թատրոնը»: Մեր կեանքը կ'ընթանար այդ եռեակին հետ: Առաջինները կը պատկանէին ազգին, երրորդին համար ստիպուած էինք դիմել եւ վարձել: Առաջին կարգի վրայ կու գար սինեմա «Կրան Թէաթրը», ապա նաեւ՝ «Մեմորեալ Հոլ»ը, որ կը պատկանէր անտարանականներուն: Մեր գեղարուեստական ձեռնարկները առաւելաբար տեղի կ'ունենային յիշեալ վայրերուն մէջ՝ քառասուն-յիսունական թուականներուն: Յետոյ կացութիւնը փոխուեցաւ, բարելաւուեցաւ. մեր սեփական շէնքերը ունեցանք, երբ մէկ մարդ միմակը դպրոց շինեց, երբ մեր մէջէն բարերարներ յայտնուեցան այդ տարիներուն, չարքաշ ու յարատեւ աշխատանքով յաջողած հայեր: Անոնք իրենք զիրենք պարտական կը զգային իրենց ծնունդ տուած ազգին, ներքին ու գաղտնի պարտք մը հատուցանելու գոհունակութեամբ կը նուիրաբերէին:

Մեր տան կից «Կրան Թէաթր»ի մէջ տեղի կ'ունենային թատերական ներկայացումներ: Այն օրերուն բենը կը գրաւէր առաւելաբար «Համազգային մշակութային ու կրթական ընկերակցութիւնը»՝ իր հանրածանօթ թատերախումբով:

Առիթն օգտուելով ներկայ կ'ըլլայի այդ թատերախաղերուն, քանի որ թատրոնի պահակները լաւ կը ճանչնային զիս իբրեւ թաղեցի ու ազատ անցք կու տային ինծի՝ առանց առարկութեան: Անմոռանալի օրեր: Ուր ներկայ եղայ գանազան թատերական ներկայացումներու, Գասպար Իփէկեանի ղեկավարութեամբ. պարոն Լեւոն Շանթի «Ինկած բերդի իշխանուհին», «Կայսրը», «Հին Աստուածները»: Շարքը երկար է: Կը յիշեմ Սիւզան Թոսպաթի, Ջեփիւռ Շանթի, Ժորժ Սարգիսեանի եւ այլոց խաղարկութիւնները, որոնք, արուեստով յագեցած, մեծ տպաւորութիւն կը ձգէին իմ վրաս: Զարգացնող, հարստացնող, կազմաւորող: Ինչ որ նպատակն էր միութեան հիմնադիրներուն. օգնել նոր սերունդի գեղարուեստական ճաշակին ու անոր մակարդակին բարձրացման: Իսկական ազգօգուտ գործ: Շատեր օգտուեցան իրենց տրուած պարգեւէն՝ այդ գեղարուեստական վայելքէն՝ մեծ ազգերու վայել:

Առաքելութիւնը շարունակուեցաւ երբ Ժորժ Սարգիսեան յանձն առաւ այդ պարտականութիւնը նոյնքան ձեռներեցութեամբ ու յաջողութեամբ:

Երբ գրել սկսայ, այդ ներկայացումներուն առիթով, Սիմոն Սիմոնեանի «Սփիւռք» շաբաթաթերթին մէջ, գովեստով կ'արտայատուէի Ժորժ Սարգիսեանի թատերական վաստակին մասին:

Դիպուածը ուզեց որ միասին ըլլանք օր մը, գեղանկարիչ Փոլ Կիրակոսեանի հրաւերով՝ իր տան մէջ, կարծեմ Փոլի նորածին աղջիկ

զաւակին՝ Նանուին մկրտութեան առիթով: Ամբողջ խումբը ներկայ էր. Ժորժ Սարգիսեան, Զեփիւռ Շանթ եւ ուրիշներ, անշուշտ բարեկամս Փոլն ու ընտանիքը, ծովահայեաց իրենց տան մէջ, ուրկէ կարելի էր վայելել բնութիւնը մեր գեղեցիկ երկրին: Ուրախ եւ զուարթ մթնոլորտ. երգ, պար, արտասանութիւն՝ դերասաններու կողմէ, որոնք արծակիամարձակ ընթացք կու տային իրենց ներքին մղումին: Հաւաքաբար երգեցին նաեւ «Սայլորդ»-ին երգը, որ ըստ երեւոյթին իրենց սիրած երգերու ցանկին կը պատկանէր: Յուզիչ, առիւնքնող: Ինչո՞ւ յուզիչ ու առիւնքնող, չեմ գիտեր, մինչեւ այսօր կը տեսէ անոր թողած տպաւորութիւնը իմ մէջ: Գուցէ անոր աւարտին է որ պարոն Սարգիսեան մօտեցաւ ինծի, ըսաւ. «Ձեր գրած յօդուածը կարդացի «Սփիւռք»-ի մէջ, որուն համար շնորհակալ եմ: Շարունակեց իր գնահատանքը, ինչ որ հաճելի էր լսել: Իրեն նման վաստակաւոր վարպետ մը գնահատած էր սրտես բխած քանի մը տողերը, որոնք պարզ հատուցում մըն էին իրենց մատուցած վայելքին համար: Միւսները մօտեցած էին մեզի եւ կը մասնակցէին զրոյցին:

Կրկին երգեցին «Սայլորդ»-ը...

Եթէ չեմ սխալիր այս երգին բառերը գրուած են պարոն Նիկոլ Աղբալեանի կողմէ, հիմնադիրներէն «Համազգային մշակութային եւ կրթական միութեան»:

Փոլ գոհ էր, խումբին անդամներն ալ, եւ մենք: Ո՞ւր եւ ինչպէ՞ս կարելի է նման պայծառ դէմքեր իրարու քով բերել ու խրախճանք կազմակերպել: Ո՞ւր են հիմա, չկան...:

Զկան սա տերեւներուն նման որոնք կ'իյնան ծառերէն, նոյնիսկ այս գարնան, տանս առջեւ: Գացին, մեկնեցան: Ափսո՛ս, բայց մնաց իրենց յիշատակը, որ կը գեղեցկացնէ մնացողներու օրերը: Այնպէս, ինչպէս բարեկամս, բանաստեղծ Մուշեղ Իշխանը, մեկնեցաւ: Բայց ան կենդանի է, քանի որ բանաստեղծները չեն մեռնիր: Տարիներ առաջ հանդիպած էի Մուշեղին, Սեւան տպարանին մէջ, երբ այցելութեան եկած էր Սիմոնին: Ծանօթացանք: Հաճելի զրոյց ունեցանք երեքով: Սիմոնը ներկայացուց զիս իրեն: Ինձմէ գրութիւններ սկսած էին երեւիլ տարբեր ստորագ-



րութիւններով: Ծածկանունով՝ երկար ատեն, շաբաթական հերթականութեամբ, «Աղասի»-ի աղանիի փետուրներով: Երբ այդ գաղտնիքը յայտնեցի Յովհաննէս Շիրազին, 1971ին, «Արմենիա» պանդոկին մէջ, զարմացած բացագանչեց. «Հա, Սիմոնի Աղասին, ճանաչում եմ այդ աղեղնաւորին»... Կամ ասանկ բան մը: Գրութիւններ նուիրած էի հայոց սիրելի քերթողին, որ հետապնդումի ենթակայ էր օրուան իշխանաւորներուն կողմէ: Եթէ չըլլայինք մենք, իր գլուխն ալ կ'ուտէին հաւանօրէն, ինչ որ պատահած էր այլ թանկագին արժանաւորներու, բոլշեւիկեան հնոցին մէջ:

Միւսակս «Մեր աղեղն» գլխարկը կը կրէր այն օրերուն, երբ ամէն ինչ գաղտնի էր:

Հայաստան ուխտագնացութիւնս կը պարտէի Մուշեղին, քանի որ ուսանողական միութեան նախագահը արգելք ուզած էր հանդիսանալ մասնակցութեանս՝ այդ զատկական պտոյտին: «Ո՛չ ըսած էր, չէ կարելի, չի կրնար մասնակցիլ մեր Հայաստան այցելութեան», այդ՝ որպէս պատիժ «Ազգակ»-ի մէջ գրած յօդուածիս, զոր յարմար ու պատշաճ չէր դատած իր պատուոյն ու արժանապատուութեան, այլ նաեւ՝ իր հանգամանքին:

Մուշեղ հարցուց թէ Հայաստան պիտի երթայի՞...

- Պարոն Մուշեղ, ինծի արգիլուած է Հայաստան երթալ:

- Ինչպէ՞ս կարելի է այդ մէկը,- հարցուց: Ըսի պատճառը: Բացատրեցի...

Տեղեկացեր է, թէ «Լեւոն Թրապըւն» է ճամբորդութիւնը կազմակերպողը: Խօսեր է Լեւոնին: Ան ըսեր է թէ՝ «ինք մեր ներկայացուցիչը կ'ըլլայ այս ճամբորդութեան ընթացքին»:

Մուշեղ մեր տունը բարձրացաւ, ըստ իր սովորութեան, բարի լուրը փոխանցելու համար: Ան յաճախ մեզի կու գար շունչ առնելու համար, սիրտն ու հոգին բանալու մեր պատշգամին վրայ, որ տիեզերքի վրայ բացուած պատուհան մըն էր, իր տունը վարի յարկ ըլլալով այդ պահանջը ուներ:

- Դուն կը մասնակցիս Հայաստան երթին: Եւ վերջ: Ոչ ոք իրաւունք ունի խափանելու ճամբորդութիւնդ: Լեւոնը ատանկ որոշեց, ինք ամէն ինչ կարգադրած է:

Իրաւ ալ, երբ որոշուած օրը օդակայան հասանք, Լեւոնի ներկայացուցիչը եկաւ զիս գտաւ եւ բոլոր պաշտօնական թուղթերը յանձնեց ըսելով. «Դուն մեր ճամբորդական գրասենեակին ներկայացուցիչն ես, պարոն Լեւոնը այդպէս ըսաւ»: Ծանր ու անակնկալ պարտականութիւն մը՝ որուն պատրաստութիւնը ամենեւին կը պակսէր ինծի: Եւ «նախագահին» կատաղութիւնը մեղմելու համար միջին եզր մը գտնուեցաւ եւ հարցը «անուշի կապուեցաւ» բոլորիս համաձայնութեամբ: Նոր փոխանորդը իր միջնորդական պաշտօնէն պատուով դուրս եկաւ մեղմելով կացութիւնը, որուն մէջ ոչ մէկ մեղք ուներ եթէ չըլլար «էկօ»ի հարց մը՝ ինքնահաւան ամենագէտ տիպարին վերաբերումը բացատրող: Առաջին շփումէս ետք, հայրենիքէ վերադարձիս՝ խանդավառութեամբ գրի առի հանդիպումներս, դէպքերը, զրոյցներս: Մուշեղ վկան կ'ըլլար այդ աշխատանքիս: Իր մէջ գրելու ախորժակ կը բացուէր տեսակ մը չըսուած կամ չըսուելիք մրցակցութեան նման, եւ ինք ալ սկսաւ գրել իր ծանօթ «Մեռնիլը դժուար է» թատերակը, որուն մէջ մասնագիտական ակնարկութիւններ կային բժշկութեան առնչուող: Լուսաբանութիւններ կ'ուզէր ինձմէ գործը յառաջ տանելու համար: Մեր նոր տունը ՀԱՅԿԻ քաղաքի ակունքին կից էր, Հայ ճեմարանին նայող, ուր բակին մէջ յաճախ Մուշեղ կը ճեմէր դասերէն ետք: Դպրոցի քովընտի դրան բանալին ուներ եւ տանտիրոջ նման կը վարուէր: Ու-

շաղրութիւն կ'ըներ իր առողջութեան: Հոգ կը տանէր: Ըսեր էին իրեն թէ քալելը լաւ է, մարդ որքան քալէ այնքան երկար կ'ապրի եւ կը խուսափի սիրտի անկանկալ տագնապներէ: Ի հարկէ ճեմարտութիւն կար այդ ըսուածներուն մէջ, կարծիքս ալ կ'ուզէր առնել ամրացնելու համար ուրիշներուն ըսածը: Առողջութիւնը եւ անոր վերաբերող արդի գիտելիքները մաս կը կազմէին մեր զրոյցներուն առանց մոռնալու գրականութիւնը, գեղարուեստը եւ մեր կեանքը յուզող նիւթերը, որոնք անքան բազմաթիւ էին այն օրերուն, մայրիներու երկրին մէջ, քրիստոնեայ օճախ մը այլ աւանդներու ու կիանոսին մէջ, ենթակայ ամէն վայրկեան վայրագ բնագոյներու բռնկումին, կարծես այդ եղանակով արժանի կ'ուզէին ըլլալ «դրախտի» բարիքներուն:

Փոթորիկի պայթումէն առաջ, մտահոգ, հարց կու տայի իրեն.

- Պարոն Մուշեղ, մերինները կը խորհի՞ն պաշտպանութեան միջոցներու մասին, կացութիւնը լաւ չեմ տեսներ...:

- Ա՛յ տղայ,- կ'ըսէր,- հոս պետութիւն կայ, բանակ կայ, իրենց պարտականութիւնն է իրենց քաղաքացիները պաշտպանել, մեզ ապահովել, այդ մեր գործը չէ:

- Ներքին կարգով այդ մասին կը մտածուի՞, պարոն Մուշեղ...

- Ըսի արդէն, այդ մէկը պետութեան գործն է, մեր խառնուելուն կարիք չկայ: Կարդացի յօդուածդ «Սփիւռքի» մէջ, տեղին կը գտնեմ առաջարկածդ, եթէ բան մը պատահելու ըլլայ, մենք կողմ չենք, մենք չէզոք ենք: Ատանկ ալ կը մնանք:

- Ատոր անունը,- ըսի,- ես «դրական չէզոքութիւն» կոչեցի գրութեանս մէջ:

- Ճիշդ այդպէս, մենք հոս ընելիք չունինք, կ'ուզենք բոլոր կողմերու հետ հաշտ ապրիլ:

- Կարելի չէ՞ մտածել նաեւ որոշ պաշտպանութեան մը մասին:

- Այդ ալ ճիշդ է. պատասխանատու մարմինները կը մտածեն ու բան մը կը կազմակերպեն այդ ուղղութեամբ, համբերէ՛, կը տեսնես:

Երբ եօթանասունական տարիներու սկիզբները պաշտօնակցիս ու բարեկամիս տոքթոր Մելքոն Էպլիդաթեանի առաջարկով մաս կը

կազմեի «Ազդակ»ի աշխատակիցներու խումբին, արդեն գործակից եղած էի Մուշեղին, բարեկամ, դրացի ըլլալէ ետք:

Երկար գրութիւն-քննարկում մը տուած էի թերթին՝ Մուշեղ Իշխանի բանաստեղծական երկերու մասին: Կը թուի թէ անմարսելի համարուած էր յօդուածս խմբագրական կազմին եւ գրութիւնը յանձնած էին Մուշեղին առ ի գնահատում, որպէսզի ինք որոշէր անոր տպուելու կամ չտպուելու ճակատագիրը: Ուսումնասիրութիւնս լոյս տեսաւ երկու մասով, իր հաւանութեամբ, ի հեճուկս խմբագիր ընկերներու, որոնք, ըստ երեւոյթին, չէին ունեցած Մուշեղին գնահատումը: Այս պարագային երկուքս ալ ուրախ էինք: Ես ո՞վ եւ ո՞ւր եւ գրական քննադատութիւն ու գնահատում կատարողը ո՞ւր: Մեր յարաբերութիւնները լաւ էին, աւելի սերտացան, եղբայրական մթնոլորտ յառաջ եկաւ երեցի եւ կրտսերի սիրալիր յարաբերութեամբ:

Այնուհետեւ երկրին կացութիւնը օրեց օր բարդացաւ: Ամէն ինչ դժուարացաւ: Երկրին գործերը կաղալ սկսան: Ամէն մարդ սկսաւ իր ապագային մասին մտածել:

- Ձերինը դիւրին է,- կ'ըսէր Մուշեղ,- կը նստիք օդանաւ եւ ձեր շունչը կ'առնէք Ֆրանսա: Բայց ի՞նչ պիտի ըլլայ մեր բազմաչարքար ժողովուրդին ճակատագիրը:

Խնդիրը լրջացած կը թուէր:

Հարցը կար, պատասխանը նոյնը չէր, ամէն մարդ իր գլխու ճարին պիտի նայէր: Ազգովին բան մը կազմակերպել չէր ըլլար, իւրաքանչիւր հայ արդէն ամբողջ ազգն էր: Օրերը ուրախ չէին, կացութիւնը հետզհետէ կը կնճռոտէր: Ամէն կողմ անորոշութիւնն ու կասկածը հոգիներուն տիրած էին: Մեր անուշիկ Լիբանանին հորիզոնը մութ էր, երկինքը մթագնած, ամպրոպը կը սպառնար:

- Մենք դրական չէզոքութիւն խաղցուցինք, միւսները՝ զինուեցան: Վստահելի կարծուած արարածներ սկսան սպառնալ հայութեան. «Եթէ մեզի հետ չէք մեզի թշնամի էք» դասական պատճառաբանութիւն...: Ոչ անպայման իմաստուն ու խոհեմ, այլ նոյնիսկ յանդուգն ու տգեղ, մանաւանդ՝ անվայել:

Յիշեալ դէպքերէն տարիներ առաջ, երեկոյ

մը, մեր դրան զանգը հնչեց: Բացի դուռը: Մուշեղի տղան էր.

- Ի՞նչ կայ Արմիկ...

- Հայրիկը լաւ չէ, ձեր օգնութեան կարիք ունի:

- Ի՞նչ կ'ըսես:...

Արմիկ զարհուրած վիճակ մը ունէր, աւելի չխօսեցաւ:

- Վարը կը սպասեն,- ըսաւ ու մեկնեցաւ:

Արմիկ ամերիկեան բժշկական համալսարանի վերջին տարուան ուսանող էր, երբ հօրը վիճակը տեսնելէ, սարսափած, առանց հեռաձայնելու մասին մտածելու, ուղղակի մեզի եկած էր, զիս օգնութեան կանչելու համար:

Արագօրէն կը վերցնէմ պայուսակս, հինգ վայրկեան ետք կը հասնիմ Մուշեղին մօտ, որ անշարժ երկարած էր անկողինին վրայ:

Նման պարագաներու առաջին հարցումը կ'ըլլայ. կեանք կա՞յ, յոյս կա՞յ տակաւին թէ ոչ: Արեան ճնշումը կը չափեմ կամ կը փորձեմ չափել: Ճնշում չկայ. թանսիոն զերօ: Ներարկում մը կը կատարեմ, Մուշեղ կը շարժի, չի խօսիր, բայց արդէն յոյսի պէս բան մը կայ: Երկրորդ ներարկում մը եւս եւ քանի մը այլ միջոցառումներ: Ուշքի կու գայ, բայց միշտ չի խօսիր: Կը մտածեմ որ նման պարագաներ կարելի չէ տան մէջ դարմանել, թրուածինի եւ այլ հսկողութեան կարիք կար: Կ'առաջարկեմ զինք հիւանդանոց փոխադրել պետական շտապ օգնութեան կառքով: Առանց ժամանակ կորսնցնելու կապի մէջ կը մտնեմ տեղւոյն շտապ օգնութեան ջոկատին հետ: Երբ բժիշկ է իրենց հետ խօսողը, փութով ընթացք կու տան, հասկնալով կացութեան լրջութիւնը:

Արմիկը եւ Ջապէլը (Մուշեղին կինը) մտահոգ կը հետեւին գործողութեանց: Մարդիկը շուտով կու գան եւ հիւանդս կը հասցնեն Ամերիկեան հիւանդանոց, ուր իր զաւակը պիտի կարենար հետեւիլ իրեն՝ տագնապի ընթացքին:

Այդ օր քիչ մնացած էր որ Մուշեղը կորսնցնէի: Երբ տեղ կը հասնի, կարելի բոլոր միջոցները ի գործ կը դնեն զինք փրկելու համար: Ամերիկեան հաստատութիւնը լուրջ էր եւ կը կիրարկէր արդի բժշկութեան բոլոր միջոցները: Այդ առումով համբաւ շահած էր երկրին եւ

միաժամանակ շրջանին մէջ: Յաճախ առիթ ունեցած էի գործակցելու իրենց:

Յաջորդ օր հիւանդանոց գացի Մուշեղը տեսնելու: Թթուածինի դիմակը քիթին երբ զիս տեսաւ ժպտեցաւ: Կեանք մը կ'արժէր այդ ժպիտը: Ժամը չէր հասած: «Գրուկ չէր», այսինքն, բարբարոս ասութեամբ, տակաւին չէր «գրանցուած» մեր Մուշեղը, թանկագին ու քաղցր բանաստեղծը հայոց եւ ընդմիջտ բարեկամս:

Սրահին մէջ կը հանդիպիմ ծանօթ դէմքի մը, Վահագն էր, գրագիտուհի տիկին Սեզայի մանչը՝ քնքուշ բանաստեղծ Մատթէոս Զարիֆեանի քոյրը: Իրեն այցելութիւն տալ արգիլուած էր բժշկական կազմին կողմէ: Կը թուէր թէ կացութիւնը ծանր էր, հետեւաբար պատեհ չէր հիւանդը անհանգստացնել: Դրան արանքէն կը նշմարեմ զինք:

Մայրը կը հարցնէ տղուն.

- Վահագ, ո՞վ է:...

- Կարելորեանը:...

- Թող ներս քովս գայ տոքթորը,- կ'ըսէ տիկին Սեզա, մեղմ ձայնով (իր ամուսինն ալ բժիշկ էր, Տոքթոր Քիւփեւեանը):

Տիկին Սեզա-Սիրան Զարիֆեան յետ պատերազմեան մեր գրականութեան լաւագոյն կին ներկայացուցիչներէն եղած է, սիրած եմ իր ոճը ու բիրեղեայ հայերէնը: Առաւել պարտական էի իրեն հոգեպէս, ան փափաքած էր զիս հայուհիի մը ծանօթացնել՝ լուրջ նպատակով ու ձեռքէս բռնած աղջիկտեսի ալ տարած էր: Հետաքրքրական:

Տիկին Սեզա զօրաւոր անհատակութիւն ունեցող հայ գրագիտուհի էր: Օր մը, երբ պարոն Նիկոլ Աղբալեան դասախօսութիւն կու տայ «Մեմորեալ Հոլ»ի մէջ, մեղմ, հազիւ լսելի ձայնով, (այն ատեն բարձրախօս չկար մեր սրահներուն մէջ), ունկնդիրները դժգոհութիւն կը յայտնեն զանազան պոռչտութիւններով, շարժումներով, խանգարելով դասախօսութեան ընթացքը, տիկին Սեզա ոտքի կը կանգնի ու բարձրաձայն կ'ազդարարէ. «Անոնք որոնք գոհ չեն, կրնան լքել սրահը ու մեկնիլ», ու կը խնդրէ օրուան դասախօսէն շարունակել բանախօսութիւնը: Այդպէս ալ կ'ըլլայ. պարոն Աղբալեան կը շարունակէ իր բացատրութիւն-

ները քար լռութեան մէջ, հայ գրականութեան ու արուեստի պատմութեան մասին, իրեն յատուկ հմտութեամբ ու իմաստութեամբ:

Մուշեղին այցելութեանս յաջորդ օր հեռաձայնը հնչեց, կրկին.

- Այո, ի՞նչ կայ, ո՞վ է:

- Տասնապետեան, ճեմարանի տնօրէնը:

- Այո, պարոն Տասնապետեան, կը լսեմ:

- Իրա՞ւ է, որ դուք պարոն Մուշեղը հիւանդանոց հասցուցիք..

- Ճիշդ:

- Փրկեցիք զինք... Շնորհակալութիւն:

Եւայլն:

Ասանկ բանի չէի հանդիպած: Յամենայն դէպս իրաւ էր որ Մուշեղը ազատած էր մահուան ժանիքներէն:

Անկէ ետք երկար ապրեցաւ եւ նոր գիրքեր հեղինակեց անցնելով անասելի այլ սպասելի պատերազմի թոհուբոհէն, որուն ամենեւին արժանի չէր շատ բաներ տեսած մեր անուշ ու քաղցր բանաստեղծը: Հարուստ եմ իր բարեկամութեամբ, Համազգայինի ճեմարանի այս անդրանիկ սանէն, որուն ինք հաւատարիմ մնաց մինչեւ իր մահը իր գեղեցիկ անկրկնելի հայերէնով: Երանի թէ քիչ մը աւելի կարդային նորերը իր շքեղ լեզուն, որուն գեղեցկացման մէջ, ուրիշներու կարգին, իր բաժինը ունեցաւ:

Մուշեղի կիսանդրին կանգնած է ճեմարանի բակին մէջ, ուրիշ հսկաներու շարքին, հոն ուր ատենին կը ճեմէր երկար ապրելու համար: Բայց բանաստեղծները երկար կ'ապրին անոր համար որ մահը անգօր է իրենց դէմ:

«Համազգային»ը, իր դպրոցով ու թատրոնով, բոլորիս երախտագիտութիւնը շահեցաւ յընթացս տարիներու, իր ղեկավարներու ճիգով ու իր մեկեմասներու զոհողութեամբ, ի սէր մեր տառապած, չարչարուած, երիցս յարուցեալ ազգին հայոց՝ երկրագունդի երեսին:

Թէեւ յուշ գրել չեմ սիրեր, սակայն այս մէկը եկաւ ուղղակի սրտէս՝ յանուն փշուր մը ոսկի ճշմարտութեան:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԵՒՈՐԵԱՆ

Նուագի լը Կրան՝ մերձ ի Փարիզ
7 Յուլիս 2008



Ի ՅՈՒՇ՝ ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ Բ Ա Ռ Ը . . . (1)

Համագգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի
Գրական բաժնի երրորդ տարուան ուսանող եմ եւ առաջին
տարին է, որ կ'աշակերտեմ գրագետ Պարոնին⁽²⁾: Կը
գտնուիկնք Պուրճ Համուտի Ճեմարանին⁽³⁾ երրորդ յարկը եւ
այդ օրուան առաջին պահը յատկացուած է Արեւելահայ
Գրականութեան: Պիտի ներկայացնենք «գրական փորձ»
մը, ըստ Պարոնի թելադրանքին:

Գիշեր մը ամբողջ ուղեղս չարչրկելէ ետք ծնունդ տուած եմ վեցերորդ բանաստեղծութեանս՝ «Սպասում» խորագրով, ուր իրարու կը հանդիպին բնութեան եւ հոգեկան զոյգ մայրամուտեր...

Չանգէն առաջ արդէն դասարանն է Պարոնը: Լայն ժպիտով մը կը բարեւեմ գինք եւ իրեն կը յանձնեմ քերթուածս, հետեւելով դէմքին արտայայտութիւններուն, որոնք յաճախ լեզուէն աւելի կը խօսին: Դասարանը հետզհետէ կը սկսի ոգեւորուիլ՝ դասընկերներուս ժամանումով: Պարոնին պահերուն ոչ միայն գրականութիւն կ'ուսուցանուի, այլեւ տեղի կ'ունենայ հայ մտքին ու հոգիին խորախորհուրդ ծալքերը պեղելու արարողութիւն, եւ մենք մեր «լումա»ները հայ ժողովուրդին գանձարանին նուիրելու պատրանքներ կը սնուցանենք:

«Գրական փորձ»եր ներկայացնելու պահը ինքնըստինքեան արդէն վեր է ամէն գնահատումէ, որովհետեւ հոն կը շոյուին մեր «ես»երը, կը բիրեղանան մեր թրթռումները, բոյրերը, եւ մեր էութիւնները կը սկսին իւրայատուկ «համ ու հոտ» արտաբերել...

Իսկ եթէ պատահի, որ մեր գրութիւններուն մէջ, Պարոնին խօսքերով՝ «զարնող, առնող-տանող» պատկեր մը կամ արտայայտութիւն մը յայտնուի, այն ատեն մեր հոգիները եօթներորդ երկինք կը սաւառնին...

Ամպիոնին աջին կանգնած՝ Պարոն դասախօսը մի առ մի կը թերթատէ մեր գրութիւնները եւ մատնանշումներ կ'ընէ. վերջին թուղթը իմս է.

- Գրութիւնդ լաւ ստացուած է, ջերմ է, կը քալէ կոր, պատկեր կայ եւ ամէնէն կարեւորը՝ բանաստեղծական է -, ըսաւ եւ զայն ինծի երկարելով՝ աւելցուց.

- Բայց նուրբ կէտ մը կայ, որուն ես անձամբ համաձայն չեմ-, եւ խնդրեց, որ բարձրաձայն կարդամ բանաստեղծութեանս առաջին տողը:

Հանդիսաւոր լրջութիւն մը տալով ձայնիս, կարդացի հետեւեալը.

«Երբ հորիզոնը կ'այրի գրգանքներէն արելին»...

- Կը բաւէ,- ըսաւ եւ դառնալով դասընկերներուս՝ յարեց.

- Չէ՞ք կարծեր որ Սեդային գրած պատկերաւոր նախադասութեան մէջ խախտու բան մը կայ,- ապա շեշտակի նայելով աչքերուս՝ շարունակեց.

- Գրգանքը շոյանքն է, գգուանքն է, որ այրելու կարողութիւն չունի, այլ մեղմ գրգիռներ միայն կ'արթնցնէ: Լաւ կ'ըլլայ, որ գրգանքին համազօր բառ մը գտնես, որպէսզի բանաստեղծութիւնդ ճշմարտանման գործողութեամբ մը պսակուի...

Այս մատնանշումը, որ համոզիչ թուեցաւ ինծի, կսկիծ տուաւ հոգիիս. ինչպէ՞ս կ'ըլլայ, որ ես, երրորդ դասարանի ուսանողուհի, առանց դասախօսին նկատողութեան չէի կրցած անդրադառնալ «գրգանք»ին իմաստային նրբութեան. այո՛, ճիշդ է, գրգանքը այրելու գործութիւն չունի՛...: Հետեւաբար, մտածեցի, պետք է գտնեմ այնպիսի՝ բառ մը,

որ ըլլայ ե՛ւ պատկերաւոր, ե՛ւ բանաստեղծական, ե՛ւ իրաւ:
Վայրկենապէս յանձնուեցայ այդ բառին փնտռտուքին, որ
հետզհետէ խռովիչ հաճոյք մը սկսաւ պատճառել ինծի:
Զգգացի ո՛չ պահուն աւարտիլը, ոչ ալ յաջորդին սկսիլը: Ու-
ղեղիս մէջ զանազան բայեր իրենց կռնակին «կը»-եր շալա-
կած, իրարու ետեւէ կու գային կանգնելու «կ'այրի»ին տեղը,
փորձելով տեղացիութեան իրաւունք ձեռք բերել...

- - -

Յաջորդ դասապահէն կէս ժամ անցած ըլլալու էր կարծեմ,
երբ ականջիս դպաւ «Իսրայէլ Օրի» անունը, եւ նոր միայն
զգացի, որ ժամանակակից Հայոց Պատմութեան դասա-
խօսն էր սենեակին մէջ, որ շրջագայելով կը ներկայացներ
հայ մեծանուն քաղաքական գործիչին կեանքը: Փորձեցի
կապուիլ նիւթին, գէթ գաղափար մը ունենալու համար դա-
սաւանդուածէն, սակայն, ի գո՛ւր. եութեամբս ամբողջ կ'որո-
նէի այդ »քաղցրահամ« բառը, որ գրութիւնս բանաստեղծու-
թեամբ պիտի օժտէր.

- Երբ հորիզոնը «կը կարմրի»...

- Երբ հորիզոնի «կը ջերմանայ»...

- «Կը բոսորանայ»...

- «Կ'արիւնի»...

- Ո՛չ... ո՛չ... ո՛չ... կ'ըսէր ձայն մը ներսէս:

- Հապա ի՞նչ -, ես ինծի հետ խօսելու պէս կը հարցնեմ
ականջայ եւ նոր միայն կը նկատեմ, որ քովս նստող դասըն-
կերուհիս լսած ըլլալով ձայնս, հարցական նայուածքով մը
ինծի կը նայէր: Ամէնալէս եւ յուզումէս յանկարծ զգացի, որ
երեսներս այրիլ սկսան...

- Կ'ամէնայ - , կ'ըսեմ բարձրաձայն, այս անգամ կամօրէ՛ն
լսելի դարձնելով ձայնս:

- Կը շիկնի՛ -, կ'արձագանգէ «միւս»ը...

- - -

Ճիշդ նոյն պահուն զանգը «դադար» աւետեց: Հազիւ
սպասեցի դասախօսին մեկնումը, ապա թուղթը ձեռքս խո-
յացայ դուրս՝ Պարոնը գտնելու: Զովի դասարանէն երեւցաւ
գրականութեան դասախօսը, որուն երկարեցի թուղթս՝
«Պարոն՝ գտայ, բառը գտայ» գոչելով: Տեսնելով խանդա-
վառութիւնս՝ ան նախ ետ-ետ գնաց քիչ մը, ապա աչքերովը
յափշտակելով գրութիւնս՝ իր կարգին խանդավառ թոնով մը
վրայ բերաւ. - Այո՛, անշո՛ւշտ, հորիզոնը կը շիկնի՛ գրգանք-
ներէն արեւին...

Ս.Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

1.- Այս գրութեան թուականն է 16 Դեկտեմբեր 1988, գրուած՝ նշուած դէպքէն
մօտաւորապէս տարի մը ետք, երբ Հայագիտական Հիմնարկը փոխադրուած էր
Մըզիերի Ճեմարան, իսկ ես՝ աւարտական դասարանի ուսանող արդէն: Իր կար-
գին «գրական փորձ» մը, զոր չնչին սրբագրութիւններով կը յանձնեմ ««Բագին»»-
ին, Համազգայինի 80ամեակի թիւին իմ մասնակցութիւնս բերելու նպատակով:

2.- «Պարոն» մակդիրը կը վերաբերի արձակագիր, հրապարակագիր, գրաքն-
նադատ եւ խմբագիր Պօղոս Սևապեանին, որուն հասցուցած սերունդները առա-
ւելաբար այսպէս կը ճանչնան զինք:

3.- Ներկայիս՝ «Շաղգոյեան» Կեդրոն:



ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԷՋԵԱՆ - Սիփանը Կտուց կղզիէն դիտուած - 1915

Ո՛ՒՐ ԷՔ ՁԻՒՆԵՐ

Մանկութեան տարիներուս շատ կը սիրէի ծնեռը, իր բոլոր անուշաբոյր երեւակայական մթնոլորտով: Գոյնզգոյն աշխարհներ կը բերէր ան ինձի, կը դառնար հեքիաթ մը, որուն մէջ կ'ամբողջանային մանկութեանս իմաստն ու էութիւնը:

Կը յիշեմ մեր տունին դիմաց, վեր բարձրացող փողոցը, որ դէպի դպրոց կը տանէր, նոր տարուան շրջանին կը վերածուէր խաղավայրի մը, ուր կու գային թաղի բոլոր պզտիկներն ու մեծերը: Կու գային եւ այդ ճերմակ երկարածիգ փողոցը կը դառնար գոյնզգոյն թատերաբեմ մը ու այդ ուրախութեամբ կը շնչէր ամբողջ քաղաքը:

Հոն կու գայինք մեր ամենօրեայ հեքիաթներուն հերոսները կերտելու: Առտուընէ մինչեւ իրիկուն կը խաղայինք, կը թաւալէինք ծիւնէ փափուկ աշխարհի մէջ:

Մեր տուններէն ծնեռուան պաշարները յաճախ բախտը կ'ունենային մեր ծեռքերով շինած ձիւնամարդերուն քիթը կամ բերանը ըլլալու: Խեղճերս ի՞նչ գիտնայինք, թէ ի՞նչ ձիւններէն կերտուած են այդ ձիւնամարդերը...

Մենք մեր ուրախութիւնը երկինքներէն գլորելով կ'ապրէինք ճերմակ աշխարհին ճերմակ հեքիաթը:

Ինձի համար յատուկ խորհուրդ ունէին սառցալուլաները, որոնք կը կախուէին մեր պատշգամբէն եւ անասելի գեղեցկութեամբ կը պարուրէին օրերս: «Լա՛ց, Լա՛ց սառցալուլա, տանիքիս վրա՛յ, տանիքիս վրա՛յ»:

Այդ տարիներուն ծիւնը այնքա՛ն առատ կ'ըլլար, որ ինծի կը թուէր, թէ աշխարհի բոլոր հեքիաքներուն ծիւները ծիւնած են մեր քաղաքին վրայ: Ու կը շարունակուէր ծիւնէ աշխարհին ծիւնէ վայելքը:

Շա՛տ տարիներ անցած են այդ ծմեռներէն: Չմեռները վերածուած են ձեան կարօտի մը: Փոխուած է մանկութեան՝ մանկութիւն բերող ժամանակը...

Ձիւն չտեսած, անոր տարածութիւնը չնկարած, անոր թւերուն մէջ չօրօրուած քաղաքներն ինչպէ՞ս կրնան գիտնալ մանուկի մը ծմեռային հրճուանքին չափը: Ինչպէ՞ս կրնան սիրել մանկութեան ծիւնականչը: Ի՞նչ հեքիաքներ կրնան պատմել իրենց գիրկին մէջ ծուարած պզտիկներուն...

Ո՞ր էք ծիւներ...

Ի՞նչ գիտնայի, որ արարչաստեղծ ձեր էութենէն պիտի հեռանամ օր մը: Դուք ո՞ր հեքիաքին մէջ ընկղմեցաք ու հիմա կը մսիք ինծի կարօտ:

Յէ՛յ... ծիւներ:

Ինչպէ՞ս գտնեմ ձեզ, բիբերուս մէջ պահ մտած ձեր ճերմակութիւնը ինչպէ՞ս տաքցնեմ այսօր իմ հեռուներէս: Ձեր բանաստեղծական աշխարհէն պատառիկ մը միայն կ'ապրի այսօր այս ճերմակ թուղթին վրայ: Ո՞վ կրնար գիտնալ, որ օր մը ձեր հեքիաքներուն տեղ՝ մանկութեան յուշերը պիտի փթթին միայն:

Յարահոս ձեր ճերմակութիւնը ո՞վ պահեց հեռո՛ւ, կորուսեալ:

Պարտք ունիմ ձեզի, ծիւնե՛ր:

Չմեռնե՛ր, դուք ճերմա՛կ, թւաւո՛ր: Կ'ուզեմ օր մը դարձեալ շռայլօրէն փարուիք ճամբաներու: Եւ թող ժամանակը՝ փաթթուած ոտքերուս մեր հին օրերու երգը երգէ: Կ'ուզեմ սիրե՛լ, տաքցնե՛լ, գրկել ձեզ:

Կարօտիս խաղալիքներով զարդարել մայթերը՝ մանկութիւն չունեցող բոլո՛ր ծմեռներուն...

Կ'ուզեմ ձեր առջեւ մերկանալ, իմ ողջ էութեամբս առնել ձեզ մէջս, մաքրուի՛լ, մոռնա՛լ, մաքրուի՛լ...

Ո՞ր էք ծիւնե՛ր...

Առէք զիս ձեր թւերուն տաք գիրկը: Ժամանակը չի՛ կրնար մոռնալ ճերմակ ճապատագիրը երազներուս:

Մեկնինք հեռո՛ւ, թող ո՛չ ոք գիտնայ ուր ենք:

Ճամբաները տխո՛ւր օրօրոցներ են առանց ձեզի, ուր ծառերը որբուկներու պէս կը տենչան՝ ծի՛ւն, ծի՛ւն:

Դուք իմ ոտնահետքերս գրկեցիք ու մեկնեցաք: Չէի՞ք գիտեր, որ պէտք ունիմ անոնց՝ շարունակելու համար ճամբաս, որ ձեզմէ կու գար եւ օր մը դէպի ձեզ պիտի վերադառնար:

... Ո՞վ ըսաւ, թէ ծիւները պաղ կը բերեն: Իսկ դուք անոնց ինչպէ՞ս մօտեցաք, ի՞նչ ըսիք, ինչպէ՞ս նայեցաք, որ ծիւներու լուսէ քնքշանքէն տաքնալու փոխարէն մսեցաք:

... Սառցալուլայէն կաթիլ մը կը կաթի հոգիիս մէջ՝ աշխարհը կը մաքրուի: Ո՞վ ըսաւ, թէ սառցալուլաները տանիքներէն մարդոց գլուխներուն կ'իյնան միայն...

Դուրսը մարդիկ ուրախ, զուարթ, անծիւն, անձմեռ ծմեռ է կ'ըսեն, կ'ուրախանան: Մինչ ես նստած եմ միմակ:

Գիշեր մը, հի՛մ, ծանօթ գիշե՛ր մը: Տօնածառին դիմացը նստած յուշերս կը ծամեն: Տօնածառին լոյսերը կը վառին, կը մարին, կը վառին, կը մարին: Կարմի՛ր, դեղի՛ն, կանա՛չ, կապո՛յտ...

Հոգիիս մէջ ճերմակ տարածութիւնները կարօտիս ծիւները գրկած կ'երթան...

Ո՞ր էք ծիւնե՛ր...

ԿՈՒՍՈՒԹԻՒՆ

Գիշերը սովորականի նման հեղձուցիչ էր: Անապատեն հով կը փչեր, որ խառնուելով ծովու խոնաւ շունչին՝ իբրեւ պերճանքի համար վճարուող տուրք կը ներկայանար քաղաքին: Բայց տուրքը ամենքին չէր, ինչպէս որ ամենքին չէին փայլքն ու պերճանքը: Շքեղութիւն՝ եւրոպական ու ամերիկեան չափանիշները գլողանցնող, ուր եւրոպական միտքին կը միանար արեւելեան երեւակայութիւնն ու դրամի ամենակալ ուժը: «Փողի քսակը բարձրացնում է մարդու հասակը...» հազարամեայ ճշմարտութիւնը կը հեգներ հեգ հայ բանաստեղծը, կը կրթեր սերունդներ...: Ի գո՛ւր: Թող մէյ մը հոս գար ու բաղդատէր սա «նորածին» քաղաք-երկիրը ու իր «հազարամեայ Նայիրին»...

Հոս տեղացիները հասակի կարճութեան կամ այլ բարդոյթ չունին: Չէ՛, բարդոյթը ունին երկնամերձ ըլլալու այն օրուընէ, երբ զարշահոտ բուրոյ իրենց հորերը յանկարծ դարձան մագնիսականութիւն, որ դէպի իրենց քաշեց, բերաւ ու դեռ կը բերէ արեւմուտքի մարդիկը: Անոնցմէ ոմանք ագռաւի սրատեսութեամբ՝ այդ հորերուն մէջ սատկած էշ (ուղտ պիտի ըսէի) տեսան ու անմիջապէս, գիրար կտցելով վրան իջան. ուրիշներ եկան անոնց ճաշկերոյթի սեղանատունն ու սեղանը յարդարելու, այլք եկան սեղանի մնացորդները առնելու, եկողներ ալ եղան՝ աւելցուք մաքրելու: Իսկ իրենք՝ ճերմակազգեստ «հրեշտակներ», իրենց քսակը սեւ հորերէն կախած՝ ուղտը միշտ սատկած տեսնելը նախընտրելով՝ մերկ ոտքը ծալելով կը բազմին երկնաքերներու երկինքներու մէջ, վստահ, թէ գէշին հոտը իրենց ոտքին պիտի բերէ բազուկ ու տաղանդ՝ իրենց անապատը *ճէննէթ* դարձնելու:

Վարուժան կը քալէր առանց գիշերային լոյսերու շառալները նկատելու: Ատոնք առաջին օրերուն է որ հմայեցին ու ապշեցուցին՝ Հալեպի տակաւին յամրաքայլ յա-



ՎԱՐՈՒԺԱՆ ՄԱՐՏԻՐԵԱՆ - «ԵՎԱ» - 1990

ռաջընթացեն ետք: Իր ծննդավայրը միջնադարեն ոտք նետեր է, բայց ոտքը մնացեր է օդը առկախ ու տակաւին չէ որոշած դնելիք տեղը: Հալէպի հանդարտ միջավայրը: Կարծես ժամանակն ալ իր յանձնառութիւնը վրայէն թօթուելով՝ կը նիրհէ հոն:

Կարօտի գունդ մը կը սեղմեր կոկորդը, երբ յիշէր ծննդավայրը, որմէ, կը թուեր, հեռանալէն ետք բնաւ ետ պիտի չնայէր: Կարօտ՝ անորոշ, անանուն բանի, որ իր գլխուն մէջ, չես գիտեր ինչու՝ կոյս բառով բնորոշուեցաւ: Հալէպը, եթէ ոչ ամենքին, գէթ իրեն թոյլ տուած էր (թէ՞ պարտադրած) տակաւին կոյս մնալ: Հետաքրքրական երեւոյթ՝ այդ բառը գրեթէ ելած է գործածութենէ: Ինչպէս կը պատահի, որ բառերը կը «մեռնին» (ուսուցչուհին «մեռնիլ» գործածած էր): Յիշեց անոր բացատրութիւնը՝ բառը գործածութենէ կ'ելլէ, «կը մեռնի», կը մնայ բառարաններու մէջ, երբ իր արտայայտած իմաստը կրող երեւոյթը կ'անհետի: Ուրեմն ինք կուսութեան երեւոյթը պահպանողներէն էր: Իր դարաշրջանը թեւ տեսականօրէն կ'ընդգրկէր Հալէպը, բայց գործնականի մէջ հոն տակաւին կը յամենային ուշ միջնադարու, կամ՝ «հայու բարոյական»ի մշուշոտ, խիստ առաձգական չափանիշներ: Կոյս բառը արդէն հոն ալ կը մեռնի, քանզի «երեւոյթը կեանքէն կ'անհետի»: Կուսութեան երեւոյթը: Իսկ այդ բառը հայերէն բառարանի մէջ նաեւ սուրբ, մաքուր, անարատ, անաղարտ, անբիծ հոմանիշները ունի լայն առումով: Ի՞նչ է մաքրութիւնը, մենք ի՞նչ մաքրութեան մասին կը խօսինք... «Հայու բարոյական» - կէս կտոր ամէն ինչը, կէս կտոր, ծեծուած, այլակերպուած, պոչն ու գլուխը իրարու անցած:

Երկու ամիս է արդէն Վարուժանի սա ճէն-նէթը գալուն: Տարիներ տեւեց, մինչեւ որ իր ալ դէմը բացուեցան սա դրախտի դռները: Հալէպ, դպրոցը աւարտելէ ետք ու համալսարանական օրերուն ալ, երբ տղոցմով կը հաւաքուէին, գործազրկութեան ու անորոշ ապագայի հարցը այլեւս չէին ալ քննէր. շատ խօսուած էր. բայց ամէն մէկը իր «ապագան շինելու» ուղղութեամբ գլուխ կը կոտրէր: Կը խօսէր կամ կը լռէր ու ուրիշ անգամ մը մէկ հոգի պակաս կ'ըլլար խումբէն:

Երանելի մը, որ կրցած էր դուրս փախչիլ, գործ գտած էր Ապու Տապի, Տուպայ, Զաթար, Պահրէյն... մէկ խօսքով՝ ինկած էր «ծոցը» նոր ու հրաշագեղ աշխարհի, նոր խոստումներու: Ու վերջին օրերուն Վարուժան ամայութեան մէջ էր. ո՞ր էն տղաքը. Գօգօն՝ Տուպայ, Մարտիկը՝ Զաթար, Ռազմիկը՝ Ֆրանսա՝ (Ա՛յ բախտ, ինչ ըսել է քոյր ունենալ. եթէ ինք ալ ունեցած ըլլար քոյր դուրսը ամուսնացած...), Հրանդը... հա՛, այդ խենթն ալ Հայաստան գնաց: Շատեր կասկածով նայեցան, վրան խնդացին: Զանիւնէ՛ր երագներով, տարիներու հաւաքած կամ հօրմէն ստացած դրամագլուխով «հայրենիք» գացեր ու քանի մը ամիսէն «մերկ» դարձեր էին, քիչ մը շփոթած, «հոն մեր տեղը չէ» ըսելով: Իսկ Աւօն գալէն ետք Նոյնիսկ ծայրայեղութեան մէջ ինկաւ. «Տղա՛ք, իրենց ըսի՝ «Դուք հայ չէք, դուք Արարատին արժանի չէ՛ք, հետս Հալէպ տանէի աւելի լաւ էր»: Տղաքը խնդացին: Իսկ ինք չփորձեց հայրենիք երթալ սոսկ տեսնելու համար, *թուրիսթի* հոգեբանութեամբ. կը վախնար որ հոգիին խորերը յամեցող պատրանքները կը փշրուէին:

Եթէ հոն մեր տեղը չէր, փոխարէնը բա՛ց էր լայն աշխարհը.... Եթէ Հալէպը «Երկիր»ը սեպենք, «Ծոցը» քսանմէկերորդ դարու Պոլիսն է, ուր կը պանդխտէն հայ երիտասարդները: Իսկ ինչո՞վ Հալէպը երկիր չէ: Նոյն անշանք անփութութեամբ ալ Երկի՛րը կ'արտահանէ իր գաւակները, իր «մարդուժը», որով հպարտ է: Ի՞նչ տարբերութիւն՝ արաբի՞ն, ամերիկացիի՞ն, թէ՞ ռուսի՞ն «ծոցը» կ'երթաս: Մե՛ծ տարբերութիւն. Մոսկուա ու Հրեշտակներու քաղաքը երկրորդ սերունդը ինքնակամ կը ձգէ շարքերը, հոս՝ քանի մը սերունդ դեռ շնչահեղձ կ'ապրի: Եւ ի՞նչ բանի ի խնդիր, ո՞ր տուայտանքներուն, ո՞ր յոյսերուն: Ո՞ր է այդ յոյսի արշալոյսը. ո՞ր՝ սերմնացանները վաղուան արշալոյսի. երբ սա լեզուն վերջնական լռէ ու Վարուժանն ալ դառնայ *Ֆարո՛ւճ*, առանց գիտնալու իր տափօրինակ անուան ծագումն իսկ...

Ամէն պարագայի ինք կը նախանձեր Հրանդին, որ հօր դրամով կրնար բախտը փորձել. ինք ալ պիտի ուզէր ի վերջոյ հաստատուիլ Հայաստան, բայց ինչպէ՞ս. ի՞նչ

գործ պիտի ընէր («տեղացիները» թոյլ պիտի տային...), ո՞ր պիտի ապրէր: Հայրն ալ յաճախ կը կրկնէր. «Հոս մեզի հաց չմնաց, մեր տեղը հոն է» ու աչքի տակէն իրեն կը նայէր, կարծես իրմէ հերոսացում կ'ակնկալէր. ուղղակի առաջարկ չէր ընէր, որպէսզի չստանար պատասխանը՝ «Ի՞նչ դրամագլուխով, հայրս...»: Ինք հերոսանալու, հայրենասիրութիւն խաղալու յիմարութիւնը գործել չէր կրնար. ինք հաստատ հողի պիտի կոխէ: Հաստատ հող՝ հայու ոտքերուն տակ...:

Ու ահա գտած էր «հաստատ հողը»՝ անապատի աւազը: Ծանօթին ծանօթ ոսկերիչը հոս մեծ գործ կը դարձնէ, Հալէպէն տղաք կ'աշխատցնէ: Խօսակցականը արաբերէնն է, կը հասկցուին, օտարներու հետ անգլերէն ալ կրնան: Բայց տես որ երկու պարսկահայերու խօսուածքը կը դժուարանայ հասկնալ...:

Ամենէն զուարճալին իր անունին խնդիրն է: Լեղի զուարճանք: Զրիստոնեայ թէ իսլամ՝ գրեթէ նոյն դժուարութիւնը կ'ունենան հնչելու: Նախ ամէն ոք կրկնել կու տայ, ապա կը հնչէ իր ուզած անունը: Ինք որ Հալէպէն արդէն վարժուած էր օտարներու բերանին մէջ մեր անուններու խաչելութեան, հոս մոլեգնօրէն կը մերժէր ընդունիլ որեւէ աղաւաղում. կը պնդէր ճիշդ ձեւը: Կը կարծէր՝ աղաւաղելով անունը՝ իր ինքնութիւնը կը խլէին: Ու հոն, ուր Յակոբը՝ Եագուպ, Անդրանիկը՝ Թօնի, Գեորգը՝ Ճորճ կը դառնար դիւրան, «օտարներու դիւրութեան համար», ինք կը յամառէր:

Երբ ուսուցչուհին առաջին անգամ իրենց դասարանը մտաւ ու անունները հարցուց, իրեն ըսաւ. «Հրաշալի անուն ունիս, տղա՛ս, պէտք է հպարտանաս. ինչպէ՞ս կը սիրես որ հնչուի՝ կրճա՛տ, թե՛ ամբողջական»: Ինք չարաճճի լրջութեամբ ըսաւ. «Ամբողջական, օրիորդ»: Ըրածը կատակ էր, ընկերներուն նայեցաւ ու խնդացին: Բոլորին ալ անունները կրճատուած էին. իսկ աղջիկներու անունները՝ օտարացած: Ուսուցչուհին ըսած էր. «Ձեր ազգային անունները արժանապատուօրէն կրեցէ՛ք, անոնք ձեր հնագոյն արմատներէն կու գան, նորոյթի հետեւելով՝ շուն ու կատուի անուն մի՛ դարձնէք»: Ետքը,

ինք, կարեւորութիւն չտալով ընկերներու խնդուքին, կէս կատակ-կէս լուրջ կը ստիպէր՝ «Շուն ու կատուի անուն չէ՛, մարդու անուն է, լմա՛ն ըսէք»:

Հոս ալ նոյնը ընել կը փորձէր: Կը պնդէր՝ Վարուժան: Չէ՛, կարենալ Վարուժան ըլլալու համար պէտք էր հաստատուն հողի վրայ կենալ, պէտք էր կարենալ չբեկուիլ ոսկիի սարերուն առջեւ ու բանաստեղծի պէս հարուստ գգալ. կրնա՞ր ինք ըլլալ բանաստեղծ. չէր ծնած բանաստեղծ. ուրեմն այլ, այժմեական ճամբայ պէտք է ընտրէր՝ պէտք է բարձրանար. իր անուան մեծ տերը բարձրացաւ իր ցեղին հանճարով. այն ատեն հանճարը բարձրութիւն էր: Իսկ այսօրուան բարձրացումին երազը մէկ գագաթ ունի՝ ոսկի: Այն ատեն ոչ ոք կը համարձակի աղաւաղել իր անունը ու նոյնիսկ չինացին զայն ճիշդ կը հնչէ: «Փողի քսակը...». ինչո՞ւ մեզի գրքային դաստիարակութիւն տուին: Շուրջդ դիտե՛՛ր դրամի այս վազքէն շունչդ կը կենայ: Վեր կամ վար կայ միայն: Վերիններէն իւրաքանչիւրը իր հասկցած ձեւով կը վայելէ ու չի նայիր վար: Վարինները վեր կը նային՝ կամ ակռայ կրճտելու, քննադատելու զանոնք, կամ անոնց շարքը մագլցելու համար: Ու միակ նպատակին հասնելու այս գարշելի վազքը իր ամենէն քստմնելի դրսեւորումներով այլեւս բացայայտ է արեւին տակ: Ահա թէ ինչու հոս եմ ես, ահա թէ ինչու հոս է աղջիկը...»:

Կրկին ներսը բան մը գալարեցաւ ու խրեցաւ կոկորդը: Ընկերոջմէն բաժնուեցաւ գրեթէ գծողած: Ան կը խնդար, չէր հաւատար իր յուզումին ու այդ աւելի կը կատղեցնէր զինք: Իսլամ տղայ մըն էր Հալէպէն. Հալէպը կապած էր զիրենք: Միասին զուարճութեան տուն մը գացին: Ամբողջ օրը չորս պատերու մէջ նստած աշխատելէ զատ երիտասարդ մարդը ուրիշ բաներու ալ կարիք ունի:

Երբ երկուքով մտան արդէն ծանօթ տունը, դիմաւորութեան ու ընկերը անհետացաւ դուռի մը ետին: Ինք կը նայէր մօտեցող աղջկան, որ ընկերը իրեն «գիշած էր»: Ան քիչ մը գիտով էր: Ուսերուն հագուստ կար ու չկար: Տարօրինակը այդ չէր՝ Հալէպի փողոցներու մէջ ալ պարկե՛շտ աղջիկներ յաճախ նման



հագուածքներ կ'ունենան, առանց անոր դերը հասկնալու, առանց այս դերին մէջ ըլլալու, նոյնիսկ եթէ իսլամ տղաք իրենց ականջին տակ սահմակեցնող նկարագրութիւններ շնչան....:

Այդ աղջիկը արտակարգ շպարուած էր (նոյնն է նաեւ հոն...): Այրուող դէղին իր մազերը հակասութիւն կը ճչային սեւ յօնքերուն ու աչքերուն հետ: Յոգնած ու կեանքէն գանածի արտայայտութիւն ունէր, որ թաքցնել ալ չէր փորձեր: Երբ առանձնացան սենեակի մէջ, ու ինք, մարդկայնօրէն կապ ստեղծելու բառեր կը փնտռէր, աղջիկը արդէն վրայէն նետած մերկութիւնը ծածկող լաթը ու նստած անկողինին եզերքը՝ զինք կը դիտէր: Անոր հայեացքը շփոթեցուց. պատճառը ամօթխածութիւնը չէր. աղջկան աչքերուն մէջ ծանօթ բան մը կար.

- Զա՞յ ես,- հարցուց ինքնաբերաբար:

Աղջիկը ծուլօրէն պատասխանեց անգլէրէնով.

- Զեզի ի՞նչ տարբերութիւն:

- Շատ մեծ տարբերութիւն,- ըսաւ ձայնը քիչ մը բարձրացնելով. ի՞նչ կ'ընես հոս, ուրիշ գործ չգտա՞ր:

- Ո՞վ ես, որ ինձ քարոզ ես կարդում. քե՞զ պիտի հարցնեմ անելիքս: Էնպէս ես խօսում, կարծես եղբայրս ես,- ըսաւ այս անգամ հայերէն, երեսը ծռելով:

Ու շարունակեց անտարբեր ծամել իր ծամօնը:

- Ես քեզի հետ գործ չունիմ, հայ աղջիկ ես ու այս աղտոտ տեղը...,- ըսաւ ու կը պատրաստուէր ելլել, երբ աղջիկը աշխուժացաւ:

- Ախր ի՞նչի ես գնում, չհաւանեցի՞ր ինձ. փողդ ուրիշի տալու տեղ՝ ինձ տուր:

- Զեզ հաւանեցի, գործդ չհաւանեցի. ես հոս հայ աղջկայ չեմ կրնար դա՛նալ:

- Ինչո՞ւ, ի՞նչ է եղել հայ աղջկան,- տակաւին շարունակեց աղջիկը, իր բարեմասնութիւնները առաւել ցուցադրելով:

- Զոյրս, աշխարհը գործ չկա՞յ, գնա փողոց մաքրէ, վաճառող եղիր, հագար ու մէկ բան: Զեզի հաճելի՞ է սա վիճակդ:

Աղջիկը պահ մը լռեց, ապա ըսաւ շատ ցած ու ներքին ձայնով. կը թուէր թէ ինք իրեն հետ կը խօսէր.

- Ի՞նչ կարող եմ անել. դու ինձ քո տուն կը տանե՞ս. տէ՛, ասա՛, կ'օգնե՞ս.- քիչ-քիչ ձայնը կը բարձրանար,- ո՞վ պիտի պահի Երեւան մնացած երեխուն ու մօրս, դո՞ւ, քո ա՞զգը...:

Ան ուսերը կախ՝ արցունքը կը սրբէր, երբ ինք կամացուկ ելաւ:

Երբ ելաւ, այդ տունը անգամ մըն ալ ոտք չդնելու որոշումով, խառնակ միտքերը կը պարէին գլխուն մէջ: Կ'ուզէր ինքզինքը համոզել, թէ իր հարցը հայ աղջկան՝ հնագոյն արիեստը բանեցնելու մէջ չէր: Ո՞ր ազգը սուրբերէ կազմուած է: Զարցը լայնքով ու խորութեամբ մեծ վերք մըն էր իր ճակտին տակ: Կարծես աշխարհով ցրուած հագարաւոր հայեր կը հաւաքուէին, իրենց այլազան վիճակներով ու կը միաւորուէին այս աղջկան մէջ ու իր աչքերուն կը նայէին: Կը գայրանար իր յուզումին համար: Նոյն ատեն հոգիին խորը դանակ մը կը խառնէր՝ իր փախուստը յիշեցնելով: Բայց ի՞նչ ըներ: Իր քոյրն էր այդ անծանօթ աղջիկը: Ինչո՞ւ տանջանքը հայերէնի չմեռնող բառերէն է.

ինչո՞ւ մեր սերը առ հայ մարդը, հայրենիքը, տաժանագին է. ծնած օրեն կը կնքուինք տառապանքի աւազանին մէջ. նոյնիսկ մեր հաճոյքի պահը թոյնով շաղախուած...»:

Իսկ արաբ ընկերը գնուած «սիրոյ» հաճոյքէն երանելի՝ կասկածեցաւ, թէ հայ աղջիկը իրեն ծանօթ էր: Ան ինչպէ՞ս հասկնար, քանի որ ինք ալ արաբ աղջկան մը հետ էր...: Ինչո՞ւ ինք ալ անոր անհոգութիւնը չունենար: Յիշեց, թէ ինչպէս, երբ տողանցքերու, երթերու առիթներով կը ստիպուէին տեղացի բազմութեան մէջ գտնուիլ՝ իրենց ուսուցիչները մեծ տղոց կը շնջային. «Տղա՛ք, մեր աղջիկները շրջապատեցէք, ատոնց մի ձգէք մօտենալ»:

Մե՛ր աղջիկները. այն ատեն անոնք մեզի քոյրերու տեղ էին: Հոս ալ այդ կո՛յս պարզամտութեամբ մօտեցաւ, բայց յետոյ եկաւ անդրադարձը: Նախ՝ հիմա մեր աղջիկները այլեւս դադրած են մեզի համար այն օրերու սրբութիւնը կրելէ. հիմա միւս ծայրայեղութեան մէջ ենք. մեզմէ շատեր անոնց հետ կը վարուին շնական ձեւով ու կը ստանան նոյնը. սա յառաջդիմական քայլ է. ծիծաղելին նախկին վերաբերումն էր: Հիմա հայուիին ալ ազատագրուած է ու բոլոր ազատագրուածներու պէս՝ ազատ է նաեւ պ... ըլլալ: Ինչո՞ւ՝ ոչ: Որմէ՞ աւելի կամ պակաս է: Ու ալ կը բաւէ *տէտէական* մտածումներով ծիծաղելի ըլլալ:

Այնուհանդերձ չէր հանդարտեր. կոկորդը կը շարունակէր սեղմուիլ, երբ կը յիշէր աղջիկը, ի վերջոյ՝ կտոր մը հացի համար սա «դրախտ»ը եկած: Սիրտը կը խառնուէր: Ու սեփական փոքրոգութեան զգացումը կը ճնշէր: Յանկարծ յիշեց ուսուցչուհին: Ան շատ ազդած էր իր կերտումին, բայց հո՞ս ալ...: Օր մը ան Եղեռնի մասին կը խօսէր. կ'ըսէր, թէ Եղեռնը կը շարունակուի մինչեւ օրս ու մեր շատ ու շատ հոգեբանական, տնտեսական ու այլազան դժուարութիւնները տակաւին կրնան անոր հետեւանքները սեպուիլ: Ապա ըսաւ, թէ Արցախեան շարժումի առաջին օրերուն իսկ ազրաբեյ-ճանցիներ նոյն ոխով ու շնականութեամբ կոտորեցին մեր մանուկները, բռնաբարեցին մեր աղջիկներն ու հարսները...

Յանկարծ, ցաւին մէջ՝ յիշողութիւնը ժպիտ մը բերաւ Վարուժանի դէմքին: Ուսուցչուհին լեղի ոգեւորութեան գագաթին էր, երբ տղոցմէ մէկը կտրեց անոր խօսքը հարցումով.

- Օրիո՛րդ, ի՞նչ է բռնաբարելը:

Խոշոր տղայ մըն էր ու... չէ՛, ան ալ ընդամենը մեր լեզուն չէր գիտեր:

Ուսուցչուհին լռեց. մէկ վայրկեան միայն նայեցաւ անոր, ակնյայտօրէն՝ ստուգելու համար հարցումին լրջութիւնը (նոր սերունդ, տասնվեց տարեկան...), ու գագաթին մնաց: Շփոթը արագ ծածկեց առաւել լրջութեան տակ եւ փոքր ինչ աւելի բարձր ու յստակ ձայնով, այս անգամ առանց մէկու մը դէմքին նայելու, ըսաւ հատիկ-հատիկ.

- Բռնաբարել՝ ուժով ուզածը ընել տալ. այս պարագային՝ կամքին հակառակ սեռային կապի մէջ մտնել մէկու մը հետ: Ապա, զգալով որ դեռ յստակ չէ՛ եզրափակեց ժամանակակից հայերէնով՝ Sex: Ու անցաւ իր նիւթին:

Տղոց դէմքերը, որոնք պահ մը, հարցումին հետ, հեզմանք կամ հետաքրքրութիւն կը պարզէին՝ մէկէն ծանրացան. լրջացան. թեւ աւելի զգացին, քան թէ հասկցան: Արդէն երբ ուսուցչուհին ոգեւորուէր բանով մը՝ աւելի բարձր բառապաշարով կը խօսէր. իրենք աւելի ըսուածին ոգին կը հասկնային: Անոր ալ ուզածը այդ էր:

Ու յիշողութեան հետ՝ գայրոյթի պէս բան մը ծնաւ իր ուսուցչուհին դէմ. շատոնց սկսած էր անոր հետ մտովին վիճիլ: Որքան կեանքը կը փշրէր իր երազները ու հեռանկարի անորոշութիւնը կը թանձրանար, այնքան աւելի յաճախ կը վիճէր ծնողքին հետ, բայց յատկապէս ուսուցիչին հետ: «Ի՞նչ կու տայիր մեզի. իտեա՛լ, ազնուութի՛ւն, ազգային արժանապատուութի՛ւն, հոգեկան մաքրութի՛ւն...: Ո՞ր, որո՞նց մէջ. ի՞նչն է մաքուրը, ո՞ր է մաքուրը, ո՞վ է սահմանողը ու գնահատողը: Ազնուութիւնը այս է. վարպետս առած է անձնաթուղթս, քսանմէկերորդ դարու ստրուկի կարգավիճակի մէջ եմ. կը բանեցնէ ուզածին չափ, կը վճարէ ուզածին չափ. ազնուութի՛ւն...: Ի՞նչ ազգային արժանապատուութիւն. տակաւին բան մը



պատներու մէջ ու իր պարզունակ յետամնացութեան վերէն կը նայէր: «Վստահօրէն, ձեզմէ ոմանք ալ անոր կարծիքին եմ: Միայն շատ կ'ուզէի իմանալ՝ իսկ պիտի ուզէի՞ք որ ան ձեր դուստրը կամ քոյրն ըլլար: Դարձեա՞լ անտարբեր պիտի մնայիք. ո՞վ գիտէ՞ դեռ ի՞նչ առաւելութիւններ կու տայ զարգացումը...: Դո՛ւք, որ կը կարծէք քրիստոնեայ ըլլալ, կը յիշէք հարկաւ ձեզի տրուած բանալի-խօսքերէն մին՝ «Ամէն ինչ որ կ'ուզէք մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց այդպէս ըրէք»: Միայն սա աղամանդեայ բիրտեղութեամբ խօսքը

մնա՞ց. «ջուրն եկեր, ջաղացքն է տարեր, դուն դեռ չախչախը կը փնտռես»: Ինչո՞ւ ժամանակավրէպ դաստիարակութիւն տուիք մեզի: Այս աշխարհին մէջ արժանավայել ապրելու համար միայն մէկ ճամբայ կայ մեզիպէսներուն համար՝ խաբել, գողնալ ու բարձրանալ: «Կեանքն է պայքար՝ գոռ ու դաժան, ճգմի՛ր մարդուն ու թռի՛ր վեր՝...», ահա ճշմարիտ խօսքը, ճի՛շդ դաստիարակութիւնը: Այն ատեն է որ կը ստանանք յարգ ու մեծարանք: «Յայ աղջիկները տաճիկին ձեռքը չիյնալու համար գետը կը նետուէին...»: Ահա մեր առաքինութեան դասը: Իտեալական դաս, յուզում, արցունք: Կ'երեւակայեմ՝ այդ ալ ըսէի աղջկան, որ... մա՛յր էր հաւանաբար սեւագանգուր ու պայծառ աչուկներով մանուկի մը... Կրնայի՞ր առնել տունս տանիլ զինք: Դուք մեզի կուսութեան քարոզ կը կարդաք. կուսութիւն՝ հաւասար է անբիծութիւն, մաքրութիւն, անաղարտութիւն եւ այլն. չէ՞ք կարծեր, որ «կոյս-մաքուր» ըլլալու համար ջուրի դրամ պէտք է ունենալ, կամ գէթ հայրական ժառանգութիւն՝ բաղնիք»:

Վեճի մտած էր բոլոր անհասցէ անձանօթներուն դէմ, որոնք կրնային հակառակը պնդել: Չէ՞ որ հակառակը խորհողներ ալ քիչ չեն, այն զարգացած ամերիկահայուն նման, որ շատ բնական կը գտներ հայուհիներու մարդասէր գործունեութիւնը անա-

կրնար աշխարհը փրկել, եթէ անսալ ուզէինք...: Եթէ սա խօսքը կրկին քարոզելու ելլեմ՝ վստահօրէն կը քարկոծէք զիս ալ, կամ խենթանոց կը դնէք: Չեր հաշույն կու գայ մակերեսներուն խաղալը՝ ազնուութիւն, մարդասիրութիւն, հայու ու մարդու բարոյական: Չէ՞, մոռնալը աւելի լաւ է. քանզի ճահիճը դիւրին է»:

Որոշեց՝ անմիջապէս նամակ պիտի գրէ ուսուցչուհիին, զիրենք կեանքին չպատրաստելուն համար: Ապա յիշեց անոր դէմքը ու տատամսեցաւ. ի՞նչ թող ըներ. ան մարդ կը կրթեր. մեղաւոր է, որ մեր գլխուն վերել առաստաղ չունինք ու ամէն հովի տակ այլ պար կը պարենք:

Յանկարծ ետեւէն կանչ մը լսեց ու մէկը բռնեց թելը.

- Ահլա՛ն Ֆարուճ,- ընկերներէն մին էր: Դարձաւ ու անսպասելի կատաղութեամբ հայերէնով պոռաց.

- Վարուժա՛ն ըսէ, տխմա՛ր... ու զարմացած տղուն հայեացքին տակ քալեց արագ-արագ...:

Անապատի տաք հովը աւագէ համբոյրներ կու տար ճակատին:

ՄԵԿԵՆԱՍԸ

Գրած նոր վեպին անտիպ մնալը, մղձաւանջ պիտի դառնար արձակագիր Գիրգորին: Ան համոզուած էր, թէ այս գործը կոչուած էր իր լաւագոյն ստեղծագործութիւնը ըլլալու: Միթէ հինէն ի վեր, ամէն գրող այդ երազ-գառանցանքը չէր ապրած եւ նման հիւանդագին պատրանքներ չէր սնուցած:

Ի դէպ, երէկուան լակոտը ու միամիտը չէր գրող մեր բարեկամը: Սա կեանք կոչուածը իր լիութեամբ ապրած, լաւն ու վատը ճաշակած, չկար երեւոյթ մը կամ առանցքային դէպք մը, զոր զգացումներու պրիսմակէն անցնելով խորաչափած չըլլար, հանդիսանալով իր սերունդի հարազատ, հնչեղ ձայնը:

Եւ այժմ իբրեւ կամաւոր զոհ՝ զինք խեղդամահ ընել փորձող ամերիկեան ջրապտոյտին, անկէ ելք կը փնտռէր, կարապի իր երգը՝ իմա՝ իր նոր վեպը հրատարակել տալու եւ դեռ յամեցող բուռ մը հաւատարիմ ընթերցողներուն հրամցնելու, առանց ինքնախաբէութեան ու պատրանքներու զոհ երթալու: Ժամանակակիցներուն կողմէ որպէս վաւերական գրիչ ճանչցուած գրողը, չէր յաւակներ սփիւռքահայ արձակի բարձունքները յաղթահարած ըլլալ եւ իր այս նոր գործով ակօսել զայն: Թոշակառուի ներկայ վիճակը, կամ ալ շատ վատ տնտեսական կացութիւնը, զինք կը մղէին անգամ մը եւս փորձել, բերանէն ու դէղերէն կտրելով, նոր հատոր հրատարակելու սխրանք-մահատակութիւնը:

Ներկայ պայմաններու մէջ հայերէն վեպ հրատարակել յիշուի էշ-մահատակութիւն էր: Վերջին տասնամեակին, վիպագիր Գիրգորին այնքան համակրած, իտէալացուցած կառոյցները, հայ ընթերցողին ճաշակը այլանդակելով, զայն կը մղէին Տեղասպանութեան թեման տղայական յաճախանքի վերածելու ու իբրեւ նախասիրուած գրական սեռ, ամբողջ սերունդի մը գեղագիտական ճաշակը տրորել-խաթարելու: Հետեւեալները. ուժացած, «շիշ-քեպապ» բուրոյղ հայերը, տարասփիւռ իրենց հայրենակիցներուն աքիլեսեան կրունկի վերածուած ողբերգութիւնը շահարկելով, մէկը միւսէն աղմկոտ Տեղասպանութեան տաղտկալի թեմայով վեպեր եւ յուշեր կը հրատարակէին եւ իբրեւ «պեսք-սէլլըր» կը կերցնէին նոր սերունդին: Կարծես Եղեռնի կողքին, սփիւռքահայը յուզող ուրիշ մարդկային տագնապներ գոյութիւն չունենային: Իսկ գեղագէտ հայ գրողներու քանի մը սերունդ, խաթարուած ճաշակներու հետեւանքը պիտի կրէր:

Վիպագիր Գիրգորին նման այլախոհներ, վարանումով կը փորձէին հոսանքին դէմ թիավարել ու մօտաջող հայ ընթերցողներուն իրաւ գրականութեան գեղագիտական ճաշակ փոխանցել, անոր համն ու հոտը վերադարձնել: Անգուստ հոսանքին դիմաց, անոնց փորձերը դատապարտուած էին ձախողութեան:

Հայերէն գիր-գրականութիւնը, անկախ իր շօշափած համամարդկային նիւթերէն, դարձած էր չընթերցուող մահամերձ լեզու: «Ժամանակակիցներու մօտ տիրող մտաւորական բոպիկութիւնն ու ճաշակի խաթարումը, արդար չէր գրողներուն ու մտքի մարդոց վերագրել», իր անկիւնէն կը խորհրդածէր Գիրգոր կոչուած ըմբոստը, ծառանալով տիրող ընդհանուր անտարբերութեան դէմ:

Նման քայքայիչ ու մանաւանդ՝ վիատեցնող մտորումներու յանձնուած պահերուն, վիպագիր Գիրգոր սկսած էր գլուխէն հարուածուածի, ցնդածի տպաւորութիւն թողուլ շրջապատին վրայ, յաճախ անկումային միտքերու յորձանուտին տակ ջղային աւելորդ ու անհարկի տագնապներու յանձնուելով: Շուրջը տիրող դատարկութեան մէջ, ոչ ոք կը փորձէր, ճիգ կ'ընէր ցաւերը խորաչափելու, մաշկէն անդին՝ թաքուն խոհերը թափանցելու:

Քառասուն տարիներու իր կողակից Աշխէնը, ականջ ու կարեւորութիւն չտալով ամուսնոյն տագնապներուն, քիթին տակէն՝

- *Պիրէ մա'րդ, նորէն քեզի ինչ կ'ըլլայ կոր,-* կը մրթմրթար, ու ամուսնոյն «տէնկսիզութիւնը» կը վերագրէր գրողի անոր դիւրաբորբոք խառնուածքին եւ զայն զգաստութեան հրաւիրելու մտօք կ'ըսէր. «Դուն ե՞րբ պիտի համոզուիս որ հայերէն գիրք կարդացող չկայ...»

* *
*

Ապագայ իր հատորին մեքենագրուած պատճենը ամերիկահայ հրատարակիչին մօտէն շալկելով, կործանուած տրամադրութեամբ տուն դարձաւ Գիրգոր: Սրտի տագնապ պիտի ունենար: Ջղային բիրտ շարժումով մը գրասեղանի մահոկանիէ փայլուն մակերեսին խփեց թուղթերու տրցակը, ինք ալ հոգեպէս զգետնուած ստացած մերժողական քաղաքավար պատասխանէն:

Չէր ալ կրնար այսպանել հրատարակիչը:

Տասնամեակներով, հայ մշակոյթին ծառայած այս տղան եղած էր իր գիրքերու հրատարակիչն ու ինքզինք խրախուսողը: Չար բախտէն, այժմ շուկայական պահանջներն ու անցեալի ակնկալութիւնները փոխուած էին: Երկլեզու բառարաններն ու խոհանոց-որկորի նուիրուած գիրքերը ի պատուի էին: Իրաւ գրականութեամբ հետաքրքրուող գրեթէ չկար, բացի դեռ բուռ մը յամառողներէ: Փոխանակ յուսահատելու, վիպագիրը սկսաւ հաւանական մեկեմասներու եւ մշակութային միութիւններու ցանկը կազմել եւ ծանօթի ու անծանօթի միջոցաւ, գրաւոր ու բանաւոր դիմումներ կատարել, ընթացքին՝ քողարկուած ակնարկութիւններով իր նոր գործի արժանիքներուն մասին, շեշտելով անոր բերելիք նորութիւնը սփիւռքահայ գրականութեան:

Դիմումները ապարդիւն մնացին կամ եղան խուսափողական, երկդիմի պատասխանի արժանացան: Շատերն ալ դրամական խոստումի փոխարէն՝ ձրի խելք կը բաժնէին անյուսութեան խորխորատը գլտորող տաղանդաւոր իրենց հայրենակիցին:

- Սասունցիին միջոցով միլիառատեր Գրգորին դիմեցէ՛ք... եղաւ ամենէն աւելի կրկնուող խորհուրդը:

- Կը թելադրենք որ... Վեհափառներուն գրէք, հեռաձայնի մէկ հարուածով մեկեմաս կը ճարեն:

- Առաջնորդները անոնցմէ ետ չեն մնար: Շա՞տ է միթէ եթէ տաղանդաւոր հայ գրողի մը մէկ գործը հրատարակեն... անարիւն գործերուն մսխուած գումարներու կողքին:

- «Մեկտիւնեցի» գրական մրցանակին դիմեցէ՛ք...

- Ռուսիոյ հայերուն, անոնց աչքը աւելի կուշտ է...

- «Ապրիլ գրատուն»... այդ տղուն Աստուածը ուրիշ է:

- Ուրիշ Տեմիրճեանին հետ խորհրդակցի՛ր, հասկցող աղջիկ է:
 - «Պերճ» գրատան մասին մտածեցի՞ք, ազնուական տղայ է:
 - Հայրենակցական միութիւնները զօրաշարժի ենթարկեցէ՛ք:
 - Մշակութային միութիւններուն գործը ի՞նչ է... թող իրենց յետոյքը շարժեն քիչ մը...

- Հա, ճիշդ ճակատին զարկիք... Հայ Դատին դիմեցէք: Ձեր ըրածն ալ, վերջին հաշուով գիր-գրականութեան ճամբով ազգապահպանում է:

Բարեդէպ մտածողութենէ ու գնդակը դիմացինի դաշտը ղրկելու ճարպիկ եւ ակնյայտ մարտավարութենէն հիասթափուած, վիպագիր Գիրգոր գրաւոր իր դիմումներուն տրուած վերացական ու երկդիմի, այսինքն՝ «մեզի մի՛ մօտենար ալ, ճէճէճնէճ եղի՛ր, թուրքին կամ ազրպէյճանցիին քովը գնայ»-ի նման պատասխաններ կարդալով, կամ հեռաձայնային տհաճ թելադրանքները տասներորդ անգամ լսելէ ետք, պահ մը լրջօրէն մտածեց հրկիզել, կամ բզիք-բզիք ընել անտիպ գործը ու շնիկին վիզէն բռնած տանիլ եւ օր ցերեկով միզել տալ ազգային կոչուած կառոյցներու անհիւրընկալ, վանողական ու հակամշակոյթ բուրող պարիսպներուն վրայ ու հրաժարիլ հայութենէ: Սոռնալ հայ ծնած ըլլալը: Տարբեր հարց, թէ մարդ ինչպէ՞ս կրնայ իր արիւնէն ու էութենէն հրաժարիլ:

Խենթութեան նոպաները կը բխէին անկումային իր հոգեվիճակէն, որոնց մղումով ատակ էր ամէն ծայրայեղութեան: Իր ժողովուրդի ազգային դիմագիծը խաթարողները պատին տակ շարելով գնդակահարել: Կը մտածէր որ «դեռ տեռորին ալ գէշ անուն տուած էին»...

Սակայն, կոնծած քանի մը բաժակ աժանագին օղիի պատճառած ստամոքսի սուր ցաւերու ընդմէջէն կը վերագտնէր անբուժելի լաւատեսութիւնը եւ յոյսի լուսայեղ կամուրջներով կը կապուէր կեանքին, կը տիրէր զգացական աշխարհին:

Վիպագիր Գիրգորին յարափոփոխ հոգեվիճակը, դիտողին վրայ ցնդածի եւ թռցուցածի տպաւորութիւն կը թողուր, մէկը՝ որ գրող-արուեստագէտի փքած իր եսին գերին դառնալով, չտեսնել կը ձեւանար ժամանակակիցներուն գիր-գրականութեան հանդէպ ցուցաբերած անտարբերութիւնն ու մակերեսայնութիւնը:

Ձինք խենթի տեղ դնողներ ալ կային. «գի՛ժ Գիրգոր»: Ազգ ու բարեկամներ յաճախ, անոր անմիջական ընտանիքի անդամներուն բազմիմաստ ակնարկութիւններ կ'ընէին, թաքնուելով քաղաքավար տարազներու ետին, զինք գծանոց սահեցնելու, կամ լաւագոյն պարագային՝ իրեն շնորհ ընելու պէս՝ անվնաս խենթերու անկելանոց:

- Շաքարը կարծես գլխուն զարկած է...,- կը փաստարկէին անոնք, ընթացքին՝ բազմիմաստ ակնարկներ փոխանակելով:

- Ա՛յ մարդ, սա անկելանոց ըսուած տեղը դրէ՛ք, դուք ալ կը հանգչիք, ինք ալ,- կը շարունակէին անոնք սրտցաւ շեշտով:

Վիպագիր Գիրգորին հոգը չէր, գծանոցի տեղ, թող զինք դժոխք ու սատանայի գիրկ ուղարկէին... միայն նոր վէպին հրատարակութենէն ետք: Արդէն ամէն առաւօտ նոր-նոր ցաւերով կ'արթննար ու օրը իրիկուն կ'ընէր: Ֆիզիքական ամէն շարժում ցաւ ու տառապանք կը բերէին իրենց հետ: Մարմինը՝ ցաւերու ամրոց:

Խորքին մէջ, սա կեանք կոչուածէն համ ալ առած չունէր: Թաւալող փոշեթաթախ օրերը, իրենք իրենց մէջ տաղտկալի, աղմկալի, անհրապոյր դարձեր էին:

Համատարած աղմուկ ու մտմտուք: Ապրելու կիրքը կը վերագտներ, շնչել կը սկսէր ստեղծագործելու պահուն, գեղեցիկին մատչելու եւ գրածը ամէն գոյնի մարդոց հետ կիսելու: Աչքերը չփակած իր նոր վէպը կը փորձէր իր հասցէին հասցնել: Մոռնալով որ՝ հասցէատէր չկար, կամ լաւագոյն պարագային, հոգեւորքի մատնուած անճանաչելի մէկը դարձեր էր: Բուն հոգեւորքը, հայ գրողը կ'ապրէր, թելին տակ՝ հայ գիրքը: Աչքերը յաւիտեան չփակած թոյլ տային որ «հայ *օղլու* հայ» տպարանի մը մէջ հայատիպ թուղթի հոտով ռունգերը, թոքը լեցնէր, լիանալ, հինէն հասնող կարօտի գգուանքով շոյէր լաթակազմ նոր հատորը որ կը ծներ մանուկի տակէն, սեղմէր կուրծքին եւ գիշերը մէկ շունչով, օտարի աչքերով անկողինի մէջ կարդար զայն, ապա կոպերը ծանրանալէ ետք, զայն անկողնի կից սեղանիկին զետեղէր, լուսամուտը խաւարելէն ետք ալ գուրգուրոտ ձեռքը անոր կպած պահելով ի վերջոյ հանգիստ քուն մտնէր:

Ատկէ ետք հոգը չէր թէ գիրքերը գրատուններու մէջ ծախուէ՞ր են, գրախօսականի արժանացե՞ր են կամ ոչ: Թերեւս յամեցող հին ընթերցողներէն քանի մը խենթեր, հայ գիրքի կարօտով լեցուած, խուժէին «Սարդարապատ» կամ «Ապրիլ գրատուն», իրենց սրտին սեղմելու իր նոր հատորը, ու տագնապով բանային զայն, խոր շնչին եւ տողերու ընդմէջէն փորձէին կարդալ, հեղինակին հետ փոխադրուելու համար իրենց ապրած իրականութեան միւս կողմը, դէպի կեանքի եւ յաւերժութեան բոլորովին տարբեր շերտերն ու տարածքը:

Բարեդէպ մտածողութեամբ շրջանակուած իր պատկերաւոր դիպաշարները կոչուած էին զառանցանք ալ մնալու:

Ի վերջոյ, յոգնեցաւ վասն մեկեմասի գլուխը պատէ-պատ զարնելէ: Կիսամըտաւորական ու թերթերու աշխատակից, իրեն ծանօթ ճարպիկեանին դիմեց: Խնդրելու պէս պաղատեցաւ որ անտիպ վէպին մեկեմաս ճարէր:

- Դուն ծանօթներ շատ ունիս, երեք-չորս հազարի պիտի նային տպագրութեան ծախսերը...

- Մոռցի՛ր, հայ գիրքին դրամ տուող չկայ, խօսքը մեր մէջ, հայերէն կարդացող ալ չմնաց...

- Արեանս երակները բացի այս գործը երկնած պահուս...

- Վախճամ, տիրող տնտեսական տագնապի եւ ընթերցողներու նօսրացման պատճառով, ասկէ ետք հայ գրողը արեան իր երակէն աւելին ստիպուած է բանալ,- յարեց միջնորդ ճարպիկեան բազմիմաստ, զգուշի ժպիտով:

- Հերիք չէ՞, ողջ կեանքս զոհեցի հայ գիրքին ու գրականութեան...

- Զգացական չդառնանք:

- Ուրախութենէս պիտի երգեմ...

- Սիրտդ ամուր պահէ, Գիրգոր ջան, տասներորդ հատորիդ հրատարակութիւնը ապահովուած համարէ:

- Ի՞նչ ըսել կ'ուզես...

- Բժիշկ բարեկամ մը կը խոստանայ մեկեմաս կանգնիլ նոր հատորիդ, եթէ կարենաս բերանդ գոց պահել...

- Եղածը գրական գործի մը մեկեմասութիւն է, պետական գաղտնիք չէ:

- Ամերիկա պատերն ալ ականջ ունին եւ ձեզի նման միամիտները նօթայով կը զռացնեն:

- Չեմ ուզեր վտանգաւոր գեփիներու մէջ մոլորիլ...

- Ամէն բարերարութիւն իր գինը ունի... դուն քու առողջութենէդ լուր տուր, մեկեմաս մեր բարեկամը ամէնէն առաջ քու առողջութեամբ հետաքրքրուած է:

Զինք վստահեցուցի թե հակառակ տարիքիդ դեռ «պոմպա»յի պես ես:

- Ո՛ղջ մնաս, - պատասխանեց վիպագիրը, ու անելցուց, - գիրքիս հրատարակութեամբ ցաւերս կ'ամոքին... Ամէն ցաւ մարդուս հոգեկանին կապուած է, - միամտօրէն փիլիսոփայեց վիպագիր Գիրգոր, - սակայն երբէն ի վեր խեղճ գրողի մը առողջութեամբ սկսած են մտահոգուիլ նորին վսեմութեան մեկենասք,- անելցուց ան նեխածի հոտ առնելով:

- Բարեկա՛մ, ժամանակն է, որ հայ գրողներդ զգաստանաք եւ սկսիք դարուս արժեքափերով, քիչ մը առարկայականօրէն մտածել: Բժիշկ բարեկամս իր մեկենասութեան փոխարէն, ընկերային ապահովութեան հաշւոյն, վիրաբուժական անվնաս գործողութիւն մը պիտի կատարէ վրադ, այդ է պատուագինդ...

Վիպագիր Գիրգորին այլայլուճը տեսնելով.

- Քանի մը օրէն տուն կը դառնաս ու կը սկսիս վայելել մեկենասութեան բարիքները...

ճարպիկեանին խօսքերուն կառուցողական շեշտը հանդարտեցուց վիպագիր Գիրգորին սիրտը: Յանկարծ թեթեւցած զգաց ան: Ստածեց՝

- Ալ վերջ տուայտանքներու:

* *
*

Վաղ առաւօտեան, խիստ գաղտնի միջավայրի մը մէջ տեղի ունեցաւ անյայտ հիւանդութեան վիրաբուժութիւնը:

Բժիշկ Մաֆիոզեան վիպագիր իր զոհին օրկանիզմը նշդրակելով, ափսոսանքով նշմարեց զոյգ երիկամներէն մէկուն փճացած ըլլալը:

Զիմացաւ, ո՞ր մէկը արմատախիլ ընէր...

ՊՕՐՈՍ ԳՈՒԲԵԼԵԱՆ

Լոս Անճելըս

Ծանօթ.- 3եղիսակը սրտի խօսք ըսած էր երկտողով մը, որմէ մեջբերումներ կ'ընենք. «Ստորեւ՝ նորագոյն պատմուածքս: ...«Մեկենաս»ը համաշխարհային տազնապ մը կը մատնանշէ: Սակայն անոր ձեռնարկեցի վերջերս «Վարդանանք» ֆիլմը նկարահանելու զաւակիս գերմարդկային ճիգերուն եւ ապրած ողբերգութեան վկան ըլլալով: Եթէ ան օտարածին ըլլար ու փորձէր հայկական հերոսամարտ մը նկարահանել, մեր բոլոր ջոշերը, անխտի՛ր, իր շուրջ կը բոլորուէին... Դաշնակցական մամուլը գոնէ արձագանգեց: ...ուրիշներ, նախանձէ մղուած, երիցս «Օսքար»ակիր հայ արուեստագետին զլացան այդ ճանաչումն իսկ: Յուսանք որ այս պատմուածքը կը ցնցէ հայկական իրենց ինքնութեան հասցէն կորսնցուցածներուն խիղճը»:



ՍՈԿՈՄՔ ԹԵՐԶԵԱՆ - 1999



ՄԻ ՔԻՉ ԼՈՅՍ

Ժամանակը հարկադրում է
 Խաւարի ճորտութեանը ապաւինել,
 Բայց օրերի լուսաբացով
 Մաքրում եմ գիշերուայ
 Սեւ ցեխից
 Կեղտոտուած ոտքերս,
 Ու նորից սկսում եմ քայլել...
 Երեկ էր,
 Սպանեցի յուսահատութիւն
 Անունով կնոջը,
 Եւ դանակի համր
 ճշմարտութեամբ
 Արեանս տուեցի
 Կրակի իշխանութիւն...
 Աշխարհին ձեռնոց է նետուած.
 Թռչուններին, ծառերին
 Պարզելում եմ մարդկային
 Կերպարանք,
 Քաղաքներ դատապարտող
 Դաժանութեանը կապանքում,
 Ու լուսնից եմ վերցնում
 Երկրի վրայ նրան սպասող
 Ցուրտ դէմքերի հնազանդ
 Դրոշմը...
 Հողագնդին արեւի անձնագիր է
 Հարկաւոր,
 Մի քիչ լոյս,
 Մի քիչ լոյս տուէք
 Անտուն աշխարհին,
 Մարդիկ...

ՄԻԹԷ՞ ՉԵՍ ՏԵՍՆՈՒՄ

Ծաղկել եմ՝
 Ինչպէս ծառը ծիրանի,
 Սպիտակ զգեստս,
 Որ հասնում է
 Մինչեւ սրունքներս,
 Օղակել է փոթորիկ
 Մարմինս,




ՄԿՐՏԻՉ ՊՈՒԼՏՈՒՔԵԱՆ - «Պըսթեթա»

Միթե՞ չես տեսնում...
Քամին սիրահետում է
Եւ զարդարում է
Ծաղկաթերթերս՝
Լուսատիկների
Աստղային խաղով,
Անձրեւը
Քնքշանքի սաղմոս է
Երգում ինձ համար,
Լուսինը արեւից է
Խնդրում իմ ձեռքը,
Անցորդների
Հայեացքները
Տաք օշարակի պէս
Այրում են ինձ,
Իսկ դու սեւեռում
Խշխշոցով
Փորձում ես համտեսել
Ստուերիս ծնունդը...
Միթե՞ չես տեսնում՝
Ես այն հրաշք
Ծաղիկն եմ,
Որ մի օր
Աղջիկ եմ դառնալու...
Քաղիր ինձ,
Ու ես կը պատմեմ,
Թէ ինչպիսին է
Ծիրանի համը...

ԱԹՈՒԸ

Հողագունդը պատիւ
Պահանջեց ինձնից,
Որ ձանձրացել է
Մարդկային վարքի
Ծամաժռութիւններից.
- Բայց ինչո՞ւ բոլորի
Փոխարէն՝ ե՛ս,-
Հարցրի նրան.
- Դու գիտես
Թռչելու գաղտնիքը.
Նստիր,- հրամայեց նա...
Աթոռը սիրահարուեց ինձ,



Գրկեց մարմինս
 Ու փաղաքշանքով
 Հաճոյախօսեց՝
 Միայն իր մասին մտածել,
 Սրբել փոշին,
 Հետեւել իր չորս ոտքերի
 Ամրութեանը,
 Եւ ուրիշների հետ
 Զրուցելիս յիշել,
 Որ ի՞նքն է
 Իմ չափորոշիչը
 Թթուածնային հեւքի...
 Մթութեան քառսն իր ճոխ
 Սեղաններին հրաւիրեց
 Երկրպագելու իմ լռութեանը...
 Աթոռն ապրում է,
 Ես՝ չկամ...

ԼԻԼԻԹ


*Հայաստանի Գրողների Միության
 անդամ: Բանաստեղծուհի: Իր անդրանիկ
 ժողովածուն՝ «Սիրոյ մանանայ» Երեւան,
 1992-ին, արժանացած է Հայաստանի
 Գրողների Միության «Աւետիք Իսահակ-
 եան»ի անուան մրցանակին:*

*Հեղինակ է «Աստծոյ պատուիրանը»
 (մանկական պատմուածքներ), «Հոգի եւ
 մարմին», «Հոգու ներկայացում»
 (բանաստեղծութիւններ) ժողովածուներու:*

*Բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսեան
 իր մասին գրած է. «ԼԻԼԻԹ բանաստեղծուհին
 խոր ու տաղանդաւոր պատկերներու
 հեղինակ է. ստեղծագործ մի գրիչ...»*

2008Ի ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՊԵԼԵԱՆ ԴԱՓՆԵԿԻՐԸ՝ ԲՆՈՒԹԻՒՆԸ, ՄԱՐԴԸ ԵՒ ԻՆՔՉԻՆՔ ՅԱՐԳՈՂ ԺԱՆ-ՄԱՐԻ ԿԻՒՍԹԱՒ ԼԸ ՔԼԵՉԻՕ

Jean-Marie Gustave Le Clézio



«Ես յաճախ տեղափոխուող եմ, անկայուն, երբեք բաւարար չափով վստահ չեմ թէ ուր կ'ուզեմ բնակիլ: Հարկ է կապուիմ ինքնութեան մը եւ ինծի համար այդ կու գայ գրաւոր լեզուով, գիրքերով: Իմ իրաւ ընտանիքս գիրքերու մէջ է որ կը գտնեմ, այդ է հայրենիքս: Գրականութիւնը երկիր է, ան վերացական չէ, ան կազմուած է յիշատակներով, առարկաներով, համայնապատկերներով, զգայնութիւններով: Կը հասնինք իոն, ուր սեփական յիշատակները կը շփոթենք անոնցմով, զոր կ'իւրացնենք ընթերցումով: Գիրքի աղքատութեան մէջ է որ կը գտնուի իր լինելութիւնը: Ինչ որ աղքատ է աւելի հնարաւորութիւն ունի պահպանուելու եւ վերապրելու: Այս գաղտնիքն է գրականութեան, աղքատութեան որոնման մէջ, այսինքն տպաւորութեան պակասը, երթալով դէպի ճշմարտութիւն»:

Ժան-Մարի Կիւսթաւ Լը Քլեզիօ

Լուսարձակներէ հեռու ապրող, յարաշարժ եւ տեւաբար որոնող բեղուն գրող մըն է 2008ի գրականութեան նոպէլեան նոր դափնեկիրը՝ Ժան-Մարի Կիւսթաւ Լը Քլեզիօ: Անհանդարտ, արկածախնդիր, թաքուն հեղինակ մը, որուն ստեղծագործութիւնը կը յատկանշուի պարզութեամբ եւ բանաստեղծականութեամբ, հրաւեր՝ գորշ ընթացիկէն դուրս գալու: Միաժամանակ ան ստացած է շուէտական Սթիկ-Տակերման մրցանակը: Երկու մրցանակներն ալ տրուած են իր գրական ամբողջ վաստակին համար: 1980ին եղած է առաջինը որ ստացած է «Փոլ Մորան» ամենամեծ գրողի մրցանակը:

Քորէայի եւ Քանատայի միջեւ ճամբուն վրայ, երբ կը կարդար, իմացած է որ արժանացած է գրականութեան նոպէլեան մրցանակի: Երբ երկու թռիչքի միջեւ կանգ առած էր Փարիզ, իր հրատարակիչին մօտ, յանպատրաստից մամլոյ ասուլիսի մը ընթացքին, ամէ-

նէն պարզ ձեւով ըսած է. «Հարկ է շարունակել վէպեր կարդալ»...

Ժան-Մարի Կիւսթաւ Լը Քլեզիօ ծնած է 13 Ապրիլ 1940ին, Ֆրանսայի Նիս քաղաքը: Հայրը անգլիացի է, մայրը՝ ֆրանսացի, պրոթօն, բայց երկուքն ալ Սէն-Մորիսէն էին: Երբ հարց կը ծագի զինք բնորոշելու - անգլիացի՞, ֆրանսացի՞, մորիսիէ՞ն -, ընտրութիւն չ'ըներ, ինքզինք քիչ մը արքայական կը համարէ: Իրեն համար ֆրանսերէնն է իր իսկական երկիրը: Կենսափորձէ մը եւ խոր ապրումէ կը բխի իր մտածումը. «Ինծի համար, որ կղզեցի մըն եմ, ծովեզրի մարդ - որ կը դիտէ անցնող բեռնատար նաւերը, որ կը թափառի նաւահանգիստներու մէջ, ինչպէս մէկը, որ կը քալէ երկար պողոտայի մը վրայ, որ չի կրնար պատկանիլ ոչ թաղի կամ ոչ ալ քաղաքի, այլ բոլոր թաղերուն եւ բոլոր քաղաքներուն, - ֆրանսերէնը իմ միակ երկիրս է, միակ վայրը ուր կը բնակիմ»: Միաժամանակ տիրապետելով անգլերէնի եւ ֆրանսերէնի, նախ խորհած

է անգլերէն գրել, բայց գրած է ֆրանսերէն, ընդդիմանալու համար Մորիս կղզիի անգլիացիներու կողմէ գաղութացման:

Եօթը տարեկանին կը գրէ իր առաջին գիրքը, որ ծովու մասին է:

Իր գրական ուսումը կը ստանայ Նիս, Պրիսթոլ եւ Լոնտոն եւ քսաներեք տարեկանին մուտք կը գործէ գրական աշխարհ, տիրանալով Ռընոտո մրցանակին, իր առաջին վէպով, որ սկիզբն է երկարատեւ պայքարի մը ընդդէմ բռնութեան եւ դրամի իշխանութեան, պաշտպանելով բնութիւնը եւ տկարները: Իր էջերը մերժումն են արդիական եւ մղձաւանջային աշխարհին: 1967ին Թայլանտի մէջ կը կատարէ իր ազգային ծառայութիւնը ոչ իբրեւ զինուոր, այլ իբրեւ մշակութային գործակցող: Կ'արտաքսուի, քանի որ ուժգնօրէն կը դատապարտէ մանուկներու պոռնկութիւնը եւ կը դրկուի Մեքսիքա, հոն լրացնելու համար իր ծառայութիւնը: Կ'աշխատի Լատին Ամերիկայի Զինմարկութեան մօտ եւ խորապէս կը կապուի շրջանին եւ հնդիկներուն, ինչ որ իր գործը կը դրոշմէ եւ աշխարհահայեացքը: 1970-1974 տարիներուն կ'ապրի Ամպերաս եւ Վաունանաս հնդիկներուն հետ, Փանամայի եղէգնատառներուն մէջ (jungle), որ իրեն կ'ընծայէ մարդկային, մշակութային եւ միստիք արտակարգ կենսափորձ մը, կ'ընդլայնէ իր մտքի եւ հոգիի սահմանները, քանի որ Մեքսիքայի նախնական պատմութեան ծանօթացումը եւ անոր փճացումը սպանացի գրաւորներու կողմէ զինք կը մղեն ընդվզումի: Կ'երթայ երկրին խորերը ուր կ'ապրին նախնական համարուած ցեղախումբերը, կը սորվի անոնց տեղական լեզուները եւ կը ծանօթանայ անոնց սրբազան գրութիւններուն: 1977ին ինք կ'ըլլայ առաջիններէն Ամերիկայի հնդիկներու դիցաբանութեան վերաբերող «Շիլամ Պալամի Մարգարէութիւններ»ու թարգմանութիւնը հրատարակող: Կը մասնագիտանայ «Միշիքոան»ի (Կեդրոնական Մեքսիքա), այդ մասին կը ներկայացնէ պատմութեան աւարտաճառ մը, կ'ուսուցանէ Միացեալ Նահանգներու Ալպուքերք համալսարանին մէջ:

Իր գրականութիւնը կ'արտայայտէ նողկանք ամէն կարգի քանդումի մտածումներու

դէմ: Կը տեսնէ անկայուն հաւասարակշռութիւնը գեղեցիկին եւ դաժանութեան միջեւ, կ'որոնէ ներդաշնակութիւնը, հաւասարակշռութիւնը մարդուն եւ բնութեան միջեւ, մարդուն՝ ինք իրեն հետ, կախարդականի եւ իրականութեան, կեանքի եւ մահուան, մարդուն եւ ընկերութեան: Միշտ գացած է դէպի խեղճերը, դէպի անոնց ցաւերը: «Կը սորվի» որ մեր քաղաքակրթութեան եւ սպառողական ընկերութեան «պերճանք»ներէն կարելի է հրաժարիլ եւ ապրիլ բնութեան հետ ներդաշնակուելով:

Շուրջ յիսուն գիրքերու հեղինակ Լը Քլեգիոյի տիպարները ունին իւրայատուկ բարոյական ըմբռնում. յարգել բնութիւնը, մարդը եւ ինքզինք: Իր գրականութիւնը մնայուն հրաւեր է ուղղուած ընթերցողին, որպէսզի ան ինքզինք դիտէ եւ լսէ, հասկնայ շրջապատը: Իր պարզ խօսքը նորութեան կամ տպաւորելու ցանկութեան տուրք չի տար, սնափառութիւն չունի, ընթերցողը կ'առաջնորդէ խաղաղութեան, երազի, բանաստեղծութեան եւ վարակող խորհրդածութեան աշխարհը, ուր կան նուաճուած երջանկութիւնը, թաւալող ժամանակը, թափառականը, աքսորեալը: Կը ճամբորդէ եւ ընթերցողը կը տանի իրեն հետ: Իր տիպարները կը կորսուին քաղաքներու մէջ, կը խօսին մահուան, ցաւի, վախի եւ առանձնութեան մասին, բայց կան նաեւ երազները, ազատութեան սէրը, յուսալքումները: Ինք երազատես չէ, ազատ մարդ է, կը դատափետէ, կը պայքարի, ասպարէզ կը կարդայ:

Մտերիմ կացութիւններու եւ պատմութեան վերծանող է, խորապէս մարդկային, քնքշութեան, կարօտի եւ թերահաւատութեան շեշտով: Բեմ կը հանէ վերջին ազատ մարդիկը:

Համադրում՝ Բ.

ԱՆԿՈՒԼԻ ՄԱԼԱ - ANGOLI MALA* Ժան-Մարի Կիւսթաւ Լը Քլեզիօ

Փոքրիկ վեպ մըն է «Անկոլի Մալա»-ն: Ժան-Մարի Կիւսթաւ Լը Քլեզիօ, վեպի սկիզբը, առանձին էջի մը վրայ կը գրէ հետեւեալը.

«Կը պատմեն որ Զնդկաստանի մէջ, մեր ժամանակներէն առաջ, Ե դարուն, Անկոլի Մալա անունով պարզ մարդ մը, կը դառնայ խելագար, կ'ապաստանի խիտ անտառներու մէջ, ուր կ'ապրի ինչպէս վայրի կենդանի մը, սպաննելով բոլոր անոնք որոնք կը փորձէին զինք կալանաւորել: Այն ատեն, երիտասարդ մը, Կուսթամա, Սաքիա տոհմի պետի որդին, որ դեռ ճանչցուած չէր Պուտտա անուանումով, Լուսաւորեալը, առանձին մտաւ անտառ եւ առանց նուագագոյն վախի խօսեցաւ այդ վայրենի մարդուն, եւ այդպէս բժշկեց զայն իր խենթութենէն:

«Շուրջ երկու հազար հինգ հարիւր տարի ետք, Տարիէնի անտառին մէջ, պատահեցաւ նմանօրինակ դէպք մը, որուն մասամբ վկան եղայ: Ահա թէ ինչո՞ւ այս պատումին տուի «Անկոլի Մալա» անունը, յիշելով մարդը, զոր Պուտտա փրկած էր»:

* * *

ՀԱՏՈՒԾ՝ «ԱՆԿՈՒԼԻ ՄԱԼԱ» ՎԵՊԵՆ

Պրաւիթօ որոշած էր ապրիլ անտառին մէջ: Այդ իրեն համար անհրաժեշտութիւն էր հիմա, այլ տեղ անհնար էր որ կարենար ապրիլ: Գետէն վար, ուր ջուրը թանձր է, խառնուած ըլլալով հողի եւ կեղտի, հոն ուր օդը դեռ աւելի ծանր է, ալ չէր կրնար ապրիլ: Կուրծքը կը ճնշուէր, կարծէք հիւանդ ըլլար: Զոն ուր որ կ'երթար, Սելերու գիւղերը, կը գտներ կղկղանքի հոտը որ իրեն կը յիշեցներ Շելլինկի գինետան կողքը անցուցած գիշերը, երբ գինով Զնդիկները կ'երերային եւ առանց զինք տեսնելու կը միգէին իր վրայ: Կար նաեւ բանտի հոտը, բորբոսի եւ մահուան անհրապոյր հոտը, եւ միօրինակ աղմուկը երկարավիզ դանակներու (machettes) որոնք կը հարուածէին գետինը, ոստիկաններու կարծր նայուածքին տակ:

Ուստի մեկնած էր Էլիրայի տունէն, զինուած միայն երկարավիզ դանակով, ուսէն կախուած ձայնասփիւռի գործիքով, եւ գացած էր մինչեւ աղբիւրները գետին, Թրես Պոքասէն անդին: Զոն ապրած էր վայրենիի պէս, սնանելով սափոթներով (արեւադարձային երկիրներու համեղ պտուղ մը), արմատներով եւ կարդոսներով (crevettes), զորս կ'որսար հեղեղներուն մէջ: Հասած էր մուտքը մեղ ձորին, որ կը տանէր ամպածածկ լեռները, ուր կ'ըսէին որ սատանան, ժայռաբեկորի մը վրայ ներկած էր վայրի մեծ հնդկահաւ մը՝ արգիլելու համար մարդոց մուտքը: Զեղեղը ուժգնութեամբ կը հոսէր, որոտումի աղմուկով, եւ հեռուն լեռներու գագաթները թաքնուած էին փոթորիկի ետին: Պրաւիթօ հոն մնացած էր օրեր, ծորաբերանին, առանց յառաջանալ յանդգնելու:

Երբ իջած էր Թրես Պոքաս, ուզած էր երթալ ծովափ, ուր առաջին անգամ հանդիպած էր Նինայի: Սեւ մաքսանեցները տեղաւորուած էին կրակին շուրջ եւ զբաղած էին ուտելով: Իրիկնամուտին մօտեցած էր անոնց: Սեւ հսկան ոտքի էր, հրացանը ձեռքին, բայց յետոյ ճանչցած էր Պրաւիթօն եւ խնդալով պոռացած էր. «Շուրջօն է, ուխտի խմոր» (Շուրջօն կը կոչէին անտառի Զնդիկները): Եւ միւսները սկսած էին խնդալ: Պրաւիթօ անոնցմէ քանի մը քայլ հեռու կանգ առած էր, փախչելու պատրաստ: Սեւ հսկան քալած էր դէպի իրեն, ձեռքը դրած էր իր ուսին վրայ: Զոն, կրակին մօտ, Պրաւիթօ կերած էւ խմած էր մինչեւ որ յագեցար: Սելերը իրարու հետ կը խօսէին տարօրինակ լեզուով մը, զոր Պրաւիթօ լաւ չէր հասկնար: Ամէնքն ալ ծխեցին, իւրաքանչիւրը իր գլանիկը, զինովցնող բոյրով ամերիկեան գլանիկներ: Մաքսանեցները տեսան ձայնասփիւռի գործիքը, խնդրեցին որ միացնէ, բայց բարդերը վաղուց հանգչած էին: Մարդիկ պառկեցան, փաթթուելով բամպակէ վերմակներով, բայց սեւ հսկան շարունակեց առանձին խօսիլ, իր տարօրինակ երգեցիկ ձայնով, դիտելով մարդը կրակի բոսոր կայծերը: Ըսած էր որ կը կոչուէր ժոպոյ, որ կու գար Պրազիլէն: Պրաւիթօ զինք

կը լսէր առանց բան ըսելու, ծխելով եւ դիտելով կրակը: Մաքսանենգներու հրացանները դրուած էին ծովափը, եւ Պրաւիթօ մտածած էր որ դիւրին պիտի ըլլար վերցնել հրացանները եւ սպաննել այս մարդիկը: Յետոյ, իր կարգին, պառկած էր խիճերուն վրայ, բայց ծածկուելու ոչինչ ունենալով, ցուրտը զինք արթուն պահած էր մինչեւ արշալոյս:

Այդ գիշերուընէ սկսալ, Պրաւիթօ մնացած էր մաքսանենգներուն հետ: Անոնց հետ կը քալէր մինչեւ քոլոմպիական սահմանի լեռները, Փալօ տը լաս Լեթրասի (արծաճագրութիւններու ծառը), որսորդութիւն կ'ընէր սպասելով, որ անոնք վերադառնան իրենց կռնակի լեցուն պարկերով: Ապա միասին վերստին կ'իջնէին գետի երկայնքով, մինչեւ այն վայրը, ուր կը սպասէին Փանամա մեկնող մերձափնեայ նաւերը: Հոն, պարկերը կը բեռցուէին նաւու մը վրայ, եւ մաքսանենգները Եաւիզա գիւղին մէջ, մէկ գինետունէ միւսը երթալով, կը սպասէին յաջորդ ճամբորդութիւնը: Այժմ Պրաւիթօ առանց վախի կրնար խմելու երթալ Շելլինկի գինետունը: Գիտէին որ ինք մաքսանենգներու հետ է, եւ ոչ ոք իրեն հետ խնդիր չէր ունենար: Հսկայ ժոայօ իրեն նոյնիսկ դրամ կու տար՝ իբրեւ ճամբու առաջնորդի, եւ երբեմն իրեն կը յանձնէր շաւակի պարկ մը նաւ տանելու համար: Պրաւիթօ հարցումներ չէր ուղղեր: Չէր փորձեր գիտնալ թէ ինչ կը պարունակէին պարկերը: Բայց ամէնքն ալ գիտէին որ անոնք ոչ ժամացոյց էին եւ ոչ ծխախոտ: Նոյնիսկ կ'ըսէին որ յիսնապետ Թորրէ առաջինն էր շաւակի պարկերու կանաչ կերպընկալ նիւթ ծրարներուն մէջ փաթուած սպիտակ փոշին գործածող, այդ պատճառով էր որ թոյլ կու տար որ մաքսանենգները անցնէին: Ամէնքն ալ գիտէին որ մաքսանենգները գողեր էին, եւ որ անոնք չէին վարանիր սպաննելու բոլոր անոնք որոնց կը հանդիպէին անտառին մէջ, զանոնք կողոպտելու համար: Ձոհերը ընդհանրապէս Հարաւային Ամերիկայի թշուառութենէն Արժանթին, Ուրուկուայ, Պրագիլ փախչող այրեր եւ կիներ էին, քալելով Միացեալ Նահանգներ հասնելու յոյսով: Մաքսանենգները անոնցմէ փրկագին կ'առնէին, եւ եթէ անոնք փորձէին ինքնապաշտպանութեան դիմել, զիրենք կը սպաննէին հրացաններով եւ անոնց դիակները կը լքէին հոն, անգղերուն եւ մրջիւններուն: Պրաւիթօ յաճախ տեսած էր մաքսանենգներուն իրարու միջեւ աւարի բաժանումը, դրամ, գոհարեղէն, ժամացոյցներ: Իր հոգը չէր, իրեն չէր վերաբերեր: Պարզապէս երբեք իր կռնակը անոնց չէր դարձներ, եւ միշտ ձեռքին մէջ կը պահէր երկարարավիզ դանակի կոթը, նոյնիսկ երբ կը քնանար:

Միշտ Նինայի մասին է որ կը մտածէր Պրաւիթօ: Երբ մաքսանենգները Թրես Պոքաս գտնուէին, լեռները անցնելէ առաջ, Պրաւիթօ գաղտնօրէն կ'երթար Նինայի տունը: Թաւուտներուն մէջ պահուըտած, կը սպասէր որ աղջիկը ձկնորսութենէ վերադառնար: Երեկոյեան, երբ ան կու գար, իր բամպակէ երկար պարեգօտը փակած իր թաց մարմնին, Պրաւիթօ կը զգար որ իր սիրտը աւելի ուժգին կը բաբախէր: Երբեք աւելի գեղեցիկ կին չէր տեսած: Նինա կը կռահէր իր ներկայութիւնը եւ ուղղակի դէպի իրեն կու գար: Մանաւանդ կար իր դէմքը, ողորկ եւ անապակ, պղնձագոյն, խոշոր վախվըխած աչքերով: Քիչ մը կը խօսէին, ցած ձայնով, հորը ուշադրութիւնը չգրաւելու համար, յետոյ ան տուն կը դառնար՝ ծուկերը եփելու համար, եւ Պրաւիթօ կը շնչէր քաղցր հոտը մուխին: Այլեւս Նինա միշտ կը բերէր իր բաժինը, նոյն կիտուած պնակով:

Երեկոյ մը, մինչ Պրաւիթօ առանձին էր ծովափին, քանի որ մաքսանենգները առանց իրեն մեկնած էին գետին վարի կողմը, Նինան եկաւ: Ան նստեցաւ ծովափին, կկզած իր կրունկներուն վրայ, աւելի արագ ոտքի կարենալ ելլելու համար, ինչ որ միշտ կ'ընէր: Չմեռ էր, Ծննդեան տօնէն քիչ առաջ, եւ գիշերը գեղեցիկ էր, աստղերով լեցուն, ցուրտ եւ փայլուն գիշեր մը այնպէս՝ որուն նմանը ցարդ բնաւ չէր տեսած: Երկարօրէն խօսեցան, կարծէք ժամանակը այլեւս գոյութիւն չունէր, եւ որ ոչինչ այլեւս կարեւորութիւն ունէր: Ան կը դիտէր Նինան երբ ան կը խօսէր, կապոյտ ստուերին մէջ հազիւ տեսնելով դէմքը: Ան կը խօսէր իր հօր մասին, որ կ'ատէր մաքսանենգները, նա եւ մահուան սպառնալիքներու՝ որոնք կը ստիպէին որ ան հրացանը ձեռքին արթուն հսկէր ամէն գիշեր: Նինա կը կրկնէր.

- «- Կ'ուզեմ այստեղէն երթալ, պէտք է հիմա մեկնիմ:
- Ինչո՞ւ:
- Քանի որ այլեւս հոս չեմ կրնար մնալ, կը վախճամ:
- Եւ հա՞յրդ»:

Պրաւիթօ, հակառակ մթութեան, կը փորձէր տեսնել աչքերը:

«- Հայրս կ'ըսէ որ անոնք ոճրագործներ են: Ինչո՞ւ իրենց հետ կ'աշխատիս:

- Քանի որ ոչ ոք զիս պիտի աշխատացներ:

- Բայց անոնք քեզ պիտի սպաննեն»:

Ձայնը կը խեղդուէր, եւ ան դեռ կ'ըսէր, երեսը դարձուցած դէպի գետի վարի կողմը, կարծէք իրապէս փախուստի միջոց փնտռելով.

«- Պէտք է որ մեկնիմ, այդ պէտք է»:

Պրաւիթօ կ'ուզէր իրեն ըսել որ ինք իրեն հետ պիտի երթար, բայց կոկորդը կը սեղմուէր:

«- Ուրեմն ե՞րբ պիտի մեկնիս:

- Չեմ գիտեր: Հայրս չ'ուզեր որ երթամ: Ինք չ'ուզեր այս վայրէն հեռանալ: Բայց այսպէս կամ այնպէս ես պիտի մեկնիմ, անմիջապէս որ քիչ մը դրամ ունենամ, պիտի երթամ քաղաք, բնաւ պիտի չվերադառնամ»:

Երկուքով գլանիկ մը ծխեցին: Առանց խօսելու, մին միւսին կը փոխանցէր կճատը, իրենց նայուածքը կորսուած գիշերուան մէջ, ունկնդրելով գետին աղմուկը: Պրաւիթօ-յի սիրտը շատ արագ եւ ուժգին կը բաբախէր, եւ իր ձեռքերը քիչ մը կը դողային, քանի որ կը հասկնար թէ թերեւս վերջին անգամն ըլլալով գիրար կը տեսնէին: Ինչո՞ւ այս պահը միշտ պիտի չտեսէր: Գիշերուան մէջ, առանց աղմուկի հոսող գետին անդադրում շարժումը, աստղերու լոյսը խիճերուն վրայ, հովին սօսափիւնը անտառին մէջ, կեանքը ծառերուն մէջ, մօեղները՝ որոնք կը շփուէին իրենց այտերուն: Ամէն բան կարելի էր դեռ, քանի մաքսանենգները հոն չէին, ոչ սպառնալիք կար, ոչ մահ: Կը շնչէր կողքի երիտասարդ կնոջ հոտը, համեմուած, զինովցնող բոյր, զոր չէր ճանչցած մինչ այդ: Երկար ժամանակէ ի վեր Պրաւիթօ կ'ըղծար այս պահը, եւ հիմա որ հասած էր, կը վախճար: Կը մտածէր Նինայի արհամարհական ձայնի մասին, երբ խօսած էր երիտասարդ հնդիկներուն, որոնք ծռած էին իրենց գլուխը, առանց պատասխանելու համարձակութեան: Այժմ բարկութիւնը եւ ցանկութիւնը դող կը պատճառէին: Իր ձեռքը փնտռեց գլանիկի ծայրը, բայց Նինա զայն նետած էր հեռու, խիճերուն վրայ, եւ անոր մատներն էին զորս բռնեց եւ տարաւ իր բերնին: Յետոյ իր ձեռքերը բարձրացան թելի երկայնքով, դպան ուսին, իջան ուսուկէն վար, եւ հիմա ամբողջ մարմինն էր որ կը գրկէր: Հակեցաւ դէպի իրեն, փնտռեց շրթները: Նինա քիչ մը ետ գնաց, եւ ընդոստ ոտքի ելաւ, պրկելով իր երկար սրունքները: Պրաւիթօ մտածեց որ ամէն բան վերջացած էր, որ ան կ'երթար: Բայց Նինա, իր կարգին, զինք իր ձեռքով քաշեց, ոտքի հանեց: Մին միւսին սեղմուած մնացին, կարծէք պարէին: Նինա ըսաւ. «Այս կողմ երթանք, հեռանանք ճամբայէն, մարդիկ կրնան անցնիլ»:

Ձինք տարաւ դէպի անտառ, գրեթէ չորցած հեղեղի մը կողքը: Հոն, ծառերու կամարին տակ, պաղ աւազին վրայ, երկարօրէն սիրաբանեցան, ուժգնութեամբ: Յետոյ մնացին, երկարած, զիրար գրկած, մինչեւ որ իրենց մարմինները պաղին եւ սարսռան: Նինա գնաց լուացուելու հեղեղի ջուրին մէջ, եւ ապա Պրաւիթօ գնաց եւ ծովափէն բերաւ իր բամպակէ ծածկոցը, եւ կրակ վառեցին տաքնալու համար: Քանի որ Պրաւիթօ լուռ կը մնար, Նինա հարց տուաւ. «Ի՞նչ կը մտածես»: Պրաւիթօ կը մտածէր այն բանի մասին որ գտած էր, որ Նինա կոյս չէր: Ան հարց տուաւ. «Հիմա կը հասկնա՞ս թէ ինչու պէտք է որ հեռանամ»: Իր ձայնը լեցուն էր անհամբերութեամբ, չէր կրնար նստած մնալ: Նինա ըսաւ. «Այն պահուն ժոյճ մաքսանենգ չէր, ինչու հետ կ'աշխատէր: Կ'ուզէր սղոցարան մը հաստատել, ասկէ վար... Եւ երբ հայրս գիտցաւ թէ ինչ պատահած էր, կռուեցաւ ժոյճոյի հետ, կ'ուզէր զայն սպաննել: Ուստի ժոյճ միացաւ մաքսանենգներուն: Հիմա անոնք է որ ըսած են թէ զինք պիտի սպաննեն»:

Պրաւիթօ զգաց որ սիրտը աւելի ուժգին կը տրոփէր, մօտեցաւ Նինայի, եւ զայն երկարօրէն սեղմեց իր կուրծքին վրայ: Պառկեցան ծովափին, պաշտպանուած ծառերով, փաթթուած ծածկոցով: Այնպիսի երջանկութիւն մըն էր, որ Պրաւիթօ, ամէն վայրկեան Նինան կը սեղմէր, վստահ ըլլալու համար որ ան դեռ հոն էր, որ չէր երագած:

Յաջորդող շաբաթներու ընթացքին, Նինա մնաց, եւ այնպէս էր իրապէս որ կարծէք ժամանակը կանգ առած էր թաւալելէ: Թրես Պոքասի մէջ, Պրաւիթօ Նինայի համար կառուցեց տուն մը, բոլորակաձեւ տուն մը տերեւներով հիւսուած տանիքով: Սկիզբի օրե-

րուն, Նինա ամեն երեկոյ կը վերադառնար իր ծնողքին տունը, եւ Պրաւիթօ կ'երթար նստելու անտառին մէջ, դիտելու համար լամբարով լուսաւորուած մթնշաղկաւը: Յետոյ, օր մը, հայրը զայրացած էր եւ հարուածած էր զինք, ան ձգած էր տունը եւ եկած էր հաստատուելու Պրաւիթոյի քով: Այն ատեն երջանիկ եղած էին, առանց խորհելու սպառնալիքներու մասին: Նինա ամեն առաւօտ ձկնորսութեան կ'երթար, իր երեքժանիով եւ կարթերով, եւ Պրաւիթօ իրեն կ'ընկերանար: Կը սիրէր զինք դիտել, երբ խորունկ ջուրերու աւազանին մէջ կը սուզուէր, հեղեղատներուն տակ, եւ այնքան երկար ժամանակ կը լողար որ իր, Պրաւիթոյի շունչը կը ճնշուէր, եւ մտահոգ, կը զննէր մակերեսը: Աւազաններուն մէջ կ'որսար մեծ արծաթագոյն աչքերով կապոյտ տինկաներ (ծուկ մը), ծածաններ (ծուկ մը), կատուածուկներ, զորս կը պոկէր յատակի քարերէն: Ձուկերը կ'եփէր ծովափին, հնդիկներու մշակութեան այգիներէն քաղուած գառնալեզուներով (խոտ մը), եւ սափոթներով կամ մանկերով (արեւադարձային պտուղներ):

Մաքսանենգները չէին վերադարձած, եւ Պրաւիթօ ստիպուած էր որսալ առանց հրացանի: Փորձած էր, առանց մեծ յաջողութեան, թակարդներ լարել: Երբեմն կը բռնէր ակութի մը (ամերիկեան ցամաքի ստնաւոր մը) կամ թռչուն մը: Բայց առանց հրացանի, անտառը կը թուէր ըլլալ անթափանց, խորհրդաւոր: Գետնէն հեռու, կար ճնշող, սպառնական լռութիւնը: Գիշերը, երբ Նինա կը բացակայէր, պառկած տան տախտակամածին, կ'ունկնդրէր ձայները որոնք կու գային ալիքներով, անձրեւի ձայն մը որ կարծէք անտառի խորքէն կ'ելլէր, խառնուած թռիչքին միջատներու՝ լոյսէն խենթացած:

Բայց օրերը գեղեցիկ էին Նինայի հետ: Աւազաններու խորունկ ջուրերուն մէջ կը սուզուէին բաց աչքերով: Ձուկերը իրենց առջեւէն կը փախչէին: Երբ Նինայի թեւերը կը լարուէին, սրածայր երկաթեայ կարթը թռիչքի մէջ եղող ծուկին կը մեխուէր, եւ արեւան ամպ մը կը տարածուէր ջուրին մէջ, դէպի իրեն քաշելով թափանցիկ եւ կատաղի պզտիկ ծուկերու ամբոխ մը: Երկարօրէն կը լողային պաղ ջուրին մէջ, եւ դուրս կու գային սարսափով, Նինան՝ մարմնին փակած իր երկար բամպակէ շրջագծետով: Նստած կը մնային ծովափի խիճերուն վրայ, մինչեւ որ կրկին զգային իրենց մորթին վրայ արեւի այրուցքը: Այս պահերը կը սիրէր Պրաւիթօ: Գետին մէջ լողալէ այնքան յոգնած կ'ըլլային որ այդպէս կը մնային երկար ատեն, գրեթէ առանց շարժելու, դիտելով ողորկ ջուրի հոսքը իրենց առջեւէն, ինչպէս հեղուկ քար մը, որուն վրայ կը թրթռային շերտափաթիւները եւ կը յառաջանային ջրապտոյտներ:

Այն երեկոները, երբ Նինա կ'որոշէր մնալ Պրաւիթոյի հետ, կ'երկնային հիւղակի տախտակամածին վրայ, թրեւ Պոքասի մէջ, եւ մինչ լոյսը կը թեքէր, Նինա առանձին կը խօսէր: Կը պատմէր, գրեթէ ցած ձայնով, իր մօր կողմէ պատմուած զարմանալի առասպելներ գետնէ վեր եղող շրջաններու մասին, հոն ուր կ'ապրէին վայրենի մարդիկ, որոնք չէին գիտեր թէ ինչ է աղը եւ կ'ուտէին հոն միս: Կը խօսէր կորսուած հովիտի մասին, հեղեղի մասին, որ կ'երթար դէպի բարձրադիր լեռները ուր կը ծնին ամպերը: «Ոչ ոք կրնայ հոն երթալ: Մայրս կ'ըսէ որ եթէ քալենք դէպի լեռը, յանկարծ երկինքը կը դառնայ սեւ, շատ սեւ, եւ անձրեւը կու գայ այնքան ուժգնութեամբ որ հեղեղը կը յորդի, եւ ջուրը մեզ կը տանի»: Պրաւիթօ կ'ուզէր օր մը հոն երթալ, անցնիլ կիրճը, մինչեւ լեռը: «Կ'ըսեն որ հոն, հովիտին ծայրը, կայ մեծ եւ սեւ քարաժայռ մը, եւ որ այդ քարաժայռին վրայ կայ մեծ եւ սատանային կողմէ բազմաթիւ գոյներով ներկուած վայրի հնդկահաւ մը: Բայց եթէ մինչեւ հոն հասնինք երկինքը այնքան կը սեւնայ, որ կը խորհինք որ գիշերը կ'իջնէ, եւ հեղեղին ջուրը կը լեցնէ հովիտը մինչեւ վերերը»: Պրաւիթօ խնդալով կը լսէր. «Ինչպէ՞ս այդ գիտեն, քանի որ ոչ ոք երբեւիցէ հոն գացած ըլլայ»:

Ամեն օր, Պրաւիթօ Նինայի հետ հետզհետէ աւելի երկար ժամանակ կը սուզուէր արագահոս ջուրերու աւազանին մէջ: Կը լողար հոսանքն ի վեր, ծփացող ոսկեհատիկները կը կուրցնէին աչքերը, զգալով ջուրին ծանրութիւնը որ կ'իջնէր իր մարմնին վրայ: Լաւ կը զգար, երբ գետը զինք այդպէս կը սեղմէր: Երեկոյեան, կը դիտէր լեռնէն իջնող երեք հեղեղները, եւ նոյնիսկ երբ Նինա հոն չըլլար եւ մնար իր ծնողքին տունը, իրեն կը թուէր թէ ան ներկայ է գետի ջուրին մէջ, խորհրդաւոր եւ ընտանի: Գետը ջնջած էր իր բոլոր յուշերը:

Երբ Պրաւիթօ եկաւ այն ծովափը, հոն ուր Նինա սովորաբար կ'որսար, նախ տեսաւ մուխը, բանակատեղին եւ մաքսանենգները: Անոնց մէջտեղ կար ժոպօ հսկան, իր զի-

նուորականի հագուստներով եւ հրացանով: Հոն կար նաեւ երիտասարդ Սել զամպօ մը (տեղացիին տրուած արհամարհական մակդիր) զոր չէր ճանչնար: Ժոայօ նախ հրացանը ուղղեց դէպի Պրաւիթօն, յետոյ զայն ճանչցաւ եւ աղմկալի եղանակով զայն բարեւեց. «Շուիթօն է, ուիսքի խմո՛ղը»: Պրաւիթօ մօտեցաւ, երկարավիզ դանակը ձեռքին, ձայնասփիւռի գործիքը ուսին: Երիտասարդ զամպօն ունէր այնպիսի աչքեր, որոնք կը փայլէին իր մութ դէմքին վրայ: «Մեզի հետ ճամբորդելո՞ւ կու գաս, հարցուց Ժոայօ: Եղանակը պիտի սկսի, շատ ճամբորդութիւններ պիտի ըլլան, եւ շատ դրամ»: Պրաւիթօ ցնցեց գլուխը: «Ոչ, այլեւս այդ պիտի չընեմ, այստեղէն պիտի երթամ»: Հսկան մօտեցաւ Պրաւիթօյի զայն դիտելու համար: «Ինչո՞ւ կ'ուզես մեկնիլ»: Զայրոյթ կար ձայնին մէջ, եւ Պրաւիթօ զգաց որ սիրտը աւելի արագ կը բաբախէր: Բայց մաքսանենգներէն վախ չունէր: Պարզապէս կ'ուզէր որ անոնք հիմա երթան, հանգիստ ձգեն գետը, որպէսզի Նինա կարենայ շարունակել իր ձկնորսութիւնը: «Այլեւս չեմ ուզեր ձեզի հետ երթալ», կրկնեց, գլուխը ցնցելով: Ժոայօ գլուխը շարժեց իբրեւ անհամաձայնութեան նշան: «Չես կրնար մեզ լքել: Քու մասիդ խօսած էի միւսներուն, անոնց ըսած էի որ կրնայինք վստահիլ քեզի: Այդ ըսի իրենց, ճիշդ չէ՞»: Այս ըսաւ դառնալով դէպի ծովափը նստողները եւ բոլորն ալ գլխով այո՛ ըսին: Միայն զամպօն լուռ էր եւ Պրաւիթօն կը դիտէր անթարթ: Պրաւիթօ կը մնար անշարժ, երկարավիզ խոնաւ դանակի կոթը ձեռքին մէջ: Գիտէր որ չէր կրնար մեկնիլ, զինք կը սպաննէին եթէ փորձէր հեռանալ: Ծովափին, ուսապարկերը շարուած էին, մեծ եւ կապոյտ կերպրնկալ նիւթ պարկեր: «Լսէ՛, - ըսաւ Ժոայօ: - Մեզի հետ եկո՛ւր այս անգամ եւս, շատ դրամ պիտի շահիս, եւ յետոյ կրնաս երթալ ուր որ ուզես»: Իր ձեռքը դրաւ Պրաւիթօյի ուսին: «Յետոյ, կրնաս ամուսնանալ եւ մնալ կնոջդ հետ»: Այս ըսաւ դանդաղօրէն, նայելով Պրաւիթօյի աչքերուն մէջ, կարծէք գիտնալով բաներ, զորս չէր ուզէր ըսել: Պրաւիթօ կը մտածէր Նինայի մասին: Ան վստահօրէն տեսած էր մաքսանենգներուն մուխը, եւ կը պահուրտէր անտառին մէջ, իր ծնողքի տան մօտ: Երբ վերադառնար, մինչ մաքսանենգները Եաւիզայի մէջ պիտի սպասէին նաւուն մեկնումը, ինք Նինան պիտի տանէր: Ծամբորդութեան դրամով, իրենք կրնային նաւ բարձրանալ, պիտի երթային մեծ քաղաքը, ուր ոչ ոք զիրենք պիտի հետապնդէր:

Այդ գիշեր Պրաւիթօ գրեթէ չքնացաւ: Երկարած ծովափին, երկարավիզ դանակը ձեռքին, ուշադիր էր իւրաքանչիւր ձայնի, աչքերը յառած քարիւղի լամբին: Արշալոյսէն առաջ, մաքսանենգները անաղմուկ պատրաստուեցան: Առին պարկերը, եւ Պրաւիթօ սկսաւ իրենց հետ քալել գետի երկայնքով: Այն պահուն երբ կը հեռանային ծովափէն, Պրաւիթօ գլուխը ետ դարձուց, փորձեց տեսնել Նինան: Բայց համայնապատկերը գորշ էր եւ դատարկ: Ապա, անտառին մէջ, հետեւեցաւ մաքսանենգներու խումբին, պարկի ծանրութեան տակ դէպի առաջ հակած: Աւելի անդին, առաջ անցաւ, զանոնք առաջնորդելու համար բաւիղներով: Բազմաթիւ անգամներ ցանկութիւն ունեցած էր նետելու շալակի պարկը թաւուտքին մէջ եւ վազելու, դէպի ետ, դէպի թրեւ Պոքաս: Բայց թրեւս արդէն շատ ուշ էր: Կը մտածէր, ինչպէս երագի մը մէջ, նաւուն մասին որ Նինան պիտի տանէր, արշալոյսին, նաւը պիտի իջնէր գետով մինչեւ գետաբերան, ափերը պիտի բացուէին, պիտի բացուէին ծովուն վրայ, եւ նաւը պիտի յառաջանար հաւալուսներու (pélican) թռիչքներու միջեւ:

Եաւիզա գիւղի մերձակայքը հասնելով, մեկնումի յաջորդ օրուան երեկոյեան, Պրաւիթօ նկատեց որ առանձին էր: Երբ պարկը գետին կը դնէր, սպասելու համար մաքսանենգները, կիսաստուերին մէջ տեսաւ զինք շրջապատող զինեալներ: Ակնթարթային պահ մը խորհեցաւ որ անոնք մաքսանենգներն էին: Յետոյ նշմարեց յիսնապետ Թորրէյի բարձր հասակը: Իր երկարավիզ դանակը նետեց, եւ սպասեց, նայուածքը յառած անհասանելի գետին:

Հայացուց՝ 3.Պ.

* Նոյն հատորին մէջ, 1999ին, լոյս տեսած են երկու վէպեր. «Hasard» եւ «Angoli Mala», Gallimard հրատարակչատուն: Ընտրուած հատուածը կը գտնուի գիրքի էջ 243էն 254: Յատուկ եւ տեղական անունները պահուած են կարելի ճշգրտութեամբ:

ԺԱՆ-ՄԱՐԻ ԿԻՍՏՈՒԼԷ ԼԸ ՔԼԵԶԻՈՅԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Le procès-verbal. Gallimard, Paris. 1963 (Prix Renaudot)
 Le jour où Beaumont fit connaissance avec sa douleur. Mercure de France, Paris. 1964
 La fièvre. Gallimard, Paris. 1965
 Le déluge. Gallimard, Paris. 1966
 L'extase matérielle. Gallimard, Paris. 1967
 Terra Amata. Gallimard, Paris. 1967
 Le livre des fuites. Gallimard, Paris. 1969
 La guerre. Gallimard, Paris. 1970
 Lullaby. Gallimard, Paris. 1970
 Haï. Skira, Sentiers de la Création, Genève. 1971
 Les géants. Gallimard, Paris. 1973
 Mydriase. Fata Morgana, Montpellier 1973
 Voyages de l'autre côté. Gallimard, Paris. 1975
 Les prophéties du Chilam Balam. Gallimard, Paris. 1976
 L'inconnu sur la terre. Gallimard, Paris. 1978
 Vers les icebergs. Fata Morgana, Montpellier. 1978
 Voyage au pays des arbres. (en collaboration avec Henri Galeron) Gallimard, Enfantimages, Paris. 1978
 Mondo et autres histoires. Gallimard, Paris. 1978
 Désert. Gallimard, Paris. 1980
 Trois villes saintes. Gallimard, Paris. 1980
 La Ronde et autres faits divers. Gallimard, Paris. 1982
 Celui qui n'avait jamais vu la mer (suivi de) La montagne du dieu vivant. Folio Junior, Gallimard, Paris. 1982
 Relation de Michoacan. Gallimard, Paris. 1984
 Balaabilou. Albums Jeunesse, Gallimard, Paris. 1985
 Le chercheur d'or. Gallimard, Paris. 1985
 Villa Aurore suivi de Orlamonde. Folio Junior, Gallimard, Paris. 1985
 Voyage à Rodrigues. 1986
 Le rêve mexicain ou la pensée interrompue. Gallimard, Paris. 1988
 Printemps et autres saisons. Gallimard, Paris. 1989
 La Grande vie suivi de Peuple du ciel. Georges Lemoine. Folio Junior, Gallimard, Paris. 1990
 Onitsha. Gallimard, Paris. 1991
 Peuple du ciel. Georges Lemoine. Albums Jeunesse, Gallimard, Paris. 1991
 Etoile errante. Gallimard, Paris. 1992
 Pawana. Gallimard, Paris 1992
 Diego et Frida. Stock. 1993
 La Quarantaine. Gallimard, Paris. 1995
 Poisson d'or. Gallimard, Paris. 1996
 La fête chantée. Le Promeneur. 1997
 Hasard suivi de Angoli Mala. Gallimard, Paris. 1999
 Fantômes dans la rue. Elle, Aubin Imprimeur, Poitiers, 47p. 2000
 Coeur brûle et autres romances. Gallimard, Paris. 2000
 Révolutions. Gallimard, Paris. 2003
 L'Africain . Mercure de France. 2004
 Ourania. Collection blanche, Gallimard, Paris, 304 pages, 2006.
 Raga, approche du continent invisible. Seuil, Paris, 144 pages. 2006
 Ballaciner. Collection blanche, Gallimard, Paris, 192 pages. 2007.
 Ritournelle de la faim. Collection blanche, Gallimard, Paris, 2008.

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻՆ ՆԱՄԱԿ ՄԸ ՊԵՏՐՈՍ ԶԱՐՈՅԵԱՆԻՆ

Պետրոս Զարոյեան (1903-1986) ֆրանսահայ գրականութեան երկրորդ գիծի անուններէն մէկն է: Արձակ ու թատերախաղ փորձած է, միեւնոյն ժամանակ գրական-տեսաբանական հարցեր արծարծելով, յատկապէս 1930-1960ական թուականներուն: 1930ական թուականներուն «Օշականի լակոտներ»էն մէկն էր («Ապագայ»ի 1935ի իր մէկ յօդուածին խորագիրն էր), որ մասնաւորապէս ժխտական վերաբերում ցուցաբերած էր Յակոբ Օշականի հանդէպ¹: Զարոյեան, ինչպէս ֆրանսահայ այլ գրագէտներ, Պոլսոյ Կեդրոնականին մէջ (չրջանաւարտ՝ 1923ին) Օշականի աշակերտը եղած էր:

Գրիգոր Պըլտեան համառօտ կերպով անդրադարձած է Զարոյեանի թատերագրութեան, անոր առաջին թատերախաղը՝ «Մեռնողները» (Մարտէյ, 1928), բնորոշելով իբրեւ երիտասարդութեան գործ²: Այդ թատերախաղը օրին Արշակ Չօպանեանի դրական գնահատականին արժանացած էր (հաւանաբար՝ «Ապագայ»ի մէջ), որուն հակադրած էր Օշական, ստորեւ հրատարակուող նամակին մէջ (Եղիշէ Զարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, Երեւան, Յակոբ Օշականի ֆոնտ, թիւ 86): Նամակը, որ օշականեան թատերական քննադատութեան շահեկան նմոյշ մըն է, լոյս կը տեսնէ նոյնութեամբ:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
Նիւ Ճըրզի

295 P.O.B.
Nicosia
1928 Նոյ. 9
Նիկոսիա

Սիրելի պ. Զարոյեան,

Առի գիրքդ ու կարդացի նամակէդ առաջ: Յաւեցայ որ մոլորուած մը ու կորսուած մըն էիր: Նոյն օրերուն կարդացեր էի պ. Ա. Չօպանեանի ծիծաղելի յօդուածը ու գնահատումը քու գործիդ մասին: Ու մոռցեր էի արդէն: Նամակդ, իր պարզութեանը մէջ, ինծի պարտք կը դնէ ըսելու քեզի ճշմարտութիւնը:

Մ' ջեմ հասկնար թէ տարիներով Ֆրանսա ապրելէ եւ թատրոն տեսնելէ ետքը ինչպէս չես ըմբռնած թատրոնին հիմնական, մէկ ու անվերածելի առաքի-

նուլթիւնը՝ գործողութիւնը: Կտորիդ մէջ ատոր հետքն իսկ չի կայ: Քու մարդիկ փոխանակ գործելու, քալելու, վիճելու, կը խօսին:

2՝ Կը կարծես թէ քարաքթերներ կերտած ես: Քու մարդերդ ատոր ստուերն անգամ չունին: Եթէ տափակ կողմերը քարաքթերիս/թիք կը նկատես կը սխալիս: Անհանդուրժելի են հերոսներդ: Անմոռանալի կերպով ծիծաղելի են աղջիկներդ:

3՝ Կը մոռնաս թէ թատրոնը արուեստ մըն է, սեպհական թէքնիքով, անկախ նոյնիսկ գրականութենէ: Ու թատերագիրը ան է որ ատ թէքնիքը իւրացուցած է: Գրագէտ մը ակնցուր այդ թէքնիսիէնին վրայ, ու այն ատեն կ'ընենաս մեծ թատերագիրը: Այլապէս ամէն աճալարար բիճը թատերագիր մըն է:

4՝ Կը խորհիմ թէ յաջողութիւն կը սպասէ քեզի այդ մարզին վրայ եթէ

ա) - ուշադրութեամբ ուսումնասիրես տեսարաններու, արարուածներու, տեսիլքներու, պատկերներու mécanique: Նախքան գրելդ, բոլոր տեսարաններուն մէջ եղելութիւնը, մագլցումը, գործողութիւնը, ստուերի մը պէս պէտք է զարգանայ ու դուն համոզուիս յառաջատուութեան:

բ) - լայնօրէն հետազօտուած, ճիշդ ու ճիշդ ճանչցուած, նոյնիսկ ձայնին թոնն անգամ բանտարկուած մարդերու բանակ մը ունենաս տեսարան բերելիք:

գ) - այդ տարրերն ամէնն ալ լծես մէկ ու միակ տռամի մը, շարժումի մը հեղեղին մէջը որ քալէ, վազէ ու անդունդ թափի:

դ) - տիալոկդ կենդանի ու թեթեւ դառնայ:

Ահա ինչ որ կ'ըսէի քեզի եթէ քովս ըլլայիր: Գործիդ վրիպանքը թող չխորտակէ քեզ: Լաւ հարց մը ունիմ, ան ալ լեզուն է: Ճկուն, կենդանի ու հաղորդական այդ ոճդ իսկ կը բաւէ որ հետաքրքրուիմ քեզմով: Բայց մի մոռնար որ պէտք է դուն ինքզինքդ հաւնիս ամէնէն առաջ: Ուրիշներու կարծիքը քեզ կը մոլորեցնէ:

Կարդացած եմ նաեւ զանազան պատկերներդ: Բոլորին մէջն ալ ինքզինքը փնտռող տղան ես տակաւին:

Յոսահատ չեմ ապագայէդ, միշտ ենթադրելով թէ յամառ ու աննկուն աշխատող մըն ես: Եթէ ուրիշ է գրականութիւնը, առաջին աժան գովեստով չփացած՝ արդէն իսկ ինքզինքդ կը մտածես, այն ատեն մեղքը վզիդ:

Լաւագոյն փափաքներով
Յ. ՕՇԱԿԱՆ

1 Տէս Մարկ Նշանեան, Յակոբ Օշականի մատենագիտութիւն, Լոս Անճելըս, 1999, էջ 103-105:

2 Krikor Beledian, Cinquante ans de littérature arménienne en France, Paris, 2001, p. 354-355.

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԼՈՅՍ ԵՒ ՍՏՈՒԵՐ ԱՆՅԵԱԼԵՆ

ԱՆՏՈՆԻՆԱ ՄԱՅԱՐԻ. ԶԽԱՄՐՈՂ ՅՈՒՇԵՐ

Այսօր, երբ շարունակվում է «նոր ժամանակների ասպետների» շքերթը՝ հայրերի դեմ մղուող պայքարի իւրօրինակ լուծումներով (հայրերի դեմ որդիների միամիտ ու անմիտ պայքար), երբ ճշմարիտ գեղարուեստը, այնուամենայնիւ, կուլ է գնում համաշխարհը շրջափակող ցինիզմին, երբ վաղուց հող դարձած անուններին ցեխ չպըրտելու համար են դափնիների արժանանում կամ այդ կերպ դառնում նշանաւոր, երբ անցեալի արժէքները վերագնահատւում են նեարդայնացնող «արդարամտութեամբ», երբ գրականութիւնն է դառնում այն անփոխարինելի տեղը, ուր կարողանում են ազատ հայիոյել, բանասարկել եւ իրագործել «բիզնես պլաններ»՝ օգուտ քաղելով ժամանակին արհամարհուած դասականների այրուած գրքերից, աւելի անհրաժեշտ է դառնում արդարութեան փնտռտուքը:

Մեր կողքին այսօր ապրում են մարդիկ, ում յիշողութեան մէջ տակաւին նւում է անցեալը: Չեն ուզում խօսել սպանուած մանկութեան, պատանեկութեան, երիտասարդութեան, երիտասարդութեան սեմին տանուլ տրուած սէրերի եւ երջանկութեան մասին «գազան Սթալինի բռնացումներու» (բնորոշումը Արամ Հայկազինն է) չար հեքիաթը, որը չի թողնում՝ մարդկային հոգիների մէջ պատերազմն աւարտուի...

Չապրուած կեանքի համար մղուող պատերազմը շարունակւում է Անտոնինա Մահարու սրտի մէջ: 85ամեայ լիտուիին, նստած Երեւանի Կասեան փողոցի իր բնակարանում՝ ականաւոր ամուսնու առանձնասենեակում (Անտոնինան թախծախառն ժպիտով է յիշում այդ առանձնասենեակը Մահարու կենդանութեան օրօք. կատարեալ բոհեմ էր, ուր հայոց Պառնասի անմահները հարբում էին մինչ արեւազալ՝ բարձր երգելով եւ պատճառաբանելով՝ մահկանացուները երբեք իրենց չեն հասկանայ), կաթիլ-կաթիլ թղթին է յանձնում ամէնը, ինչ պահել է յիշողութեան գորոցներում:

Անտոնինա Մահարու յուշերը, «Իմ ողիսականը» վիպակը եւ մի շարք պատմուածքներ հրատարակուել են Երեւանում (ռուսերէնով): «Իմ ողիսականը» վիպակը թարգմանուել (հեղինակի հաւաստմամբ՝ ոչ ամբողջութեամբ) եւ լոյս է տեսել Պէյրութում:

Յուշերը լոյս են սփռում ողբերգական դրուագներով հարուստ 20րդ դարի 50ական թուականների հայ գրական կեանքում տեղի ունեցած այն խմորումների եւ մութ էջերի վրայ, որոնք մեզ են հասել արդէն խեղաթիւրուած եւ այսօր էլ գրական բուռն վէճերի, անձնական վիրաւորանքների եւ լուտանքների անսպառ աղբիւր են: «Անտոնինա,- մահից առաջ պատուիրել էր Գուրգէն Մահարին,- գրի՛ր այն ամէնը, ինչ տեսել ես ու զգացել, պատմի՛ր ճշմարտութիւնը. թերեւս քեզ է բաժին ընկել արդարութեան մունետիկի դերը: Միակ մարդն ես աշխարհում, որն ինձ լաւ է ճանաչում եւ գիտի իմ խոհերն ու ապրումները...»: Անտոնինան գրիչ վերցրեց Մահարու մահը սգալուց յետոյ:

Իրաւունք չունենք համեստ յուշագրողից պահանջելու բարձրարուեստ գրականութիւն, սակայն պարտաւոր ենք նրա յուշերին վաւերաթղթի արժէք տալ՝ արթնութեան կոչելով սերունդներին...խիղճը...

Անտոնինա Պովիլայտիտէ-Մահարու խնդրանքով ստորել ներկայացնում ենք յիշողութիւններից երեքը:

ՄԱՐՕ ԽԱԶԱՏՐԵԱՆ

ԵՒՐԱՄԻԱ միջազգային համալսարանի դասախօս
Հայաստան, Երեւան

Լեւոն Յախվերդեան, իր 1997ին Պէյրուս լոյս տեսած գիրքին մէջ, «Մենք եւ մեր ժամանակը» (յօդուածներ), կ'անդրադառնայ Գուրգէն Մահարիի «Այրուող Այգեստաններ» վէպի ստեղծած հարցին, «Գուրգէն Մահարու գրական դրաման» գլխուն տակ (Էջ 31-43): Լեւոն Յախվերդեան կը լուսաբանէ գիրքի հրատարակութեան ժամանակի մթնոլորտը, ազգային եւ հայրենակցական դրդապատճառներով որդեգրուած կեցուածքները եւ եղած արտայայտութիւնները, իր կարգին, արժանի գնահատումը կ'ընէ գիրքին, կը պատմէ անոր ողիսականը: Կը հաստատէ. «Ժողովուրդը չընդունեց վէպը ազգային շարժումների նկատմամբ անհայրենասէր տեսակետ պարունակելու մեղադրանքով: Սրտի արիւնով, հայրենիքի կորստեան մորմոքով գրուած վէպ՝ եւ այդպիսի ծանր մեղադրանք: Սա էր դրամատիկականը»:

Կ'արտագրենք հատուածներ, ընթերցողին ձգելով՝ ա. «Այրուող Այգեստաններ» վէպի ընթերցումը՝ անձնական կարծիք կազմելու համար, բ. Նաեւ ընթերցումը Լեւոն Յախվերդեանի ուշագրաւ վկայութեան: Ի հարկէ, ԲԱԳԻՆի այս համարով լոյս տեսնող Անտոնինա Մահարիի ուղղակի վկայութիւնը այլապէս նշանակալից է: Գրականութեան պատմութեան տաքն ու պաղը:

Լեւոն Յախվերդեանի յօդուածին մէջ կը գտնենք հետեւալ հաստատումները.

«Երբ «Այրուող Այգեստաններ»-ից մի խոշոր հատուած լոյս տեսաւ «Գրական թերթ»ում՝ ընդունուեց հիացմունքով՝ այնքան վառ պատկերացում էր տուել գրողը Վանի նիստուկացի, բարքերի ու սրա բնակիչների մասին: Երբ ասացի Մահարուն՝ դէմքին յաղթական ժպիտ յայտնուեց.

« - Իմ գլուխ գործոցն է լինելու..

«Երբ գլուխ-գործոցը լոյս տեսաւ՝ տրաքոցն ընկաւ, ինչպէս ամպրոպի ճայթիւնը պարզ երկնքում: Վէպի դէմ բարձրացաւ այնպիսի համաժողովրդական մասնաւորապէս՝ համավանեցիական բողոքի ալիք, որի առաջն առնել չէր լինի: Վէպի գեղարուեստական մեծ արժանիքները, Վանի անկրկնելի կոլորիտը տալու, հոգեբանական թափանցումներ, նուրբ վերլուծումներ անելու անգուգական վարպետութիւնը, մահարիական փայլուն ոճը՝ նման խնդիրներ ոչ ոքի չէր զբաղեցնում: Մեղադրում էր ոչ թէ գեղագետը, այլ քաղաքագետը: Ընթերցող զանգուածներին, վանեցիներին յատկապէս, վրդովմունք էր պատճառում վէպի քաղաքական կոնցեպցիան, գաղափարական շեշտերը, Վանի հերոսական պաշտպանութեան անտեսումը»:

.....

«Դատապարտում էր վէպում հոլովուող այն մոտիվը, որ եթէ բզեզի բունը չխառնէին, այսինքն՝ ապստամբ չլինէինք՝ կոտորած չէր լինի»:

.....

«Մահուանից տասը տարի անց լոյս տեսաւ «Այգեստաններ»-ի նոր տարբերակը՝ իր կեանքի գործը, հայ հայրենադարձութեան մեծագոյն գեղարուեստական փաստաթուղթը, անէացած հայրենիքի մեծագոյն յուշարձանը: Դրա լաւագոյն գնահատութիւնը եղաւ իր անդաւաճան բարեկամ Սուրէն Աղաբաբեանի «Վիպասքի Նոր Տարբերակը» ծաւալուն յօդուածը: Բաղդատելով վէպի առաջին եւ երկրորդ հրատարակութիւնները, նա գրեց. «Եթէ առաջին տարբերակում Գ. Մահարին հանդէս էր գալիս «Ետին թուով մարգարէի» դերով («չպետք է այդ անէին, այն անէին»), ապա նոր խմբագրութեան մէջ կատարել է շեշտերի տեղափոխութիւններ՝ դատապարտող մարգարէից դառնալով «անկողմնակալ» ժամանակագիր, վէպ, որ նշանաւոր երկ է շատ յատկանիշներով, նաեւ «ոճային բազմատեսակ գոյների շաղախով, վերին աստիճանի կենդանի, անդիմակ բառաձեւերով, արտիստականութեան աստիճանին հասցուած գրելակերպով»:

Անտոնինա Մահարիի յուզումնախառն վկայութիւնը հասկնալի է, հետաքրքրական անոր համար նաեւ որ ան կը տրուի առանց «միջնորդ»ի:

Բ.

ԵՐԿՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Գուրգեն Մահարիս եւ Պարոյր Սեւակը

Տէ՛ր, փրկի՛ր ինձ ընկերներից:
Թշնամիներից ես ինքս կ'ազատուեմ:
(Ժողովրդական առած)

Առաջին անգամ ես Պարոյր Սեւակին տեսայ Սիբիրից վերադառնալուց յետոյ «Ինտուրիստ» հիւրանոցում: Չնայած այն բանին, որ նա նման էր աֆրիկացու, պարզեցի, որ իսկական ջենտլմեն է, բարձր խորագիտակութիւն եւ քնքուշ հոգի ունեցող մտաւորական:

Մահարու եւ Սեւակի հանդիպումը շատ բուռն էր. նրանք երկար գրկախառնուել էին, համբուրւում էին եւ դառնութեամբ խօսում անցեալի մասին: Յետոյ Սեւակը շտապեց տուն՝ կնոջ՝ Մայայի եւ փոքրիկ որդու՝ Զրաչիկի մօտ: Այդ օրերին Սեւակը սովորում եւ աշխատում էր Մոսկուայում, իսկ Երեւան էր գալիս համարեա ամէն շաբաթ:

Այս երկու բանաստեղծներին կապում էր իսկական ընկերութիւնը: Յաճախ էր Պարոյրը գալիս մեզ մօտ՝ հիւրանոց, երբ Մոսկուայում էր: Գուրգենը սիրով էր յիշում իր երիտասարդ ընկերոջը, նրան համարում էր տաղանդաւոր բանաստեղծ, նաեւ ասում էր, որ բարդ բնաւորութիւն ունի, չի յոգնում եւ անվերջ ինչ-որ տեղ է շտապում:

Մեր բազում արկածներից յետոյ վերջապէս տեղափոխուեցինք Կասեան փողոցի այս շէնքը, ուր ստացանք երեքսենեականոց բնակարան: Ահա հենց այդ բնակարանում կազմաւորուեց կատարեալ բոհեմ: Այստեղ հաւաքւում էին Գուրգենի ընկերները, երկար գրուցում, վիճում: Նման կենսաձեւին Գուրգենը չդիմացաւ եւ ծանր հիւանդացաւ: Բժիշկները նրան ուղեգիր տուեցին՝ բուժուելու Մոսկուայում՝ Բուժական սննդի ինստիտուտում:

Մենք մայրաքաղաք հասանք Ապրիլին: Գուրգենը հաղորդեց Պարոյրին մեր իջեւանելու վայրը: Իսկ տեղաւորուել էինք «Ուկրաինա» հիւրանոցում: Ես եւ Գուրգենիկը տաքսիով մեր հայրիկին տարանք հիւանդանոց, եւ բժիշկները որոշեցին նրան այնտեղ պահել քառասուն օր: Ես որդուս հետ մնացի հիւրանոցում: Այդ ժամանակ տղաս ընդամենը հինգ տարեկան էր՝ գեղեցիկ, կենսուրախ, խարտեաշ գանգուրներով: Շատ բարի երեխայ էր: Յիշում եմ՝ արտասահմանցի հիւրերը նրան շատ էին ուշադրութիւն դարձնում, փորձում էին խօսել, կատակել նրա հետ:

Ահա այդ օրերին Սեւակը ցոյց տուեց իր իսկական, անկեղծ ընկերութիւնը: Նա շատ ուշադիր էր հիւանդ Գուրգեն Մահարու հանդէպ: Ամէն Կիրակի (իսկ դա հիւանդի հետ տեսակցելու օրն էր) գալիս էր հիւրանոց, զանգահարում, ես ու Գուրգենիկը իջնում էինք, իսկ այնտեղ կանգնած էր լինում բանաստեղծը՝ վարդերի իսկայական փնջով: Պարոյրը համբուրւում էր ձեռքս. «Տիկին Անտոնինա, գնանք Գուրգեն-խանի մօտ»: Մենք նստում էինք տաքսի եւ գնում մեր սիրելի Մահարուն այցելութեան: Գուրգենիկն ամբողջ ընթացքում բռնած էր

պահում Սեւակ քեռու ձեռքը. կարծես վախենում էր կորցնել նրան:

...Մենք հիւանդանոցում ենք: Այդ օրը մեր տղան ծաղիկները մեկնեց հօրը եւ ասաց. «Սիրելի՛ հայրիկ, սա քեզ համար է: Դու ե՞րբ ես վերադառնալու: Մենք տխրում ենք առանց քեզ: Իսկ այս ծաղիկները Սեւակ քեռին է բերել»: Երբ Գուրգէնն իմացաւ, որ իր ընկերը շատ փող է ծախսում մեզ համար, խստօրէն ասաց. «Պարոյր ջան, այլեւս նման բան մի՛ արա: Ախր դու ուսանող ես... Վարդերը շատ շքեղ են, շատ շնորհակալ են»: Գուրգէն-խանը համբուրեց երեքիս, Պարոյրից վերցրեց թերթերը եւ ասաց մեզ. «Իսկ հիմա դուք կարող էք զբօսնել այգում (ինքը նոյնպէս նստած էր այգում), իսկ ես ուզում եմ զրուցել ընկերոջս հետ»:

Ես եւ Գուրգէնչիկը սկսեցինք ուսումնասիրել գեղեցիկ ծաղկաթմբերը, բժըշկուհիները զարմացած հայեացքով հետեւում էին մեզ:

Պարզուեց, որ Սեւակն արդէն հասցրել է լինել Երեւանում եւ բերել է տարբեր նորութիւններ, թարմ թերթեր, ամսագրեր: Գուրգէնը երջանիկ էր. մենք լըսում էինք նրա քրքիջը, եւ ես շատ ուրախ էի, որ նա լաւ է զգում: Իսկ Գուրգէնչիկը տրամադրութիւն չուներ.

- Մայրի՛կ, արի՛ գնանք հայրիկի մօտ: Մենք եկել ենք, որ նրա կողքին լինենք:

- Հիմա չի կարելի, տղա՛ս: Այնտեղ Սեւակ քեռին է, նրանք կարելուր խօսակցութիւն ունեն:

Այո՛, այդ երկու Դոն ժուլանները, երկու սրտակերները, երկու խենթ բանաստեղծները լաւ էին հասկանում միմեանց եւ երջանիկ էին, երբ միասին էին:

Իսկ երբ աւարտուեց տեսակցութեան ժամը, Գուրգէնը կանչեց մեզ եւ ասաց. «Հիմա, սիրելի՛ Անտոնինա, վերադարձէք հիւրանոց, կը գնաք ռեստորան, թող Պարոյրն իր համար խմիչք պատուիրի, որքան ուզում է: Ափսոսում եմ, որ ձեզ հետ չեմ լինելու: Բարի ախորժակ եւ ցտեսութիւն մինչ միւս Կիրակի»:

Նա նորից համբուրեց մեզ, շոյեց Գուրգէնչիկին եւ ասաց.

- Բալի՛կ ջան, տղա՛ս, մի՛ տխրիր, շուտով ձեզ հետ կը լինեմ:

- Հայրի՛կ, հիմա գնանք, հերիք է այստեղ մնա: Դու անվերջ հիւանդանոցներում ես... Առանց քեզ տխուր է: Մայրիկը միշտ լալիս է...

- Շուտով, շուտով, բալի՛կ ջան:

Տրտմութեամբ մենք մեր հայրիկին թողեցինք հիւանդանոցում, գնացինք հիւրանոց, ռեստորան: Սեւակը իր համար օղի թէ կոնեակ պատուիրեց, լաւ ճաշեցինք, իսկ յետոյ գնացինք զբօսնելու հիւրանոցի շուրջը՝ Մոսկուա գետի եզերքին: Եղանակը հրաշալի էր, շուրջը այնպէ՛ս գեղեցիկ էր: Գուրգէնչիկն ամուր բռնել էր Սեւակ քեռու ձեռքը. «Թող չգնայ: Նրա հետ հետաքրքիր է: Նա հայրիկի ընկերն է, բանաստեղծ: Ես սիրում եմ Սեւակ քեռուն»:

Նա ինքն էլ չէր շտապում տուն: Պատմում էր կնոջ՝ Մայայի, որդու՝ Հրաչիկի մասին, որը Գուրգէնչիկից մի քանի տարով մեծ էր: Պարոյրը շատ էր սիրում իր ընտանիքը եւ կարօտում էր: Նա երկար խօսում էր Գուրգէն-խանի մասին, հիանում էր նրա տաղանդով, հիւմորով, պատմում էր՝ ինչպէս է սպասել նրա վերադարձին եւ որքան ուրախ է, որ Գուրգէն Մահարին վերջապէս Երեւանում է:

- Շնորհակալութիւն, տիկին Անտոնինա, որ այնտեղ ծանր օրերին միայնակ չէք թողել հիւանդին եւ փրկել էք նրա կեանքը: Գուրգէն-խանն ինձ ասել է, որ եթէ չլինէր Անտոնինան, իր ոսկորները կը մնային սիբիրեան հողում, ինչպէս դա եղաւ շատ-շատերի հետ: Շնորհակալ եմ, որ Դուք, հերոսական բնաւորութիւն,

արել էք ամէն ինչ՝ նրան մահուան ճիրաններից ազատելու համար: Դրա համար, տիկին Անտոնինա, ես յարգում եմ Ձեզ, հիանում եմ երախտապարտ եմ, որ Դուք փրկել էք հայ գրողին, այդպէս խնամքով հոգ էք տանում նրա մասին: Ամէն մէկը չէր կարող կեանքը կապել նման հիւանդ մարդու հետ...

Եւ այսպէս՝ ամէն Կիրակի:

Գուրգէնչիկը մեծ հիացմունքով նայում էր Սեւակ քեռուն. «Հայրիկն ասում է, որ Պարոյրը մեծ բանաստեղծ է: Երեւի ես նոյնպէս բանաստեղծ դառնամ: Գուցէ՝ օդաչու. չգիտեմ, դեռ չեմ որոշել: Բայց հնարաւոր է՝ ոստիկան. նա էլ կարելորդ դէմք է: Եւ այնքան գեղեցիկ գլխարկ է կրում...»:

Պարոյրը մեծ յարգանքով էր վերաբերում ինձ, իսկ ես նրան համարում էի «անառակ եղբայր» (նա ինձնից փոքր էր մէկ տարով): Մի անգամ ես ուզում էի «դաստիարակել» իմ եղբայրիկին, որ նա այդքան շատ չծխի: Իսկ նա ամբողջ օրը ծխում էր ու ծխում: Լաւ էր, որ մենք թարմ օդում էինք: Պարոյրն ասաց, որ նոյնիսկ գիշերն է ծխում:

- Իսկ ե՞րբ էք քնում,- հարցնում եմ:

- Ինքս էլ չգիտեմ: Ես այնքան հոգսեր ունեմ, որ քունս չի տանում...

Ահա այսպիսի անմոռանալի ժամեր ենք անցկացրել հայ մեծ բանաստեղծի հետ:

Մի անգամ ահա թէ ինչ «սարքեցի»: Ռեստորանում ընթերցուց յետոյ դուրս եկանք զբօսնելու Մոսկուա գետի ափին: Բոլորս բարձր տրամադրութիւն ունենք: Շուրջը հեքիաթային բնութիւն է: Պարոյրը շատ ուրախ է: Նա արտասանում է ինչ-որ հայերէն բանաստեղծութիւն: Գուրգէնչիկը հիացած նայում է բանաստեղծի դէմքին եւ բռնել է ձեռքը: Իսկ Սեւակը՝ ինքն արդէն հայր, կախարդել է մեր տղային:

Ահա այդ պահին ես սկսեցի.

- Պարո՛յր, հիմա ես Ձեզ հետաքրքիր բան կը պատմեմ: Դուք հաճոյքով կը լսէք այդ մասին: Երբ մենք Մոսկուա ենք գալիս, ամէն տարի հիւրանոցում մեզ այցի է գալիս Յասմիկը Ձեր դստեր հետ: Ի՞նչ լաւ երեխայ է: Ի՞նչ գեղեցիկ աղջիկ: Մենք շատ ենք սիրում Ձեր դստերը, իսկ Գուրգէնչիկը երջանիկ է զգում, երբ նրանք գալիս են, որովհետեւ խաղում է նրա հետ: Ես եւ Գուրգէն-խանը հիանում ենք՝ նայելով նրանց:

Պարոյրը կանգ առաւ: Մռայլուեց: Ճակատին ու դէմքին կարմիր հետքեր յայտնուեցին: Ես հիմա էլ տեսնում եմ այդ ամէնը: Չեմ կարող մոռանալ:

- Նշանակում է՝ Գուրգէն-խանը նոյնպէս գիտի այդ մասին: Եւ ի՞նչ է ասում նա,- հարցրեց բարկացած:

- «Ապրես, Պարո՛յր: Այսպիսի լաւ երեխայ. իսկական հրաշք: Եւ ինչքա՞ն նման է հօրը: Մենք նրան շատ ենք սիրում, որովհետեւ մեր հրաշալի բանաստեղծի դուստրն է»: Հենց այսպէս էլ ասում է Գուրգէնը,- ասացի ես:

- Հա՛, նա խայտառակում է ինձ: Երեխային բերում է ինստիտուտ, որտեղ աշխատում եմ: Հասցրեց ինձ այն բանին, որ հիւանդացայ եւ պառկեցի հոգեբուժական հիւանդանոցում. երեք ամիս չէի կարողանում խօսել: Կարճ ասած՝ կորցրել էի խօսելու ունակութիւնս: Ճիշդ է, ինձ այնտեղ բուժեցին: Բայց նեարդերս քայքայուած են,- ասաց Պարոյրը ցաւով:

Այդ պահին ես հասկացայ՝ ինչ սարսափելի սխալ եմ թոյլ տուել՝ դիպչելով նրա ցաւոտ տեղին: Ես բառեր էի փնտռում, որ սփոփեմ նրան:

- Պարո՛յր ջան (առաջին անգամ նրան այդպէս դիմեցի), ես դրանում ոչ մի խայտառակութիւն չեմ տեսնում: Դուք բանաստեղծ էք եւ աւելին, քան բանաս-

ԿԱԼԵՆ



տեղծը: Հեշտ սիրահարուող էք: Դուք սիրել էք մի կնոջ, նա էլ՝ Ձեզ, եւ ծնունել է սիրոյ պտուղը: Դուք հրաշալի աղջիկ ունէք: Ի միջի այլոց, Յասմիկը մինչեւ հիմա սիրում է Ձեզ...

- Հարկաւոր չէ ինձ նրա սերը: Նա թունաւորել է ողջ կեանքս...,- մեր բանաստեղծը երկար խօսեց բարկացած. ամբողջ ընթացքում ծխում էր, կարծես դրա մէջ էր փնտռում մխիթարութիւնը:

- Ես ներողութիւն եմ խնդրում, որ Ձեր ցաւոտ կետին դիպայ: Բայց ես չգիտէի: Խնդրում եմ՝ Գուրգէնին ոչինչ մի՛ ասէք...

- Կարծես դա շատ հաճելի թեմա է, որ ես էլ կիսուեմ Գուրգէն-խանի հետ: Տիաճ է այդ մասին յիշելը:

- Բայց ներեցէ՛ք ինձ, խնդրում եմ: Յոյս ունեմ, որ միւս Կիրակի նորից կը գաք: Այլապէս Գուրգէնը կարող է յուզուել:

- Ինչպէ՞ս կարող եմ չգալ Գուրգէն-խանի մօտ: Նա ինձ կը սպասի: Մահարու հետ շատ հետաքրքիր է: Նա պայծառ անհատականութիւն է: Իմ հոգեւոր հայրը:

Հիւանդանոց գնալուն մնում էր մէկ Կիրակի: Պարոյրը հրաժեշտ տուեց բարեկամաբար: Համբուրեց ձեռքս. «Ներեցէ՛ք, տիկին Անտոնինա, շատ տաքացայ: Աստուած իմ, որքա՛ն շատ սխալներ եմ գործել»: Խոստացաւ գալ, Երեւանից բերել լուրեր, թարմ թերթեր, ամսագրեր: Դա իր պարտքն էր համարում: Խառնեց Գուրգէնչիկի մազերը, իսկ վերջինս ուրախացաւ, որ Պարոյր քեռին այդպէս սիրում է իրեն:

Այս պատմութիւնից ես հետեւութիւն արեցի: Այդ անվերջանալի կապերը տարբեր կանանց հետ, այդ սիրային պատմութիւնները տղամարդկանց կեանքում ծնում են իրարանցում եւ քաոս, խաթարում են առողջութիւնը, հոգեւոր աշխարհը, յաճախ՝ ընտանիքը: Բայց կը սթափուե՞ն երբեւէ այս կնամուկները: Անլուծելի խնդիր է:

Երբ մենք մտանք մեր համարը, Գուրգենիկը սկսեց ինձ յանդիմանել. «Մայրի՛կ, կարծես թե դու վիրաւորեցիր Սեւակ քեռուն: Ես տեսայ, թե ինչպէս բարկացաւ եւ կարմրեց: Ես ցաւում եմ նրա համար, վախենում եմ, որ կը հիւանդանայ: Ես սիրում եմ Սեւակ քեռուն: Նա հայրիկի ընկերն է»: Պէտք է ասեմ, որ մեր որդին ինձ նման է: Ինչպէս ես, սիրում է դաստիարակել: Շատ անգամ է ասել հօրը. «Հայրի՛կ, օդի խմելը յիմար սովորութիւն է եւ շատ վտանգաւոր է առողջութեան համար: Ծխելն էլ է վտանգաւոր: Մայրիկն է ասել»: Ուրիշ անգամ. «Հայրի՛կ, ես եւ մայրիկը նրա՛ համար ենք քեզ դաստիարակում, որովհետեւ վախենում ենք, որ կը հիւանդանաս: Յոգնել ենք «Շտապ օգնութիւն» կանչելուց»:

Ահա այսպէս: Երկու դաստիարակ Գուրգեն-խանի գլխին: Բայց վերջինս իսկական հայ էր. չէր յանձնուում: Դրա համար էլ հիւանդանում էր: Ասում էր. «Աւելի լաւ է հիւանդանամ, քան ձեզ ենթարկուեմ»:

Յաջորդ Կիրակի Պարոյրը դարձեալ զանգահարեց մեզ: Մենք իջանք եւ հանդիպեցինք բանաստեղծին: Նա բարձր տրամադրութիւն ուներ: Այս անգամ ծաղիկները ես գնեցի: Վերջին անգամ էինք գնում հիւանդանոց: Երկուշաբթի օր Գուրգենին դուրս եմ գրելու հիւանդանոցից: Ինչպէս միշտ, Գուրգենիկը հօրը յանձնեց ծաղիկները: Նա մեզ համբուրեց եւ ուղարկեց զքօսնելու: Պարոյրի հետ շատ հետաքրքիր էր: Բայց մենք չէինք վիրաւորուում. ուրախ էինք, որ լաւ է զգում:

Երբ աւարտուեց տեսակցութեան ժամը, Գուրգենը գրկեց ինձ եւ որդուն, իսկ Պարոյրին ողջագուրուեց աւելի ջերմ: Շնորհակալութիւն յայտնեց անկեղծ ընկերութեան համար, ուրախ հանդիպումների համար: Սեւակը խոստացաւ այցելել մեզ Լիտուայից մեր վերադարձից յետոյ: Նա շատ ջերմ հրաժեշտ տուեց: Համբուրեց ձեռքս. «Տիկի՛ն Անտոնինա, ես ուրախ եմ, որ Գուրգեն-խանը Ձեր ձեռքերում է: Շնորհակալ եմ ամէն ինչի համար, մինչ հանդիպում Երեւանում»: Գուրգենիկին համբուրեց հօր նման: Տղան ուրախ է, որ Սեւակ քեռին այդպէս բարի է իր հանդէպ:

Ահա այսպէս ամառն անցաւ, բոլորիս մնացին ուրախ յիշողութիւններ...

Երկուշաբթի օրը ես եւ որդիս գնացինք՝ հայրիկին հիւանդանոցից տուն տանելու: Գուրգենիկը երջանիկ էր: Գուրգեն-խանը՝ նոյնպէս: Իսկ ես ողջ գիշեր չէի քնել ուրախութիւնից:

Ինստիտուտում, ըստ էութեան, բուժել էին հիւանդին: Գուրգենը լաւ էր զգում:

Տոմսերը գնուած էին, եւ յաջորդ օրը մենք մեկնեցինք Լիտուա: Փառք Աստծոյ, նորից բոլորս միասին ենք: Պալանգայում Գուրգենը հանդիպեց ընկերների, լիտուացի գրողներին: Ես ու տղաս լողում էինք ծովում, երկար զքօսնում էինք եւ վայելում հրաշալի բնութիւնը: Կարճ ասած՝ ամառը հիանալի անցկացրինք: Սեպտեմբերի սկզբին Երեւանում էինք:

Գուրգենը մտածում էր գիրք գրել իր հայրենի Վան քաղաքի մասին եւ վերադարձից յետոյ՝ սկսեց աշխատել:

...Հիմա Պարոյրը ապրում է մեր հարեւանութեամբ՝ Կողքի մուտքում: Նա արդէն երկրորդ կնոջ՝ Նելլիի՝ Յասմիկի ընկերուհու հետ է ապրում: Իսկ Մայան (հետագայում Մայան ինքն է ինձ ասել), իմանալով, որ ամուսինը ապօրինի դուստր ունի Մոսկուայում, չի կարողացել ներել, եւ նրանք բաժանուել են, թէեւ Մայան շարունակում էր սիրել Պարոյրին:

Սեւակի նոր ընտանիքում արդէն որդի կայ՝ Արմենը: Կեանքը շարունակում է...

Մի անգամ Պարոյրը մեզ հրաւիրեց իր տուն: Կարծեմ իր ծննդեան օրն էր: Այնտեղ մենք հանդիպեցինք նկարչուհի Ռեգինա Ղազարեանին, Համօ Սահեանին, Հրաչեայ Յովհաննիսեանին, Էմինին՝ տիկնոջ հետ եւ էլի շատերին, ում չէի ճանաչում: Պարզուեց՝ Նելլին սիրալիր, լաւ տանտիրուհի է: Նա հիանալի հիւրասիրութիւն էր կազմակերպել: Մենք ճաշակեցինք նրա պատրաստած համեղ խորտիկները, իսկ տղամարդիկ խմում էին ու ծխում եւ, ինչպէս միշտ, վիճում...

Դա անմոռանալի երեկոյ էր Պարոյր Սեւակի սիրալիր բարեկամական ընտանիքում:

Մեր տանը նոյնպէս ամէն ինչ լաւ էր: Գուրգէնը նոր գիրք էր գրում: Մեր որդին սովորում էր դպրոցում, հակումներ ունէր օտար լեզուների նկատմամբ, ակադեմիական յիշողութիւն ունէր. երկու անգամ կարդում էր բանաստեղծութիւնը եւ սկսում արտասանել: Սակայն, ցաւօք, գործնական խելք չուներ. այս «ախտորոշումը» տուել էին ուսուցիչները: Ի միջի այլոց, ես նոյնպէս այդպիսին եմ՝ ոչ գործնական: Գուրգէն-խանը մեզնից այս առումով առաւել չէր: Այնպէս որ մեր բախտը չէր բերել: Գուրգէնչիկը լաւ ծայն ունէր: Նա երգում էր եւ շատ երգեր գիտէր: Երգեցողութեան դասին նա մեներգեր էր երգում: Բոլորը հիանում էին: Բարձրահասակ, սլացիկ տղայ էր՝ խարտեաշ մազերով: Նա այդ ժամանակ տասնմէկ տարեկան էր: Գրում էր գեղեցիկ շարադրութիւններ, սիրում էր պոեզիա, գրականութիւն:

Մեր տանը տղամարդիկ զբաղւում էին լուրջ գործերով, իսկ ես, ինչպէս միշտ, հրահանգներ էի տալիս եւ փորձում դաստիարակել: Բայց, աւա՜ղ, ինձ ոչ ոք չէր լսում:

Պարոյրը յաճախ էր այցելւում մեզ եւ միշտ մեղր էր բերում իր հայրենի գիւղից: Ինձ, այնուամենայնիւ, թւում էր, որ նա շատ է փոխուել: Օր ու գիշեր ծխելը թողել էր իր հետքը: Նա հազում էր, հազի բռնկումները սարսափելի էին, ուղղակի շնչահեղձ էր լինում, կարմրում, կապտում: Այդ պահերին Գուրգէնը սարսափով հետեւում էր ընկերոջը եւ ինձ հասկացնում, որ իրեն մեծակ չթողնեն, դուրս չգամ սենեակից: Նա վախենում էր ընկերոջ կեանքի համար: Այդ ճգնաժամային պահերին էլ Սեւակը ձեռքից բաց չէր թողնում ծխախոտը: Երբ հազի նոպան անցնում էր, նա շարունակում էր ծխել: Յետոյ խօսում էր Գուրգէնի հետ եւ գնում: Մի անգամ Գուրգէնը պարծենալով ասաց, որ գիրք է գրում իր հայրենի քաղաքի մասին: Ինձ թուաց՝ Պարոյրն այնքան էլ ուրախ չէր... Մեր հիւրի գնալուց յետոյ ես ասացի Գուրգէնին.

- Տեսնո՞ւմ ես՝ ո՞նց է տանջւում մարդը: Թող քեզ դաս լինի: Թո՛ղ ծխելը: Ի՞նչ օգուտ կայ դրանից:

- Քեզ համար հեշտ է խօսելը: Իսկ ես չեմ կարող աշխատել առանց ծխախոտի: Մի՛ խմիր, մի՛ ծխիր, մի՛ զբօսնիր, թէ չէ կը մեռնես: Ահա քո քաղաքականութիւնը: Էլ ինչո՞ւ եմ ապրում:

- Լա՛ւ, արա՛, ինչ ուզում ես: Էլ ոչինչ չեմ ասի: «Շտապ օգնութիւն» ինքդ կը կանչես:

Աստուած, ո՞վ է ստեղծել այս խենթ տաղանդներին, որոնք այդպէս անգթօրէն խաթարում են իրենց առողջութիւնը: Ճիշդ են ասում, որ նրանք խելագար են, աննորմալ եւ անմիտ: Որտե՞ղ եմ ես ընկել...

Ամէն անգամ, երբ գնում եմք Լիտուա, մենք կանգ եմք առնում Մոսկուայում, տարբեր հիւրանոցներում: Մոսկուայում Գուրգէնը հանդիպում էր իր ընկեր Աբ-

րահամ Ալիքեանին: Նա եկել էր Ֆրանսիայից, շատ լաւ գիտէր ֆրանսերէն եւ թարգմանիչ էր:

Մի անգամ Աբրահամը ցոյց տուեց ֆրանսերէնից հայերէն կատարած իր թարգմանութիւնները եւ ասաց. «Հասկանո՞ւմ էք, Գուրգէն-խան, Պարոյրը խնդրեց ինձնից այս թարգմանութիւնները, եւ ահա, տեսէ՛ք, իր նոր գրքի մէջ հատուածներ է դրել ֆրանսիացի բանաստեղծի երկից, որը ես եմ թարգմանել»: Նա ցոյց տուեց Գուրգէնին Սեւակի գիրքը:

Գուրգէնը բարկացաւ. «Ախր սա գրագողութիւն է: Ինչպէ՞ս է համարձակուել: Մի՞թէ ամօթ չէ: Ես Պարոյրից չէի սպասում նման բան»:

Գուրգէնը՝ բարկացած եւ դառնացած, յօդուած գրեց՝ մոռանալով, որ գրում է սիրելի, թանկ ընկերոջ դէմ: Յօդուածը տարաւ ամսագրի խմբագրութիւն: Խմբագիրը կարդացել էր եւ տուել Սեւակին: Վերջինս սաստիկ բարկացել էր եւ չէր կարողանում ներել Գուրգէն-խանին, որին այդքան սիրում էր: Պարոյրը սարսափելի վրէժ լուծեց:

Արդէն լոյս էր տեսել «Այրուող այգեստաններ» գիրքը: Պարոյրն այնպիսի գրական աղմուկ բարձրացրեց, որ անհնար է նկարագրել: Նրան միացան շատ վիրաւորուածներ, որոնց Մահարին քննադատել էր: Վայրի ոռնոց բարձրացաւ: Դա ահաւոր ջախջախում էր, որ կազմակերպուեց հիւանդ, տառապած գրողի դէմ: Մանրամասն չեմ գրի, որովհետեւ այդ մասին գրել եմ մէկ այլ յիշողութեանս մէջ:

Լուրեր էին հասնում, որ Գրականութեան ինստիտուտում Սեւակը ելոյթներով հանդէս է գալիս եւ անողորմ քննադատում Մահարու գիրքը, նրան անուանում դաւաճան, թուրքերի սպասաւոր, յայտարարում, թէ իբր «Այրուող այգեստաններ»ը թարգմանում է Հայաստանի թշնամիների կողմից եւ պէտք է տպագրուի: Նոյնիսկ ինձ է յիշատակում իմ սիրելի եղբայրիկը. «Այո՛, նա է մեղաւոր: Եթէ չլինէր Անտոնինան, Մահարին կը գրէր այլ կերպ...»: Այո՛, պարո՛ն Սեւակ, հենց ինքը՝ Գուրգէն-խանն էր Ձեզ ասել, որ եթէ չլինէր Անտոնինան, իր ոսկորները կը մնային Սիբիրում, ինչպէս դա եղաւ շատերի հետ... Իսկ եթէ Մահարու ոսկորները մնային Սիբիրում, այդ գիրքը չէր գրուի, Գուրգէն Մահարին Երեւանում չէր յայտնուի... Ի դէպ, Գուրգէնը եւս ինձ էր մեղադրում. «Ի զուր այն ժամանակ ջանացիր ինձ դուրս գրել հիւանդանոցից: Հիմա հանգիստ պառկած կը լինէի այնտեղ, եւ չէր լինի ոչ մի տագնապ, ոչ մի վիրաւորանքի խօսք չէի լսի: Լաւ կը լինէր՝ յաւերժ քնելի»:

Մի անգամ Գուրգէնչիկը դպրոցից տուն վերադարձաւ լացելով.

- Մայրի՛կ, բոլորն ասում են, որ Գուրգէն Մահարին ծառայում է թուրքերին, իսկ նրա գիրքը արդէն պէտք է տպագրուի թուրքերէնով: Այդ ամէնը ասել է Պարոյր Սեւակը իր ելոյթի ժամանակ: Մայրի՛կ, չի կարող պատահել: Սեւակ քեզին այնպէս սիրում էր հայրիկին: Մայրի՛կ, չեմ հասկանում՝ ինչ է կատարւում...

Ի՞նչ կարող էի պատասխանել բարի, դիւրահաւատ տղային, որը զուրկ էր գործնականութիւնից եւ ի զօրու չէր հասկանալ մարդկային խորամանկութիւնն ու ստորութիւնը.

- Մի՛ յուզուիր, տղա՛ս: Այս կեանքում ամէն ինչ պատահում է: Փառք Աստծոյ, շուտով արձակուրդ է, եւ մենք գնալու ենք Լիտուա: Մեր ընկերները մեզ են սպասում:

Գուրգէնը շատ ծանր էր տանում այս ծաղրուծանակը. «Անտոնինա՛, չկայ

աւելի դաժան ցաւ, երբ քո գրական աշխատանքը ցեխի մէջ են գցում: Եւ դա անում են սիրելի, հարազատ մարդիկ, քո հայրենակիցները: Իսկ ո՞ր են այն գրողները, որ գինարբութեան էին անում մեր տանը: Ոչ մի բառ չասացին՝ ի պաշտպանութիւն իմ գրքի: Կարծես աշխարհը շուռ է եկել...»:

Գիշերները շատ անգամ Գուրգէնը փորձել է ցած նետուել պատշգամբից: Ես անընդհատ հետեւում էի նրան: «Դու էլի այստե՞ղ ես,- ասում էր նա: Աստուած իմ, նոյնիսկ մեռնելո՞ւ իրաւունք չունեն: Սա ի՞նչ ճակատագիր է: Բոլորը ուրացել են ինձ, մնացել ես միայն դու, իմ բարի՝ հրեշտակ: Գիտես՝ քեզ ինչ կ'ասեն: Յիմար էինք մենք, որ եկանք այստեղ: Կը մնայինք Սիբիրում որպէս ազատներ: Այնտեղ ինչքա՞ն լաւ մարդիկ կային: Հենց հիմա՝ կը գնայի, բայց էլ ուժ չունեն...»:

Պալանգայում իր կեանքի վերջին օրերին Գուրգէնը յաճախ էր կրկնում. «Բոլորին կը ներեն, բայց Պարոյրին՝ երբեք: Ես սիրում էի նրան որդուս պէս: Ես նրա դէմ գրչով էի դուրս եկել, նա իմ դէմ՝ կացնով...»:

Այս բռնադատութիւնը տեւեց երեք տարի: Գուրգէնի առողջութիւնը վերջնականապէս քայքայուեց: Նա սարսափելի վատ էր զգում: Նիհարել էր, դարձել քառասուն կիլոգրամ: Ոչ մի հոգատարութիւն, ոչ մի քնքուշ բառ չէին սփոփում վիրաւորուած գրողին: Ես նստում էի աջ կողմում, Գուրգէնչիկը՝ ձախ.

- Հայրի՛կ, մի՛ հիւանդացիր, մի՛ հեռացիր: Ամէն ինչ լաւ կը լինի: Ես ու մայրիկը քեզ շատ ենք սիրում,- մխիթարում էր հօրը մեր որդին:

- Գուրգէ՛ն ջան, սիրելի՛ս, իմ թանկ մարտական ընկեր: Դու հպարտ եղիր քո գրքով: Ուրեմն դու հանճարեղ ես գրել, որ քո թշնամիները նախանձից վայում են: Կը գայ ժամանակը, եւ քո գիրքն իր արժանի տեղը կը գտնի հայ գրականութեան մէջ,- ասում էի ես:

- Ես գիտեմ, որ այդ ժամանակները կը գան: Կը գտնուեն ե՛ւ «քաջ Նազարը», ե՛ւ գրականութեան բիզնեսմենները, այս ոլորտի բազում սպեկուլանտները: Նրանք իմ գրքից կը քանեն իրենց օգուտը, փառք կը ստեղծեն իրենց համար, բարեկեցութիւն: Այսօր իմ ստեղծածը զցել են ցեխի մէջ: Եւ ես գնում եմ այս աշխարհից դժբախտ, նեղացած, վիրաւորուած: Դուք երկուսդ, իմ սիրելիներ, տանջւում էք իմ պատճառով: Շնորհակալ եմ, իմ բարի՝ փերի, որ դու իմ կեանքի վերջին օրերին կողքիս ես,- ասում էր եւ արտասւում:

Գուրգէնչիկը նոյնպէս լալիս էր: Նա շոյում էր հօրը, համբուրում, մխիթարում: Յետոյ Գուրգէնը կարծես ինչ-որ բան յիշեց եւ ասաց.

- Անտոնինա՛, աղաչում եմ քեզ, մի՛ թող երեւանը: Դու միակ մարդն ես, որ կարող է պատմել իմ մասին ողջ ճշմարտութիւնը: Չէ՞ որ դու իմ դաժան կեանքի ուղեկիցն ես: Խնդրում եմ, գրի՛ր յուշեր մեր միասին անցած ճանապարհների մասին: Գրի՛ր ու ոչ ոքի մի՛ խնայիր: Դա շատ կարելոր է պատմութեան համար:

- Մի՛ յուզուիր, դառն օրերի իմ ընկեր, քո յիշատակը պահելու համար ամէն ինչ կ'անեն: Դու չես մոռացուի,- խոստացայ ես մեռնող բազէին:

Մեր տանը թագաւորում էր մռայլութիւնը, իսկ անողորմ մահը պտըտւում էր Գուրգէն Մահարու շուրջը: Մեր որդին տեսնում էր այդ ամէնը, հասկանում, եւ այդ ողջ ցաւը ճգնում էր նրա մանկական սիրտը: Մեր տանը ծիծաղ չկար, ուրախութիւն չկար, լուսաւոր օրեր չկային: Շուրջը խաւար էր: Նախանձը, ատելութիւնը եւ անգթութիւնը շրջապատել էին մեզ:

Եկաւ վերջը, պատահեց ամէնից սարսափելին, այն, ինչից այդքան վախեցնում էինք: 1969 թուականի Յուլիսի 16ին Պալանգայի հիւանդանոցում հան-

գաւ Գուրգէն Մահարին, նրա տառապած սիրտը դադարեց բաբախել: Բժիշկներն ամէն ինչ արեցին, բայց փրկել հիւանդին չյաջողուեց: Յետոյ նրանք ինձ ասացին. «Նման ծերերին չէր կարելի բերել այսքան հեռու: Նա հաւանաբար արդէն իննսուն տարեկան է»: Այդպէս էր երեւում տանջահար, անարգուած հայ դասական Գուրգէն Մահարին: Այդ ժամանակ նա ընդամենը 66 տարեկան էր:

Գուրգէնչիկը շատ ծանր տարաւ հօր կորուստը, նա պարզապէս թմբիրի մէջ էր: Ես էլ լաւ վիճակում չէի, բայց պարտաւոր էի սփոփել մեր տղային: Նա 14 տարեկան էր: Վտանգաւոր տարիքում:

Եւ այսպէս, մեր սիրելի Գուրգէնի խնդրանքով մնացինք Երեւանում: Մենք՝ երկու որբեր, որոնք այստեղ ոչ ոքի պէտք չեն: Ոչ ոք ցաւակցութիւն չյայտնեց, չհարցրեց, թէ ինչպէս ենք ապրում: Յիշում եմ՝ անցեալում Սեւակը մեծ յարգանքով էր վերաբերում ինձ. հիմա իմ անառակ եղբայրիկը նայում էր ինձ զայրացած, արհամարհանքով եւ չէր բարեւում: Նոյն կերպ էր վարւում կինը՝ Նելլին: Չէի հասկանում՝ ո՞ր մեղքիս համար են այդպէս ատում ինձ: Ես ինձ յանցագործ էի զգում:

Այդ ժամանակ Պարոյր Սեւակի փառքն աճում էր ոչ թէ օրերով, այլ ժամերով: Ամենուր միայն ու միայն լսւում էր՝ Պարոյր Սեւա՜կ, Պարոյր Սեւա՜կ: Կարծես բոլորը յափշտակուած լինէին: Իսկ Գուրգէն Մահարուն առհասարակ վտարել էին հայ գրականութիւնից: Պարզւում էր, նա ոչ մի լաւ բան չի գրել:

Հանգուցեալի քառասունքից յետոյ Համօ Սահեանի (թող պայծառ լինի յիշատակը) խնդրանքով Գրողների միութիւնը 15 օր Ծաղկաձորում հանգստանալու ուղեգիր տուեց մեզ: Որդուս հետ գնացի: Այնտեղ տեսայ շատ գրողների, որոնք հարթում էին մեր տանը, բայց նրանցից ոչ մէկը չմօտեցաւ՝ ցաւակցութիւն արտայայտելու եւ Գուրգէն Մահարուն յիշելու: Մենք դարձել էինք «ժողովրդի թշնամիներ»:

Կեանքը շարունակւում է: Ես փորձեցի ինչ-որ բան անել Գուրգէնի յիշատակին: Առանձնասենեակը, որտեղ ապրում էր եւ աշխատում գրողը, որտեղ հաւաքւում էին ընկերներն ու քննարկում «կարեւոր հայկական հարցեր», ես դարձրի մերժուած հայ գրողի թանգարան: Ապա գրեցի յիշողութիւններ մեր անցած ուղիների մասին (այդ ամէնը գրուել էր 1972 թուականին, բայց հրատարակուեց 2003-ին՝ շնորհիւ Գրողների միութեան նախագահ Լեւոն Անանեանի: Շնորհակալութիւն մեր սիրելի նախագահին):

Ամէն դէպքում ես զգում էի, որ մեզ ատում են: Ուզում են, որ անհետանանք: Բայց մենք մնացինք Երեւանում՝ ի հեճուկս մեր թշնամիների:

Արդէն երկու տարի էր, որ մենք ապրում էինք Երկուսով: Ամբողջ օրը մորմոքում էինք եւ յիշում մեր հայրիկին: Ամէն ամառ մեկնում էինք Լիտուա: Այնտեղ բուժում էինք մեր հոգու վերքերը եւ ուժ հաւաքում հետագայում գոյատեւելու համար:

Մի անգամ՝ ամրանը, Պալանգայում մեր հարեւանը՝ մոսկուացի մի գրող, ցոյց տուեց ինձ «Իզվեստիա» թերթը, ուր տպագրուած էր հայ բանաստեղծ Պարոյր Սեւակի ընտանիքի հետ տեղի ունեցած ողբերգութեան լուրը:

Կարդացի: Դա ինձ համար մեծ հարուած էր: Հաւաքուեցին մեր հարեւան հանգստացողները, հետաքրքրուեցին, թէ ինչի՞ հետեւանքով է մահացել, հնարաւոր՞ է յատուկ կազմակերպուած լինի: Իսկ ինձ համար պարզ էր, որ Սեւակին սպանել է նա, ով տուել է նրան անտոմբեքնայի դէկին նստելու իրաւունք, նա, ով տուել է նրան վարորդական իրաւունք: Պարոյր Սեւակ մեծ բանաստեղ-

ծը քայքայուած նեարդերով, հազի նոպաներով, ի հարկէ, իրաւունք չունէր մեքենայ վարելու: Դա կորստեան մատնեց երկուսին, եւ մնացին երկու որբեր:

Նշանաւոր հայ բանաստեղծը բարդ բնաւորութիւն ունէր, երբեմն ինքն իրեն չէր կարողանում գտնել: Նա միշտ լարուած էր, միշտ խառնուած, շտապում էր ինչ-որ տեղ: Նա շտապում էր ապրել, կարծես զգում էր, որ իրեն քիչ ժամանակ է մնացել...

Պարոյր Սեւակը եթէ ընկեր էր, ապա իսկական, ուշադիր, նուիրուած ընկեր էր: Իսկ եթէ թշնամիդ դարձաւ՝ ազատուիր: Անգթօրէն կ'ոչնչացներ քեզ: Այսպէս Պարոյր Սեւակը ֆիզիքապէս ոչնչացրեց Գուրգէն Մահարուն, նրա գիրքը՝ «Այրուող այգեստաններ»ը անուանեց ախտաւոր, արատաւոր, հայ գրականութեան խայտառակութիւն:

Մի անգամ Գուրգէն Մահարին ասաց փիլիսոփայօրէն. «Տե՛ս, Անտոնի՛նա, 100 տարի յետոյ չեն լինի նոյնիսկ նրանք, ովքեր այսօր ծնուեցին: Ամենաշատը յիսուն տարի յետոյ չեն լինի ո՛չ իմ ընկերները, ո՛չ իմ թշնամիները... Որքա՛ն բարդ է կեանքը: Հարցնում եմ՝ ինչու մեր մէջ այդքան շատ ատելութիւն, նախանձ եւ անխղճութիւն կայ: Բոլորս գնալու ենք այնտեղ, փառք Աստծոյ, ոչ ոք չի մնալու. ոչ մեր ղեկավարները, ոչ դեւի չեկիստ-սպասաւորները, որոնք տանջում էին մեզ եւ միմչեւ հիմա հետեւում են: Ընկերներ՝, մենք բոլորս հանդիպելու ենք այնտեղ՝ Յաւերժի թագաւորութիւնում: Յոյս ունեն եւ իմ ընկեր Պարոյր Սեւակին այնտեղ տեսնել, որ այն աշխարհում հետը քննարկեմ «Այրուող այգեստանները»: Մինչ հանդիպում»:

Այնուամենայիւ, շատ ցաւալի է եւ վիրաւորական, որ երկու բանաստեղծների գեղեցիկ ընկերութիւնը նման ողբերգական աւարտ ունեցաւ:

20 Յուլիս 2007, Երեւան



ԹՈՐՈՍ ՏԵՐ ՅԱԿՈԲԵԱՆ - «Անտառը»

ՏԵՆՈՒՐ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ. ՀԻՄԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԳՈՒՐԳԷՆ ՄԱՅԱՐՈՒ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆ

*Յաճախ եմ երազում տեսնում Գուրգեն Մահարուն.
Նա միշտ տխուր է, նեղսրտած, մտահոգ: ...
Անտոնինա Մահարի*

1968 թուական: Մենք լրիւ կազմով՝ երկու Գուրգենն ու ես, Լիտուայից վերադարձանք Երեւան: Գնացքում Գուրգենի վիճակն անսպասելիօրէն վատացաւ: Բժշկական օգնութիւն է անհրաժեշտ: Ջերմութիւնը 40 աստիճան է: Ես տագնապի մէջ եմ: Յայտնեցի ուղեկցորդուհուն: Թբիլիսիում կանգնեցրին գնացքը, եկան բժիշկները եւ կատարեցին անհրաժեշտ ամէն ինչ: Ամբողջը՝ մարդկայնօրէն: Յետոյ ասացին ինձ. «Երեւանում՝ անմիջապէս հիւանդանոց: Շտապ վիրահատութիւն է անհրաժեշտ: Մենք արդէն հաղորդել ենք այնտեղ»:

Ես եւ Գուրգենիկը սարսափի մէջ ենք: «Հայրի՛կ, հայրի՛կ, դու էլի հիւանդանոց ես գնալու: Ինչո՞ւ մեր բախտը չի բերում», - հեծկլտում էր 12ամեայ տղան:

Երեւանում՝ կայարանում, «Շտապ օգնութեան» մեքենան արդէն մեզ էր սպասում: Մենք հրաժեշտ տուինք Գուրգենին, եւ նրան տեղափոխեցին հիւանդանոց:

Տանը մնացինք երկուսով՝ ես եւ Գուրգենիկը: Չնայած սեպտեմբերեան տաք օրերին՝ մեր տունը ցուրտ էր եւ դատարկ: Հիմա ամէն օր ես եւ որդիս մեր հայրիկին այցելութեան ենք գնում հիւանդանոց:

Գուրգենին պատրաստում են վիրահատութեան: Նա շոյում է տղային եւ արցունքն աչքերին ասում.

- Որտեղի՞ց յայտնուեցիր այսքան բարի, նուրբ, զգայուն. կարծես այս աշխարհից չլինես: Մեծացի՛ր խելացի, օժտուած, գեղեցիկ, բարձրահասակ եւ սլացիկ, ինչպէս բարտի: Զգիտեմ՝ ինչ է քեզ սպասում այս բիրտ աշխարհում: Միայն մի բան կարող եմ ասել, բալի՛կ ջան, որ դու զարդարում ես իմ ծերութիւնը: Շնորհակալ եմ ճակատագրին, որ ուղարկեց ինձ այս բարի հրեշտակին՝ քո մօրը. մայրդ փրկեց ինձ եւ պահպանում է մինչեւ հիմա: Շնորհակալ եմ Աստծուն, որ ինձ տուեց քեզ, տղա՛ս:

- Հայրի՛կ, տո՛ւն գնանք: Առանց քեզ մեր տունը դատարկ է եւ շատ տխուր, - աղաչում էր մեր տղան:

- Սպասի՛ր, սպասի՛ր, տեսնենք՝ բժիշկներն ինչ են ասում, - պատասխանեց հիւանդը տխրութեամբ:

Մի օր՝ վաղ առաւօտեան, Լիտուայից բերեցին Կոստան Ջարեանին: Նա այնտեղ հանգստանում էր առողջարանում: Նրա հետ տեղի էր ունեցել նոյն պատմութիւնը, ինչ որ Մահարու հետ: Նրան ուղեկցում էր մի երիտասարդ բժիշկ՝ բժշկական գիտութիւնների թեկնածու: Վերջինս իմ հայրենակիցն էր, իսկական բժիշկ, իսկական մարդ:

Գուրգեն Մահարուն շտապ վիրահատեցին, այնուհետեւ կիսագիտակից վիճակում բերեցին հիւանդասենեակ: Ահա թէ ինչ ասաց իմ հայրենակից բժիշկը, որ ներկայ էր եղել վիրահատութեանը.

- Ես զարմացած եմ, ցնցուած եւ վրդովուած բժիշկների անհոգի վերաբերմունքից: Նրանք վիրահատութիւն կատարեցին առանց անզգայացման, ծաղրում էին հիւանդին: Մեզ մօտ՝ Լիտուայում, հիւանդի հետ նման կերպ վարուող բժշկին անմիջապէս կ'ազատեն աշխատանքից: Ահա իմ խորհուրդը, քոյր իմ: Եթէ ուզում ես՝ ամուսինդ այստեղից ողջ դուրս գայ, ոչ մի թոպէ մենակ մի՛ թող նրան: Հսկիր օր ու գիշեր: Հնարաւոր է՝ դա փրկի հիւանդին: Բժիշկների վրայ յոյս մի՛ դիր: Այստեղ, չգիտեմ ինչու, թշնամաբար են ընդունում Գուրգէն Մահարուն:

Իսկ ես գիտեմ...

Այս տխուր պատմութեանն ականատես լինելով՝ ամէն օր աղօթում էի Աստծուն, որ ազատի բժիշկներից, հիւանդանոցից, չեկիստներից եւ բանտից: Միմէն հիմա անվերջ կրկնում եմ այդ աղօթքը...

Իմ սիրելի՝ Գուրգէն Մահարի, պարզւում է՝ դու հիմա ընկել ես «հայրենասերների» ձեռքը: Երեւում է՝ քո դէմ պատերազմի են դուրս եկել անգամ «սպիտակ խաւաթները»: Հիմա պէտք է մտածել քեզ մենակ չթողնելու մասին: Գուրգէնչիկը 12 տարեկան է: Նրան նոյնպէս չի կարելի մենակ թողնել:

Փառք Աստծոյ, Գուրգէնի ազգականը՝ Արամ Աճէմեանը, սովորում է Երեւանում՝ ճարտարապետական ֆակուլտետում: Շատ բարի, ազնիւ երիտասարդ է, քսան տարեկան: Այդ ծանր օրերին Արամը մեզ յենարան դարձաւ: Տերեկը նա էր հերթապահում Գուրգէնի մօտ, մինչ ես գնում էի գնումներ կատարելու, կերակուր պատրաստելու եւ բնակարանը կարգի բերելու: Իսկ գիշերը հերթապահում էի ես: Արամը մնում էր Գուրգէնչիկի կողքին, օգնում նրան տնային յանձնարարութիւնները կատարելիս: Նրանք այնքան նման էին, կարծես երկու եղբայրներ լինէին: Հիմա ես երկու որդի ունեի: Գուրգէնը շատ էր սիրում Արամին:

Արամը Գահիրէից էր եկել: Նա, հերթապահելով հիւանդի կողքին, պատմում էր նրան իր քաղաքի մասին, իր հօր՝ Գուրգէնի հօրեղբօր որդու մասին: Եւ Գուրգէնը աստիճանաբար ուշքի էր գալիս: Բայց, այնուամենայնիւ, նա ծանր հիւանդ էր, ջերմութիւնը չէր իջնում:

Վիրահատութիւնից երկու օր անց բժիշկներն ինձ յայտնեցին, որ Գուրգէն Մահարու վիճակն անյուսալի է: Թող զան հարազատները եւ ընկերները՝ հրաժեշտ տալու: Այս ամէնը նրանք ասացին հրճուանքով, կարծես հարսանեկան արարողութեան էին հրաւիրում...

Գրողներից ոչ ոք չեկաւ: Ինչպէս ամէն օր, եկաւ Վարդան Աճէմեանը: Հաւատարիմ եղբայր, հաւատարիմ ընկեր: Նա շատ մտահոգ էր եւ տխուր, որ իր հարազատ մարդը հեռանում է այս աշխարհից: Ես որոշեցի նրան զուարթացնել:

- Վարդան՝ Նիկիտովիչ, ես մտածում եմ, որ դեռ ամէն ինչ կորած չէ: Ես ու Արամը կը հերթապահենք, կ'անենք ամէն ինչ, որ Մահարին դուրս գայ հիւանդանոցից:

- Սիրելի՛ Անտոնինա, ի՞նչ խօսքերով արտայայտեմ երախտագիտութիւնս այն ամէնի համար, ինչ որ արել ես յանուն իմ հիւանդ եղբօր: Շնորհակալ եմ քեզնից, - ասաց Վարդանը եւ արցունքն աչքերին հեռացաւ:

Եկան Գուրգէնի հարազատները՝ Էմման, իր դուստր Նատաշան եւ փեսան՝ Արիկը: Հրաշալի մարդիկ: Նրանք ոգեշնչեցին եւ յոյս տուեցին ինձ:

Մի անգամ՝ վաղ առաւօտեան, երբ դեռ ես էի հերթապահում, Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Անտոն Քոչինեանը իր շքախմբով մտաւ Գուրգէն Մահարու հիւանդասենեակը: Վերջինս ուրախացաւ, եւ երկար զրուցեցին:

Քոչինեանը կատակում էր հիւանդի հետ, եւ դա ուժ էր տալիս տանջուած գրողին: Քոչինեանն ինձ նոյնպէս հաճոյախօսութիւններ արեց եւ նոյնիսկ երախտագիտութիւն յայտնեց: Յետոյ հրաժեշտ տուեց եւ գնաց: Աչքերուն թախիժ ու ափսոսանք կար: Նա բարի մարդ էր:

Մի անգամ՝ ուշ գիշերով, Բայանդուրը եկաւ որդուն՝ Աշոտի հետ: Գուրգէնը շատ ուրախացաւ՝ տեսնելով գրականութեան աշխարհի մարդուն: Բայանդուրն ասաց, որ ես կարող եմ տուն գնալ, իսկ ինքը կը մնայ եւ կը հերթապահի մինչ առաւօտ: Ես հանգիստ էի, որովհետեւ թողնում էի Գուրգէնին յուսալի ձեռքերուն: Աշոտը ուղեկցեց ինձ: Մենք ոտքով էինք գնում: Ուշ գիշեր էր, եւ քաղաքային տրանսպորտն արդէն չէր աշխատում: 18ամեայ պատանի Աշոտը, որը նկարիչ ուսանող էր, ինձ մխիթարում էր հարազատ մարդու նման, եւ շատ հաճելի էր, որ Երեւանում դեռ կային այսպիսի զգայուն, հիւանալի մարդիկ:

Ամէն օր Գուրգէնիկը լինում էր հիւանդանոցում.

- Ես ուզում եմ տեսնել հայրիկին: Ես ուզում եմ լինել հայրիկի կողքին: Ինչո՞ւ նա չի գալիս տուն: Անվերջ այդ հիւանդանոցները...Օ՜յ, ինչպէ՞ս եմ նրանք յոգնեցրել ինձ...

Գուրգէնը, ի հարկէ, չգիտէր, որ բժիշկները խաչ են քաշել իր վրայ: Ես ցոյց չէի տալիս, որ մեր գործերը վատ են: Բայց որպէսզի պարտքս կատարեմ մինչեւ վերջ, մի անգամ Գուրգէնին ասացի.

- Հնարաւոր է՝ դու ուզում ես տեսնել կնոջը, որին սիրել ես, ասա՛, եւ ես կը գտնեմ նրան:

Գուրգէնը պատասխանեց.

- Կինը, որին ուզում եմ տեսնել եւ որին սիրում եմ, այստեղ է՝ իմ կողքին: Իմ սիրելի՛ Անտոնինա, ոչ ոք չի կարող փոխարինել քեզ: Ինքը՝ Աստուած է ուղարկել այսպիսի բարի հրեշտակ իմ կեանքի ծանր օրերին: Դու երկրորդ կինն ես մօրիցս յետոյ, որը մայրաբար հոգ է տանում իմ մասին:

- Գուրգէն, իսկ գուցէ դու ուզում ես տեսնել Գրիգորի՞ն (արդէն երկու տարի էր՝ մեր անառակ որդին չէր երեւում), ասա՛, ես կը գտնեմ նրան եւ կը բերեմ այստեղ:

- Եթէ նա չի փնտռում ինձ, ինձ էլ հարկաւոր չէ: Ինչի՞ս է պետք նա: Յիմար էի այն ժամանակ, երբ ամուսնացայ: Երեսուներկու տարեկան էի, դեռ չէի ամուսնացել. թէ ինչո՞ւ ի գուր այդ ժամանակ յիմարացայ,- բարկացած պատասխանեց Գուրգէնը: Իր համար տիաճ բաների շուրջ էլի շատ խօսքեր ասաց, որոնք տանջում էին շարունակ... Որպէսզի փոխեմ հիւանդին տիաճութիւն պատճառող թեման, ես խօսակցութիւնը տարայ դէպի նրա «անիծուած գիրքը».

- Գիտե՞ս, Գուրգէն, քո գիրքը հանճարեղ է, քո թշնամիները նախանձից են վայում: Ապագայում ծառայութիւններիդ համար կը գնահատուես: Դու կարող ես հպարտանալ քո ստեղծագործութեամբ:

Գուրգէնը մտածեց եւ ցաւով ասաց.

- Ես գիտեմ՝ գալու եմ ուրիշ ժամանակներ: Կը գտնուի եւ «քաջ Նազարը» (որքա՞ն մեծ է մեր գրող Թումանեանը, ինչպիսի՞ կերպարներ է ստեղծել) եւ իմ անունով հեռուն կը գնայ, նոյնիսկ հերոս կը դառնայ: Բայց այդ ամէնը նա չի վաստակել, որովհետեւ ծանր օրերին կողքիս չի եղել: Իսկ ինչ վերաբերում է իմ գրքին, ես համոզուած եմ, որ գրականութեան մէջ կը գտնուեն բիզնեսմեններ, սպեկուլանտներ, ովքեր իմ արիւնով եւ սրտով գրուած ստեղծագործութիւնից մեծ շահոյթ կ'ունենան: Դու տեսնո՞ւմ ես, Անտոնինա, ով է աշխատում,

տանջուում, եւ ուն են հասնում դափնիներն ու հոնորարները: Դու ho լաւ գիտես՝ ինչպիսի «երախտագիտութիւն» ես ստացայ այս գրքի համար: Քեզ՝ իմ ծանր ճակատագրի ուղեկցուիուն էլ բաժին հասաւ: Հիմա ուշադիր լսի՛ր, թէ քեզ ինչ են խնդրում: Դու միակ մարդն ես ամբողջ աշխարհում, որը գիտի իմ մասին ողջ ճշմարտութիւնը եւ լաւ է հասկանում՝ ով է բարեկամ, ով՝ թշնամի: Գրի՛ր, սիրելի՛ս, ամէնը, ինչ որ գիտես, եւ ոչ ոքի մի՛ խնայիր: Ե՛ւ այս հիւանդանոցի մասին գրիր, ե՛ւ բժիշկների: Ես ուզում եմ, որ աշխարհն իմանայ՝ ինչպէս են վարուում տանջուած հիւանդ գրողի հետ: Գրի՛ր: Դա իմ ցանկութիւնն ու խնդրանքն է:

- Ոչ ոք չպէտք է մոռացուի, ոչինչ չպէտք է մոռացուի,- խոստացայ ես:- Կը կատարուի:

Գնալուց առաջ իմ հայրենակիցը օգտակար խորհուրդներ տուեց, թէ ինչպէս հիւանդին գերծ պահեն թոքերի բորբոքումից, որը յաճախ է լինում վիրահատութիւնից յետոյ: Ես ուշադրութեամբ լսեցի նրա խորհուրդները եւ սրբօրէն կատարեցի: Նա գնաց՝ մեր բժիշկների վարքագծի վրայ զայրացած. «Նրանք խայտառակում են մեր մարդասիրական մասնագիտութիւնը, եւ ես երբեք չեմ մոռանայ դա: Այդպիսի անհոգի վերաբերմունք մեր երկրում չեն տեսել...»:

Գուրգէնն արդէն գիտակցութեան եկաւ եւ սկսեց ապաքինուել: Մի գեղեցիկ առաւօտ բժիշկներն ասացին, որ Մահարուն կարող ենք տուն տանել: Այսպէս, ի հեծուկս բժիշկների, յուրախութիւն ընկերների, ի երջանկութիւն ինձ եւ Գուրգէնչիկի՝ Գուրգէն Մահարին այսօր թողնում է հիւանդանոցը: Գիշերը հերթապահեցի, առաւօտեան զանգահարեցի տուն եւ յայտնեցի ուրախ լուրը: Իմ երկու որդիները երջանկացած եկան հիւանդանոց: Ես ասացի Արամին.

- Արա՛մ ջան, մենք յաղթեցինք: Այս գործում դու մեծ ներդրում ունես: Առանց քո օգնութեան ես գլուխս կը կորցնէի: Շնորհակալութիւն, մեծ շնորհակալութիւն քեզ:

- Մօրաքոյր Անտոնինա, ես արեցի ամէն ինչ, որ հօրեղբայրս ապրի: Ես պատմում էի նրան Գահիրէի եւ հօրս մասին հետաքրքիր պատմութիւններ: Տեսնում էի, որ հօրեղբայր Գուրգէնը հետաքրքրութեամբ է լսում պատմածներս:

- Շնորհակալ եմ, Արա՛մ ջան: Դու մեր երկրորդ որդին ես. Գուրգէնը սիրում է քեզ. չէ՞ որ ծանր օրերին դու իր կողքին էիր:

Գուրգէնչիկը մնաց հօր կողքին. օգնում էր հագնուել եւ շտապեցնում էր. «Արա՛գ, արա՛գ, շո՛ւտ գնա՛նք այստեղից»:

Մեր սիրելի Արիկը իր մեքենայով բոլորիս տուն տարաւ: Մեծ զգուշութեամբ մենք տեղափոխեցինք Գուրգէնին: Փառք Աստծոյ, դարձեալ բոլորս տանն ենք: Չեմ կարող նկարագրել մեր ուրախութիւնը:

Մեր դուրս գալուց առաջ՝ վերջին րոպէին, ինձ մօտեցաւ սպիտակ խալաթով մի տարեց մարդ եւ ասաց. «Շնորհակալութիւն, տիկին Անտոնինա: Իննսուն տոկոսով Ձեր շնորհիւ էր, որ Գուրգէն Մահարին այստեղից ողջ դուրս եկաւ»: Նշանակում է՝ նա «հայրենասէրների» կուսակցութիւնից չէ: Յետոյ ես իմացայ, որ նա բժշկական գիտութիւնների դոկտոր է, յայտնի սրտաբան: Յաջողութիւններ նրան:

Մենք արդէն տանն ենք: Ի հարկէ, Գուրգէնն անկողնում է, իսկ Գուրգէնչիկը հսկում է նրան: Արամը մեր տան անդամն է: Գուրգէնը սիրում է նրան իր որդու պէս: Վարդան Նիկիտովիչը գալիս է ամէն օր: Վահագն Դաւթեանն ու Համօ Սահեանը մինչեւ վերջ մնացին հաւատարիմ ընկերներ: Մեր ազգականներ էմման, Նատաշան եւ Արիկը յաճախ էին այցի գալիս:

1969ի Նոր տարին այնքան աղմկոտ չէր, ինչպէս նախկինում: Հին ընկերներից եկան մի քանի մարդ: Մեր առանձնասենեակն այլեւս բոհեմա չէ: Տարօրինակ դատարկութիւն է: Բայց, փառք Աստուծոյ, մենք բոլորս միասին ենք, եւ դա մեզ ուրախացնում էր:

Ամանորից առաջ Գուրգէնը լաւ չէր զգում. նրան դարձեալ բժշկական օգնութիւն էր պէտք: Ցաւօք, մեր պոլիկլինիկայի բժիշկը մեկնել էր Տաշքենդ՝ սեմինարի: Ինձ ասացին, որ միայն երկրորդ հիւանդանոցում կարելի է գտնել մեզ անհրաժեշտ բժշկի: Վաղ առաւօտեան ես շտապեցի այնտեղ: Հանդիպեցի մի բժշկի եւ խնդրեցի գալ ինձ հետ. խոստացայ վճարել: Երիտասարդ բժիշկը պատասխանեց, որ կը գայ գլխաւոր բժշկի համաձայնութեան դէպքում: Գլխաւորը եկաւ, ես բացատրեցի, որ Գուրգէն Մահարին վիրահատութիւնից յետոյ վատ է զգում, եւ բժշկական օգնութիւն է հարկաւոր: Գլխաւոր բժիշկը դարձաւ խիստ եւ ջղային: «Ո՞վ է Գուրգէն Մահարին, որ ես նրա մօտ բժիշկ ուղարկեմ: Ո՞վ է նա», - բղաւում էր սպիտակ խալաթաւոր գազանը»: Ես վախեցայ եւ հեռացայ: Չեմ կարող նկարագրել վիրաւորանքս: Գուրգէն Մահարի, պարզւում է՝ դու ոչինչ ես...

Տուն վերադարձայ ահաւոր վիճակում, բայց հիւանդին ինչ քիչ ասի ամէն բան: Յօրինում եմ, որ այնտեղի բոլոր բժիշկներն էլ են մեկնել Տաշքենդ, բայց թող չյուզուի, ես հիմա կը կանչեմ մեր պոլիկլինիկայի բժշկին, եւ նա կ'օգնի: Այդպէս էլ եղաւ: Եկաւ բժիշկը՝ շատ բարի, ուշադիր. նա օգնեց հիւանդին, հանգստացրեց նրան: Պէտք է ասեմ, որ մեր պոլիկլինիկայում մեծ յարգանքով էին վերաբերում Գուրգէն Մահարուն: Այնտեղ կային իսկական բժիշկներ, հիանալի մարդիկ:

Եկաւ գարունը, եւ եկաւ պահը՝ Լիտուա մեկնելու: Ինձ անհանգստացնում էր Գուրգէնի վիճակը: Հոգուս մէջ ծանրութիւն կար, վատ նախազգացում ունէի:

- Գուրգէն, արի՛ այս տարի մնանք Երեւանում: Ես ուզում եմ տեսնել Երեւանեան ամառը: Ճանապարհները յոգնեցրել են ինձ, - ասում եմ ես սրտի ցաւով:

- Ինչե՛ր ես խօսում, Անտոնինա: Ի՞նչ է, քո կարծիքով, ես՝ դատապարտուածս, պէտք է մնա՞մ: Կը գնանք, ինչպէս միշտ, - պատասխանեց նա:

Մի անգամ Գուրգէնիկը դպրոցից վերադարձաւ շատ բարկացած եւ վատ տրամադրութեամբ: Գուրգէնը քնած էր: Տղաս ինձ տարաւ առանձնասենեակ:

- Մայրի՛կ, միայն խնդրում եմ՝ հայրիկին ոչինչ մի՛ ասա: Դպրոցում սարսափելի բաներ են խօսում Գուրգէն Մահարու մասին: Ասում են՝ ափսոս, որ դեռ ողջ է այդ թուրքական շունը, դաւաճանը, հայրենիքի թշնամին: Թող շուտ սատկի: Իսկ Պարոյր Սեւակը ելոյթներ է ունենում Գուրգէն Մահարու դէմ: Բայց որքա՛ն լաւ ու բարի ընկեր էր: Հիմա թշնամի է դարձել: Ես չեմ հասկանում՝ այս ինչ է կատարւում: Իմ ընկերներն էլ են փոխուել: Չեմ ուզում խօսել հետս, ընկերութիւն անել, ծաղրում են: Շուտ գնանք Լիտուա, այնտեղ սիրում եմ հայրիկին, յարգում..., - ասաց Գուրգէնիկը ցաւով եւ սկսեց լացել:

Պէտք է ասեմ, որ մեր որդու մանկութիւնը շատ տխուր էր: Միշտ բժիշկներ, հիւանդանոցներ, սիրելի հօր կեանքի համար մշտական տագնապ: Գուրգէնիկը շատ բարի էր, զգայուն այս դաժան կեանքի համար: Նա նման էր պայծառ ծիածանի սեւ երկնականարում: Բոլորին սիրում էր, բոլորին խղճում:

Մեր գնալուց մի քանի օր առաջ մեզ մօտ եկաւ Նայիրի Զարեանը՝ ձեռնափայտը բռնած. նա ջղարմատների բորբոքում (ռադիկուլիտ) ունէր, եւ ցաւերը տանջում էին նրան: Գուրգէնը շատ ուրախացաւ: Նրանք երկար գրկախառ-

նըլած էին: Քանի որ ես հայերեն չգիտեմ, Նայիրին սկսեց խօսել ռուսերեն: Նա շատ բորբոքուած էր, որ այդ «տղեկները» համարձակուել են ոռնոց սկսել Գուրգէնի գրքի շուրջ:

- Գուրգէն ջան, դու հրաշալի ես գրել: Ամբողջը ճշմարիտ է եւ անկեղծ: Դա հզօր գիրք է, որ դարերում պիտի ապրի: Դրա համար էլ նման վայրենի նախանձ է առաջացրել:

Նայիրին խոստացաւ նամակ գրել եւ վերցրեց մեր հասցէն:

- Դեռ չգիտեմ՝ ես ու Անժիկը որտեղ ենք հանգստանալու, բայց քեզ, Գուրգէն ջան, միշտ կը գրեմ:

Նա Գուրգէնին նուիրեց իր վերջին գիրքը՝ մակագրելով. «Սիրելի Գուրգէնին՝ մանկութեանս եւ ծերութեանս ընկերոջը»: Իսկ ինձ ասաց:

- Ես գիտեմ, Անտոնինա, դու ինչեր ես արել Գուրգէն Մահարու համար: Նրա համար, որ նա ապրում է եւ ստեղծագործում, շնորհակալ եմ քեզ:

Նրանք երկար գրուցեցին՝ յիշելով իրենց մանկութիւնը, «վճռելով» հայկական շատ հարցեր: Սակայն այդ ամէնի մասին արժի լռել... Եկաւ հրաժեշտի պահը. Նայիրին գրկեց իր ընկերոջը: Նայիրին հզօր էր կաղնու նման, իսկ Գուրգէնը նիհար էր, տանջահար, դժբախտ: Նայիրիի աչքերում ես տեսայ, որ ընդմիշտ հրաժեշտ է տալիս: Նա շատ տխուր էր: Հրաժեշտի տեսարանը շատ սրտառուչ էր, ուզում էի լացել...

Նայիրի Զարեանին ես տեսնում էի երկրորդ անգամ: Երբ մենք բոլորս՝ Գուրգէն Մահարին, ես, Ալագանն ու Մարօն, Նորենցը, Եկանք Կրասնոյարսկից, մոսկովեան կայարանում մեզ դիմաւորեց Նայիրին: Նա մոր զգեստներ գնեց այս հերոսների համար եւ իւրաքանչիւրին 1000 ռուբլի տուեց: Այդ ժամանակ էլ ծանօթացայ այս հսկայի հետ: Իսկ հիմա տեսնում էի երկրորդ անգամ:

Հետաքրքիր է՝ մտածո՞ւմ էր Նայիրին, զգո՞ւմ էր արդեօք, որ այդ տարին իր համար վերջինն է, եւ ինքը կեանքից կը հեռանայ իր ընկերոջից չորս օր վաղ...

Գուրգէնը գիտէր, որ Նայիրին երբեք չի վնասել իրեն, իր մասին երբեք վատ բան չի գրել: Եւ «հայրենասէրներին» միանալը Նայիրին միշտ իր արժանապատուութիւնից ցածր է համարել:

Մենք արդէն Պալանգայում ենք: Գուրգէնն ուրախ է, որ մորից իր սիրելի քաղաքում է: Այժմ Գուրգէնչիկը միշտ հայրկի հետ է. «Ես պետք է հետեւեմ, որ մեր հայրիկը չընկնի: Նա շատ նիհար է եւ թոյլ...»:

Մենք երեքով քայլում ենք սիրելի վայրերով, վայելում հրաշալի բնութիւնը եւ փորձում ուրախանալ: Շատ էի ուզում, որ Գուրգէնը մոռանար իր չարաբաստիկ գրքի մասին: Պատմում էի նրան տարբեր պատմութիւններ, բայց ի զուր: Գրողը չի կարող մոռանալ իր գրական աշխատանքի պատճառով ստացած վիրաւորանքը, ստորացումը: Այս ամէնը ծուլատում էր նրա սիրտը, նա մռայլ էր եւ մտահոգ: Գուրգէնը շատ էր զարմանում, որ Նայիրին չի գրում. չէ՞ որ խոստացել էր: Մեծ անհամբերութեամբ ընկերոջ նամակին էր սպասում: Այն, որ ընկերը մոռացել է տուած խոստումը, շատ էր յուզում նրան: Եւ ահա մի օր նամակ ստացաւ Համօ Սահեանից: Կարդաց եւ գունատուեց:

- Ի՞նչ կայ,- հարցնում եմ:

- Գործերը շատ վատ են, Անտոնինա: Համօն գրում է, որ Նայիրին պառկած է հիւանդանոցում, որտեղ ես էի բուժում. ահաւոր ցաւեր ունի: Նա կաթուածահար է, չի կարողանում քայլել: Ցաւերից գոռում է, ինչպէս առիծ: Թէեւ հինգերորդ յարկում է, բայց ներքեւում լսում են նրա սարսափելի բացականչու-

թիւները. «Օգնեցէ՛ք, օգնեցէ՛ք: Ի՞նչ է, չէ՞ք ուզում ինձ օգնել: Դուք այդքան ատո՞ւմ էք ինձ...»: Եւ այսպէս՝ օր ու գիշեր: Համօն գրում է, որ բժիշկներն սխալ են ախտորոշել. ռադիկուլիտը բուժում էին տաքացնող միջոցներով: Այնինչ նա ողնաշարի քաղցկեղ ուներ: Իրենց բուժումով արագացրել են ահաւոր հիւանդութեան ընթացքը եւ անտանելի ցաւեր առաջացրել: Նոյնիսկ մորֆին չի օգնում: Աստուած իմ, ազատի՛ր բժիշկներից,- վշտացած ասաց Գուրգէնը եւ սկսեց լացել: Ապա նայեց ինձ, ասաց բարկացած,- Ի՞նչ է, ուրա՞խ ես: Չհամարձակուե՛ս: Նա իմ ընկերն է... Ես ուզում եմ տեսնել նրան...

Իմ աչքերում ուրախութիւն չկար, ճիշդ եմ ասում: Միայն զարմանք: Ես զարմացած էի, որ նման հսկան ապրել է, ապրել, բայց, աւա՜ղ, տանջանքներով է հեռանում այս աշխարհից: Իսկ Գուրգէնի բարկացած խօսքերը ասում էին, թէ Նայիրին որքան թանկ էր նրա համար, եւ թող ոչ ոք չհամարձակուի խեղաթիւրել երկու մեծ գրողների փոխյարաբերութիւնները: Նրանք այստեղից հեռացան որպէս ընկերներ:

Այս ամէնը ես գրում եմ խորին ցաւով եւ սրտնեղութեամբ: Եւ գրում եմ ոչ թէ նրա համար, որ ինձ համար հաճելի է յիշելը, այլ գրում եմ, որովհետեւ ուզում եմ կատարել Գուրգէն Մահարու կամքը. «Անտոնի՛նա, դու միակ մարդն ես աշխարհում, ով գիտի իմ մասին ճշմարտութիւնը: Գրի՛ր: Ես ուզում եմ, որ բոլորն իմանան այդ մասին...»:

Եւ ես գրում եմ:

Իմ աչքում Գուրգէն Մահարին մեծ տառապեալ է, դժբախտ, լեզենդար մարդ: Եւ խիստ դժբախտ է նա, ով իր կեանքը նուիրեց դաժան ճակատագիր ունեցող մարդուն: Ես մօր նման հոգատար էի նրա հանդէպ:

Գուրգէնը մահացաւ 1969 թուականի Յուլիսի 16ին Լիտուայում՝ Պալանգայում: Ես այդ մասին արդէն մանրամասն գրել եմ:

Այդ տարին՝ 1969ը, սարսափելի տարի էր: Հայաստանը կորցրեց տասը գրող, գրական գործիչ: Երբ մենք Երեւան բերեցինք Մահարուն, Նայիրիի շիրմի վրայ ծաղիկներն արդէն թօշնել էին: Նա մահացել էր չորս օր առաջ:

Երեւանը թմբիրի մէջ էր: Մարդիկ յոգնել էին յուղարկաւորութիւններից եւ տխրութիւնից: Գերեզմանատանը յաճախ էի հանդիպում Անժիկին: Նա հաստատեց այն, ինչ գրել էր Համոն Նայիրիի հիւանդութեան մասին:

Ես յաճախ եմ յիշում նրանց վերջին հանդիպումը, վերջին անջատումը: Նայիրին, որը կաղնու նման ամուր էր, գրկել էր Գուրգէնին: Իսկ Գուրգէնը շատ նիհար էր, թոյլ, տանջուած եւ դժբախտ:

Շատ եմ ուզում, որ նրանք հանդիպեն այնտեղ՝ Յաւերժի թագաւորութիւնում: Լո՛յս իջնի գերեզմանիդ, լեզենդա՛ր մարդ, եւ թող պայծառ լինի յիշատակը քո ընկերների, ովքեր սիրում էին քեզ:

2007 Դեկտեմբեր, Երեւան

ԸՆԿԵՐ ՄԱՅԱՐԻՆ ԵՒ ՊԱՐՈՆ ԾԱՌՈՒԿԵԱՆԸ

Կարծեմ դա 8-9 տարի առաջ էր: Մի անգամ Գուրգենը տուն վերադարձաւ հրճուալից յուզմունքով եւ ասաց. «Գիտե՞ս, Անտոնի՛նա, Ծառուկեանն է եկել: Հնարաւոր է՝ անցնի մեզ մօտ: Ա՛յ, կը տեսնես՝ որքան գրաւիչ, հետաքրքիր մարդ է: Նա «Նայիրի» թերթի խմբագիրն է ու մեր մշակոյթի եւ սփիւռքի գրականութեան շատ խելացի գործիչներից մէկը: Հրաշալի գրող է»:

Եւ եկաւ նա՝ պարոն Ծառուկեանը՝ սեւ գանգուր մազերով, աշխոյժով լի աչքերով, որոնք նայում էին հեզմանքով եւ քննադատաբար: Ամէն ինչ հասկացող եւ ամէնքին գերող հայեացք... եւ դու ականայ կորցնում ես քեզ նրա առաջ, զգում քեզ դասը չսովորած աշակերտ...

Ես յիշում եմ՝ պարոն Ծառուկեանն արդէն նստած էր մեր առանձնասենեակում, երբ ես ներս մտայ: Ծանօթացանք: Ես նրան ինչ-որ բան ասացի անգլերէնով, նա ինձ պատասխանեց ֆրանսերէնով, իսկ Գուրգենն այդ ամբողջը թարգմանեց հայերէնի...

Յետոյ Գուրգենը յաճախ էր սիրով ու յարգանքով յիշում Անդրանիկ Ծառուկեանին:

Պարոն Ծառուկեանը յաճախ էր գալիս Երեւան: Գուրգենը հանդիպում էր նրան եւ միշտ լաւ էր զգում նրա ընկերակցութեամբ: Նրանք շատ են լուսանրկարուել: Այդ նկարներն այժմ փակցուած են Գուրգեն Մահարու թանգարանի պատերին:

Կարճ ասած՝ ընկեր Մահարու եւ պարոն Ծառուկեանի միջեւ հաստատուել էր լաւ, սրտաբուխ ընկերութիւն:

Վերջին անգամ Գուրգենը տեսնուեց Ծառուկեանի հետ 1966ին՝ Հայաստանի գրողների համագումարի ժամանակ, երբ մութ ուժերն ամէն կերպ ջանում էին սեւացնել Գուրգեն Մահարու անունը: Գուրգենի ընկերներից շատերն արդէն երես էին թեքել նրանից... եւ լողում էին հոսանքին համընթաց: Բայց պարոն Ծառուկեանն այդ ծանր օրերին միշտ Գուրգենի հետ էր:

Գուրգենն այդ ժամանակ ինձ ասում էր. «Բոլորը կարող են ինձ ուրանալ, բոլորը, բայց Ծառուկեանը՝ երբեք»: «Մի՛ հաւատայ, Գուրգեն, ոչ ոքի մի՛ հաւատայ... Դու տեսնո՞ւմ ես՝ ինչ է կատարւում շուրջդ... բոլորը քթներն են տընկել... Եւ քո Ծառուկեանը, թէեւ լաւ մարդ է, բայց նոյնպէս կը գնայ բոլորի յետեւից: Քո պատճառով նա Երեւանում չի փճացնի իր յարաբերութիւնները նրանց հետ, ովքեր կարող են իրեն օգտակար լինել...»: Ես այնպէս էի հիասթափուած բոլորից, որ այլեւս ոչ ոքի չէի հաւատում:

- «Չհամարձակուե՛ս այդպէս խօսել, Անտոնի՛նա: Դու չես ճանաչում Անդրանիկին, նա նման չէ միւսներին: Այդ մարդը սկզբունքներ ունի, լայն մտահորիզոն եւ երբեք ինձ չի դաւի: Ա՛յ, կը տեսնես, կեանքը ցոյց կը տայ, որ դու ճիշդ չես»: «Ես ուզում եմ, որ քո ասածը լինի...»:

Այո՛, այսօր կարող եմ ասել, որ ես սխալւում էի: Բայց որքա՛ն հաճելի է այդպէս սխալուելը: Պարոն Ծառուկեանը է՛ր եւ մնա՛ց Գուրգեն Մահարու հաւատարիմ բարեկամը: Նա ունէր իր կարծիքը, որն անցկացրեց բոլոր փոթորիկների միջով՝ առանց վախենալու հետեւանքներից: Դրա համար պարոն Ծա-

ռուկեանն արժանի է մեծ յարգանքի:

«Ծառուկեա՞նն է եկել... Ծառուկեա՞նն է եկել...»: Անդրանիկ Ծառուկեանի գալուստը Երեւանում ընդունում է որպէս նշանաւոր իրադարձութիւն... Նա՝ պարոն Ծառուկեանը, Երեւանի սիրելին է: Այստեղ նրան յարգում են եւ նրան հանդիպելը պատիւ են համարում:

Թէեւ Գուրգէն Մահարին հեռացել է մեզնից, բայց պարոն Ծառուկեանի համար թանկ է ընկերոջ յիշատակը... Եւ նա ջանում է յիշեցնել նրա մասին այն մարդկանց, ովքեր արդէն մոռացել են Գուրգէն Մահարուն: Ախր շատերը, ովքեր ոչ այնքան վաղուց երգում էին Գուրգէն Մահարու տաղանդը, այսօր գերադասում են չխօսել նրա մասին: Ախր այսօր Գուրգէն Մահարին մոռա չէ: Մեր ժամանակը դեռ չի եկել:

1970 թուական: Ծառուկեանը դարձեալ եկել է Երեւան: «Ծառուկեա՞նն է եկել... Գիտե՞ս, Անտոնինա, որ Ծառուկեանը եկել է: Եղե՞լ է քեզ մօտ», - հարցնում են ինձ մեր մտերիմները: «Ինչպէ՞ս, նա մինչեւ հիմա չի՞ այցելել քեզ», - զարմանում էին նրանք: «Նա չի եկել, բայց անպայման կ'այցելի իր ընկերոջ տուն», - հանգստացնում էի ես:

Եւ եկաւ նա՝ մեր յարգելի պարոն Ծառուկեանը: Բանիմաց, խելացի, բարի եւ... երբեմն ռոմանտիկ... Ահա հիմա ինձ հասկանալի դարձաւ, թէ ինչու են բոլորը նրան այդպէս սիրում:

Տխրութեամբ նա դիտեց Գուրգէն Մահարու թանգարանը, սիրով յիշեց նրան: Թախծով նայեց լուսանկարներին. նա եւ Գուրգէնը լուսանկարուել էին մի քանի տարի առաջ: Լուսանկարներից մեզ էր նայում մեր սիրելի, թանկ Գուրգէնը... Նայում էր եւ ժպտում մեզ... Կարծես ոչինչ չէր պատահել... Եւ նրա ժպիտն աւելի էր դառնացնում ...

Կարծիքների գրքում պարոն Ծառուկեանը գրեց. «Անմոռանալի եւ ֆիզիքապէս գոյութիւն չունեցող, բայց հոգով միշտ ներկայ սիրելի՝ Գուրգէն: Ես այստեղ եմ՝ քո տանը: Դու կաս եւ չկաս... Հանգիստ ննջիր, վերջին հայկական փարաւոն...»:

Ընկեր Մահարին եւ պարոն Ծառուկեանը լաւ բարեկամներ էին: Նրանք հասկանում էին միմեանց, գնահատում, յարգում... Նրանց յաւերժօրէն միացրել էր ընդհանուր գործը՝ սերը ժողովրդի եւ իրենց հարազատ հայ գրականութեան հանդէպ:

Պարոն Ծառուկեանը դրական դեր խաղաց ընկեր Մահարու կեանքում, եղաւ նրա բարոյական յենարանն այն ժամանակ, երբ Գուրգէնն այնքա՞ն կարիք ուներ պաշտպանութեան:

Գուրգէնը հաւատում էր իր ընկերոջը, սիրում եւ երախտապարտ էր նրան, իսկ պարոն Ծառուկեանն արդարացրեց նրա վստահութիւնը:

ԱՆՏՈՆԻՆԱ ՄԱՅԱՐԻ

1970, Մոսկուա

Ռուսերէնից թարգմանեց Սարօ Խաչատրեան

Ծանօթ. - Գուրգէն Մահարի, գրող, ծնած՝ 1903ին, մեռած՝ Պալանգա, Լիթուանիա, թաղուած՝ Երեւան: Երկար տարիներ աքսորուած է, ստալինեան հալածանքներու շրջանին: Իր գեղեցկագոյն գործերէն մին, «Ծաղկած Փշալարեր», կ'անդրադառնայ այդ տարիներու կեանքին: Գործը թարգմանուած է նաեւ ֆրանսերէնի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ՊԱՏՈՒԱՆԴԱՆ

«Վերքերուն գլխաւորը որ արդէն կոշկոռ կապած է, սա կսկծալի, ըմբոստացուցի՜ արհամարհանքն է հայերէնի հանդէպ»:
Շաւարշ Միսաքեան, ՅԱՌԱՋ



Հայկական հաղորդակցական միջոցներ, այսինքն՝ Հայաստան եւ Սփիւռք միաժամանակ:

Հայկական հաղորդակցական միջոցները, սկսած ԱԶԳԱՐԱՐՈՎ, հետեւելով քաղաքակրթութեան նուաճումներուն, այսօր նաեւ ծայնասփիւռով, հեռատեսիլով եւ համացանցով, հանդիսացած են լայն առունով հայ ազգային գաղափարախօսութեան, մշակութային զարգացման եւ քաղաքական մտածումներու խմորման վայրը: Յիշեցի ԱԶԳԱՐԱՐԸ, բայց հարկ է յիշել նաեւ ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼԸ, ՄՇԱԿԸ, ՀՈՐԻՋՈՆԸ, ԲԻԶԱՆԴԻՈՆԸ, ԱԶԱՍԱՄԱՐՏԸ, ՀԱՅ-ՐԵՆԻՔԸ, բոլորը, եւ ժամանակակիցները: Մեր զոյգ աշխարհաբարները ծնւաւորուեցան, զտուեցան, յղկուեցան, դարձան ԿԵՆԴԱՆԻ եւ ԳՐԱԿԱՆ լեզուներ՝ մամուլի ճամբով, դրոշմելով մեր ինքնութիւնը: Նորագոյն հայ գրականութեան արգասաբեր հողը հանդիսացաւ մամուլը: Ռաֆֆի եւ ՄՇԱԿԸ, Զօհրապ, Զարդարեան եւ ԱԶԱՍԱՄԱՐՏԸ... Հայկական թերթերը գրական թերթեր չէին, բայց հանդիսացան գրական բեմեր, ուր ծաղկեցան տաղանդներ:

Խորհրդային շրջանին, օրաթերթերու սիւնակներուն մէջ յաճախ կը հանդիպէի պատմութեան բանաստեղծութիւններու: Այդպէս էին նաեւ Սփիւռքի հայկական թերթերը: Բայց տեղեկութիւններու արագ շրջանառութեան եւ առօրեայի քաղաքականացման հետեւանքով, միջազգային մամուլի օրինակով, լրատուութիւնը իրարու վրայ բարդելով կարեւորը, զգայացունցը, անկարեւորը, ողողեց հայ մամուլը, մշակութային արտայայտութեան բեմը սահմանափակելով: Լրատուութեան առաջնահերթութիւնը երկրորդական դարձուց հաղորդակցական միջոցներու լեզուամշակութային նկարագիրը, հեռագրալուրային բնոյթը զարգացաւ: Դիւրութեան, միջազգայնացման, համաշխարհայնացման, մատչելիութեան հոսանքին մէջ, հայերէնը տեղի տուաւ, մեծ չափերով տեղի կու տայ այսօր, մանաւանդ երբ հայ հրապարակագիրներէն եւ լրագրողներէն շատեր կը մտածեն օտար լեզուով եւ կը գրեն հայերէն, հրապարակը կ'ողողեն ապահայ լեզուամտածողութեամբ եւ յարաճուն կերպով փոխ առնուող բառապաշարով, որ կարծէք բանգիտութեան յատկանիշ կ'ըլլայ: Հայաստանի պարագային, այս ընթացքը սկսած էր խորհրդային շրջանին եւ կը շարունակուի, իսկ Սփիւռքը աւելի բժախնդիր եղած էր - կը խօսին անցեալով -, եւ չէ այսօր, հայերէնի չտիրապետելու տկարութեամբ եւ հայաստանեան լրատուութիւնը կապկելու թեթւասկիւնութեամբ, աւելցնենք նաեւ տեւաբար աճող օտարաբանութիւնները - ֆրանսաբանութիւններ, թրքաբանութիւններ, արաբաբանութիւններ, ամերիկաբանութիւններ, սովորական դարձած ռուսաբանութիւններ, եւայլն: Ըսենք անմիջապէս որ կան յարգելի բացառութիւններ:

Մանկավարժութեան մէջ ընդունուած փորձ է որ երբ աշակերտը սխալ կը սորվի, սրբագրելու եւ ճիշդը սորվեցնելու համար շատ աւելի ճիգ եւ ժամանակ անհրաժեշտ են: Նկատի ունենալով որ հաղորդակցական միջոցները առօրեայ վարժապետներ են, անոնց միջոցաւ դրսեւորուած սխալները, զարտուղութիւնները եւ աղճատումը կը քանդեն հայկական լեզուամտածողութիւնը:

Այն առարկութիւնը, ըստ որում ժամանակակից քաղաքակրթութեան հնարած բառերը հասարակաց են, հետեւաբար զանոնք պէտք է գործածել, այդ կ'ըլլայ լեզուի հարստացում, լեզուն եւ լեզուամտածողութիւնը կը տանի խաթարման: Օրինակ մը. **Ի-մէյլը** ընդհանրացած է, բայց ֆրանսացիները չհետեւեցան հոսանքին եւ ստեղծեցին **քուրրիէլը**... Մեր լեզուաբանները եւ Լեզուի Պետական Տեսչութիւնը ընելիք ունին այս մարզին մէջ:

Հայաստանի թերթերը եւ հեռատեսիլը ամէն օր կ'արտադրեն նոր բառեր, որոնք երբեմն, այժմ՝ յաճախ, կը կապկուին նաեւ Սփիւռքի մէջ:

Այս խնդիրներու մասին յաճախ արտայայտուած են, բայց աւաղ, մնացած են մենախօսողի վիճակի մէջ:

Իսկ ինչ կը վերաբերի օտար բառերու վայրագ ներխուժման, անկարելի չէ ինքնագրաքննութեամբ անոնցմէ խուսափիլ, իսկ եթէ Լեզուի Պետական Տեսչութիւնը, լեզուաբանները եւ Ակադեմիան իրենց հմտութեամբ օժանդակեն, լեզուամշակութային անկախութիւն կը նուաճենք, ինչ որ նոյնքան կարեւոր է որքան քաղաքական անկախութիւնը, որպէսզի ժամանակակիցներս չըլլանք, հետեւելով Վիգէն Խեչումեանի ազգային խոր իմաստասիրութեան, նոր ժողովուրդի մը սկզբնաւորութիւնը, այլ բազմադարեան ժողովուրդի մը հարազատ շարունակութիւնը:

Ահաւասիկ փունջ մը աղճատումներու, որոնցմէ եթէ հրաժարինք նուազ իմաստուն չենք ըլլար.

Սփիռքեան պատկերներ.

- **փոխ-նախարարի խօսքերով** առեւտուրը կը յառաջդիմէ, - ի՞նչ հասկնալ, խօսքե՞րն են յառաջդիմութեան ազդակը:

- **Նախագահը ընդունեց**, արեւմտահայերէն չգիտնալու օրինակ մը, քանի որ ընդունիլ բայը ոչ անկանոն է եւ ոչ զարտուղի, Բ լծորդութիւն է, ինչպէս խօսիլ բայը, հետեւաբար՝ **ընդունեցաւ**:

- **ցեղախումբերու աշիրապետներու** պատուիրակութիւնը, **ցեղախումբի պետը աշիրապետ** է, իսկ **աշիրը** հայերէն չէ: Ըսել՝ ցեղապետ:

- **խորհրդարանի ընտրութիւնները** յետաձգուած են, **խորհրդարանի ընտրութիւնը** չի՞ բաւեր:

- քաղաքապետը **որոշումներ կ'առնէ**, ֆրանսաբանութեան նմուշ մը, հայերէն կ'ըսենք **որոշում տալ** կամ աւելի գեղեցիկ՝ **կայացնել**:

- **Էներգետիկայի** նախարարը... այս անգամ կապկելով Հայաստանէն ստացուածը, **ուժանիւթի** նախարար եթէ ըսենք իմաստէն բան մը կը փոխուի՞:

- **օրէնքի սեւագրութիւնը**, արաբաբանութիւն՝ զոր պէտք է հասկնալ **Նախագիծ**:

- **Նախագահին համաձայն**, ամերիկաբանութիւն, ինչո՞ւ չըսել՝ **ըստ Նախագահին**:

- Չեն խօսիր քերականական-խնդրառական սխալներու մասին, որոնք կը վխտան քերթերու էջերուն վրայ, բայ-ենթակայի, սեռի խնդրի հոլովի եւ յարաբերական դերանունի պարագային:

Հայերէն էջերու վրայ կը հանդիպինք **մագարելու**, փոխան **մաքառելու**, **չնչելու** փոխան **ջնջելու**, եւ բազմաթիւ այլ անհեթեթութիւններու, որոնցմէ կարելի է խուսափիլ բանալով բառարանի մը էջերը:

Հայաստանեան պատկերներ

Ձանազան առիթներով եւ զանազան հրատարակութիւններէ, եւ հեռատեսիլէն, քաղած են.

- ռացիոնալ, ֆոն, կոնկրետ, մոդեռնիստական, համատեքստ, սուբյեկտիվ, սոցիոլոգիզմ, սուբյեկտ, պարա-դոքս, ռեւանշ, մաքսիմալիզմ, կապիտուլացիա, էքնիկապէս, օբյեկտիվօրէն, կոնցեպցիա, նարոդնիկութիւն, սանկցիա, սյուժէ, տեռոր, ռեսուրսներ, պլատֆորմ, ֆեդերատիվ, սեպարատիզմ, պրակտիկ, նացիոնալիստական, լոյալ, միֆ, մելիորացում, ագրարային, պասսիվ, սուվերէնություն, օկուպացված, բռնազաւթուած, ռեակցիա, նիհիլիզմ, գլոբալ...

- թերապեւտ, օլիգարխ, մուտացիա, նարգիզախտ, աքսիոն, դիվիտենտներ, պետականութեան ռեգրես, երկու անձ՝ իրանց իզոտոպներով հանդերձ, քրեականացած էլեմենտ, մանդատ...

- Մենտալիտետ, պրոցես, էմիկրանտ, ինտեգրացման պրոբլէմ, ասոսիացա, ատմիմիստրացիա, միմիստրութիւն, միմիստր, այցելացաւ, ապամոնթաժեցնել, դէլէկացիա, դէկլարացիա, սեկուրիտատ, ռեստուրացիա, տրիպունալ, սանիտարական, թայմ աուֆ առաւ, կոֆէ:

- Էկոլոգիա, անատոմիա, ատմիմիստրատիվ, բանկ, ֆինանսներ, սեկտոր, ինստիտուտ, սիմվոլիկ, կարիէրիստ, մանէր, սոցիալական, կադրեր, կարիէրա, ալյանս, ֆորմալ, կլիենտելիզմ, մունիցիպալ, ռեգիոնալ, կոալիցիա, սոցիոլոգիական, հոմոգեն, ինստիտուցիոնալ, ինտենսիվ, կոնֆորմիզմ, կոնսպիրոլոգիա, պոլիարխիկ, էլիտիստական, էլիտիզմ, կոնսուլիդացիա, միրաժ, կոնսենսուս, կոնֆիկուրացիա, ինստիտիցիոնալիզացուած, նոմենկլատուրա, էմանսիպացիա, ապարատչիկ, պրոֆեսիոնալ, էթոս, կլան, կապիտալիստներ, օլիգարխներ, հիերարխիկացման, ատոմացված, զոնա, կարցիվածություն, նուվոռիշներ, կվազիան, թրոպոլոգիական, ֆունկցիոներ, տոտալ, ավտոմեքենա, ստադիոն, սպորտաձեւ, բյուրոկրատիա, ռացիոնալացում, ադապցածված, արիստոկրատիա, կոոպացիա, էշելոններ, մուտացիա, կոնտեքստ, օպորտունիզմ, իներցիա, լեգիտիմութիւն, տեխնոկրատներ, բյուրոկրատացում, դիպլոմ, ռեֆլէքս, ապարատ, լիցենզիա, մոտիվացիա, ցինիկ, մարգինալ, ինդիվիդուալիզմ, էվոլուցիա, մոդել, դիվիդենդներ.....

- թոգ, սիւպսիտաւորել, փրոսետիւրա, փոփիլիզմ, կարես, թայմինկը յարգել, կոմպոնենտ, կլանային, ապակլայնացում, ինստիտուտ, մեխանիզմ, կոռուպցիա, կոռումպացուածութիւն, լեգիտիմիցիա, լեգիտիմացնել, ակտիւութիւն, ինստիտուցիոնալիզացիոն, ինստիտուցիոնալ, էնստիտուցիոնալիզացման, ինստիտուցիոնալիզացուածութիւն, կապիտալ, կոնտեքստ, ֆունկցիոնալ, էլեմենտ, էլեմենտար, մեթոտ, փուլային, էլիտա, կադր, կոնկրետ, աուդիտ, լիցենզատրում, տերմին, սեկտոր, ստանդարագիցիա, կադաստրային, ակտ, ակցիա, էտապ, միմիզացում, տիպայնացում, հակամոնոպոլիզացիոն, ավտոմատ համակարգ, բազա, օբյեկտ, հիարարխիկ, իրաւական կուլտուրա, օպտիմալացում, մաներել, ֆինանսական, սինդրոմ, էթիկա, զինկոմիսարիատ, ռեսուրս, թալան, ռեժիմ, էնեռգետիկ, ինտոնացիա, տեխնոլոգիա, ասոցիատիվ, սոցիալական, ֆորմալ պոտենցիալ, ապստրակտ, էֆֆեկտիվ, կատալիզատոր, պրակտիկօրէն, պրոցես, լիզա, շանս, սիւբյեկտ, լոբբինկ, կոնցեպտուալ, բրոկըր, դեպոզիտար, կոնվենցիա, կորպորացիա, իմիջ, իմիտացիա, գեներալ եւ մայոր, բադրիջան, պամիտոր եւ մուրաբբա, կոնսերվա, կարտոֆլ, աւտօ, յուպկա, սամալիտ, ջիգեար, գիւլլէ, նամուա, թասիպ, տուշման, արադ, ցենար, ռէկիստր, ռեժիսոր, կոմպոզիտոր, մայեստրօ, պոեզիա, ինտեսիվացում, կոոպերատիվ, կոորտինացիոն, խիրուրկ, ֆիզիկոս, անատոմիա, ասամպլիա, ամնեստիա, պրեզիդենտ, սեկսուալ, տուրիզմ, ռեստորան, փայ եւ փայատեր, վաուչէր, թրաշ, բիվա, պլուս, պարլամենտ, սենատ, սենատոր, դրամատուրգ, մոբիլիզացիա... եւայլն:

Չեմ առաջարկեր յանձնախումբ մը կազմել, քանի որ երբ հարց մը կ'ուզենք թաղել, զայն պէտք է յանձնել յանձնախումբի մը: Լեզուի Պետական Տեսչութիւնը ինք կրնայ զբաղիլ այս խնդրով, եւ եթէ իր կազմին մէջ ներառնէ նաեւ Սփիւռքէն աշխատակիցներ, աւելի լաւ: Ի դէպ, յիշեցնեմ որ Ֆրանսայի պէս երկիր մը, իր եզրաքանակաւ եւ նորաքանակաւ յատուկ յանձնախումբին մէջ ընդունած է լիբանանցի իսլամ մտաւորական մը, առանց բարդոյթի:

Լեզուի եւ լեզուամտածողութեան վերականգնումը եւ անկախացումը կենսական նշանակութիւն ունին ազգային քաղաքական անկախութեան ամրացման համար, որպէսզի մեր ինքնութեամբ տեսնենք, նաեւ Սփիւռքի մէջ, չըլլանք «ծագումով հայեր»: Պարզ է. հայկական հաղորդակցական միջոցները պիտի ըլլան, ինչպէս եղած են անցեալին, կրողը ազգային գաղափարախօսութեան, այլապէս կ'ընթանանք օտարումի ճամբաներուն վրայ:

Կարգ մը մտածումներ մամուլի տարածման եւ դերի մասին

Խօսքը կը վերաբերի առաւելաբար տպագիր մամուլին: Կարգ մը հիմնահարցեր կան որոնց լուծում պէտք է գտնել, որպէսզի մամուլը իր իրաւ դերը կատարէ:

ա. Նկատի ունենալով որ ընթերցողներու թիւը նուազած է, հեռատեսիլի եւ ծայնասփիւռի զոհողութիւն չպահանջող ներկայութեան պատճառով, հարկ է մտածել լուծումներու մասին: Ինչպէ՞ս ընել որ հայ թերթը, Հայաստան եւ Սփիւռք, հասնի իւրաքանչիւր հայուն՝ իր յարկին տակ: Ֆրանսայի մէջ պետութիւնը կ'օժանդակէ թերթերուն: Նկատի ունենալով որ թերթը կ'ուղղուի զանգուածին, պէտք է ըլլայ մատչելի: Օրինակ, Լիբանանի մէջ, երբ համեստ խաւերը խիստ սահմանափակ եկամուտ ունին, մարդիկ օրական մէկ տուլար չեն կրնար վճարել: Նոյնն է պարագան Հայաստանի, ուր թերթ գնելը պերճանք է:

բ. Թերթ մը կրնայ կողմնորոշում ունենալ, այդպէս է ամէն տեղ, թերթերը ընդհանրապէս կը հակակշռուին կամ սեփականութիւնն են կազմակերպութիւններու, սակայն հարկ է զարգացնել կողմնապաշտ եւ ներմիտ չըլլալու մշակոյթ, մամուլի բոլոր աշխատատեղերու ազնիւ եւ հանդուրժողական համագործակցութեամբ: Աւելի դիւրին է ըսել քան ընել: Բայց այդ է ժողովուրդի քաղաքական եւ մշակութային լուսաբանութեան եւ զարգացման ճամբան:

գ. Հայ մամուլը եւ հաղորդակցական միջոցները ընդհանրապէս կը գոհանան պատրաստի լուրերով, լրագրողը կը դառնայ գրասեղանին ետին նստած խմբագրող, երբեմն այդ ճիգն անգամ չ'ըներ: Անհրաժեշտ է որ զարգանայ, զարգացնենք դէպի լուրը երթալու մշակոյթ, չբաւարարուելով յայտարարութիւններով եւ հաղորդագրութիւններով, կատարել հետախուզութիւն՝ իսկական եւ առարկայական լուսաբանութեան հասնելու համար: Աւելին. պէտք է ճիշդ ըմբռնել մամուլի **չորրորդ իշխանութիւն** ըլլալու ուժը, ինչ որ կը նշանակէ թէ լրագրողը եւ հրապարակագիրը տիրոջ ծայրը պիտի չկրկնեն, խօսափող պիտի չըլլան: Այս կարենալ ընելու համար, Հայաստան եւ Սփիւռք, յստակ օրէնքներ պէտք մշակուին լրագրողին եւ հրապարակագրին խօսքի ազատութիւնը պաշտպանելու համար: Առաջին հանգրուանին, թերթերը կրնան իրենց էջերը բանալ տարբեր կարծիքներու, օրինակ, ԱԶՍՏ ԲԵՄԻ սիւնակով, ինչ որ ճամբայ կը հարթէ ներազգային երկխօսութեան առջեւ:

դ. Հայաստան եւ Սփիւռք անհրաժեշտ է որ լրագրողներու եւ հրապարակագիրներու համագործակցականներ ստեղծուին, ոչ թէ ձեւական, այլ յանձնառութիւններու բնոյթով: Տարբեր համոզումներ ունենալով հանդերձ, կարելի է գտնուիլ նոյն համագործակցականին մէջ, պաշտպանելու համար լրագրողի եւ հրապարակագրի իրաւունքները, որպէսզի կամայականութիւններով լրագրողի եւ հրապարակագրի ազատութիւնները չսահմանափակուին: Այս ձեւով է որ կը հասունանայ քաղաքակիրթ ընկերութիւնը:

Հարցերը կան: Անոնց պէտք է մօտենալ առանց ամբոխավարութեան, առանց գերադասի եւ ստորադասի բարդոյթներու, առանց տեղայնութեան, ոչ միայն յաւելեալ իրաւունքի, այլ յաւելեալ պարտաւորութիւններու գիտակցութեամբ: Այսինքն, աստիճանաբար մշակել եւ ձեւաւորել հայկական հաղորդակցական միջոցներու ազգային ինքնուրոյնութեամբ յատկանշուող բարոյականութիւնը:

Այս զեկուցումը ամբողջական պիտի չըլլար եթէ երկու խօսք ալ չըսուէր օտարալեզու հաղորդակցական միջոցներու մասին: Անոնք, եթէ ուղղուած են օտար շրջանակներու մօտ հայկական հարցեր ներկայացնելու, օգտակար են, եթէ որակաւոր են եւ ներկայանալի: Եթէ ուղղուած են հայկական շրջանակներու, օտարումի եւ պարտութեան խոստովանութիւն են, եւ ղեկավարութիւնները պէտք է մղեն կասեցնելու տեղատուութիւնները, յաղթահարելու պարտութիւնը, վերականգնելով հայերէնը իբրեւ ազգային հաղորդակցական միջոց: Մանաւանդ պէտք է ընել այնպէս, որ այդ օտարալեզու մամուլը չհանդիսանայ օտարախօսութեան եւ հայերէնի անտեսման քաջալերանք, բարենիշ չտրուի:

Կը դիմագրաւենք շատ լուրջ սպառնալիք մը. համացանցով կը զարգանայ **լատիստառ հայերէն մը**, որուն հետեւանքները միայն բացասական կրնան ըլլալ: Հարկ է հակազդել պետական-համազգային մակարդակով, մասնագէտներ գործի լծելով, ստեղծելու համար հայերէնով հաղորդակցական միատեսակ ծրագրում: Համացանցային հաղորդակցութիւնը պատճառն է պիտի ըլլայ հայերէն այբուբենը թանգարան դնելու:


Պետական եւ համազգային ոչ-մակերեսային աջակցութիւն հարկ է ցուցաբերել հայկական հաղորդակցական միջոցներուն, որ կողմին ալ պատկանին անոնք, որպէսզի հանդիսանան ճշմարիտ վերականգնումի եւ անկախութեան ամուր պատուանդան, զարգացնեն համաժողովրդական ազգային-քաղաքական-մշակութային գիտակցութիւնը:

«**Մէկ ազգ մէկ մշակոյթ**» կարգախօսը դատարկ կը մնայ եթէ չհիմնուի հարազատութեան եւ տարբերութիւնը ընդունելու խորքի վրայ, այսինքն՝ միութիւնը նուաճել զանազանութեան մէջ, առանց զանոնք բրտութեամբ կամ արուեստականօրէն ջնջելու:

18 Յուլիս 2008

Յ. ՊԱԼԵԱՆ

Ծանօթ. Ներկայացուած Սեպտեմբեր 2008ին, Ծաղաձորի մէջ, Հայաստան գումարուած Մամուլի Խորհրդածողովին իբրեւ զեկոյց:



² ðàô° êîÆ Ø¼æ
 ä ² î¶ ² ØÆ àôÛÎÛ ,Æð
 ¶ °Ô² ÛÎ² ðâàôÐÆ
 Ä² ¶ÈÆÛ úÐ² Û°² Û



Գոյնով եւ գիծով աշխարհի բացուած է ժագլին Օհանեան, ժամանակի մը մէջ ուր գերիշխող են պատերազմները եւ առեւտուրը, շահախնդրութիւնները: Բնականութեամբ մերժած է զանոնք: Կը յիշէ որ արդէն կը գծէր, երբ ինն տարեկան էր: Մօրը կ'ընկերանար երբ ան այցելութեան կ'երթար բարեկամուհիներու մօտ: Ինք, փոխանակ խաղալու, գետին պառկած, նստած կ'իններու կրունկները կը գծէր: Ապա սկսած է գծել դէմքեր, դիմանկարներ: Շարունակած է տեւաբար գծել, ուր որ գտնուած է, ուշադիր գեղեցիկին, բարիին, կեանքին, առանց տպաւորելու մարմաջի: Ստեղծել իրեն համար կանչի մը պատասխան եղած է, կանչ՝ որ հասունցած է, մեծցած է իր

հոգիին մէջ, եղած է նաեւ զայն ապրեցնող սնունդ, զոր կ'ուզէ բաժնել:

Ժագլին Օհանեանի հոգեկան ենթահողը հայկական է, զայն ստացած է ազգային-մշակութային մեծ աւանդ ունեցած Մելգոնեան Կրթական Հաստատութենէն: Ապա, այս ենթահողը հարստացած է վարպետներու նպաստով, բազմաշերտ կապերով եւ ուսման ճամբով: Պէյրութի մէջ հետեւած է գեղանկարչական դասընթացներու, յաճախած է Օմար Օնսիի դպրոցը: Նման հաստատութիւնները գծել կը սորվեցնեն, բայց նաեւ կը ծանօթացնեն արուեստի հոսանքները, ստեղծագործողները, դէմքերը: Ժագլին Օհանեան կ'ըսէ, թէ ինք կը սիրէր Օմար Օնսիի արուեստը, մանաւանդ

ջրաներկները, արուեստ՝ որուն կը տիրապետէ, անոր գործերու թափանցիկութիւնը: Այս սէրը, պարզութեան, պայծառութեան, մեղմութեան, պիտի ըլլայ եւ մնայ իր ստեղծագործական աշխարհի մ'իծնողորտը, քանի որ ինք լաւատես մըն է, պատերազմները, շահախնդրութիւնները, չարութիւնը, կը համարէ կեղծ, սուտ, անվաղորդայն:

Լիբանանի քաղաքացիական պատերազմը ստիպած է որ ինք ալ հեռանայ եւ ապաստան գտնէ հարազատներու մօտ, սովորական արեւմտեան աշխարհէն բոլորովին տարբեր երկիր մը: Ինտոնեզիա: Միշտ նորի եւ աշխարհը ընկալելու տարբեր արտայայտութիւններու ուշադիր, հետեւած է ԱՍՐԻ նշանա-

ւոր դպրոցին, Ճաւա կղզիի Ճոքճաքարթա քաղաքին մէջ, ուր սորված է ՊԱԹԻՔԻ իւրա-յատուկ կերպարուեստը, մոմով եւ բոյսերէ ստացուած բնական ներկերով, որ իր երազային, իրականութեան լուսանցքին վրայ գտնուող աշխարհի շնչա-ուութեան եւ մեղմ գոյներուն կը համապատասխանէր: Ինտոնեզ-իայէն վերադարձին, այս նոր ոճով եւ նիւթով իր ստեղծագոր-ծութիւնները կը ցուցադրուին Քարլթոն հիւրանոցին մէջ, կ'արժանանան հետաքրքրու-թեան եւ գնահատանքի: Նորու-թիւն էին, արուեստասէրներ կը գնեն զանոնք: Այս ժողովրդա-կանութիւնը ժազլին Օհանեան կը բացատրէ, եւ կ'ըսէ թէ կար-ծէք այդ գործերը պատերազմէ եւ արհաւիրքէ դուրս գալու դուռ կը բանային:


Նոր հորիզոն կը բացուի ժազլին Օհանեանի առջեւ, երբ ան կը մեկնի արուեստներու եւ տարբեր մշակոյթներու հան-դիպման բազմագոյն քաղաքը, Նիւ Եորք, 1982ին, ուր կը կա-տարելագործէ արուեստներու եւ անոնց վերաբերող գործնա-կան իր գիտութիւնը: Կը հետեւի Արուեստներու Պատմութեան


դասընթացքին, այդ քաղաքի Նահանգային համալսարանին մէջ: Կը հետեւի երեք տարածքով - tridimensional - նկարչական դասընթացքներու, ինչպէս նա-եւ կը տիրանայ lithographie արուեստին: Այլ խօսքով, սիրո-ղական նկարչութիւն չէ ինչ որ կ'ընէ ժազլին Օհանեան: Ան իր ստեղծագործութեան կը ծառա-յեցնէ բազմակողմանի գիտու-թիւն, լիբանանեան եւ ամերիկ-եան համալսարաններէ ստաց-ուած, ինչ որ իրեն թոյլ կու տայ խաղալ գոյներու եւ գիծերու հետ, որպէսզի երազային, թա-փանցիկ եւ թելադրական աշ-խարհ մը բանայ մեր առջեւ: Իր կտաւները կը խօսին, տեսակ մը հրաւէր են մեր յաճախ կարծրա-ցած ներաշխարհին մէջ փնտռե-լու գեղեցիկը, բարին, ազնիւը, գորս կը կարծէինք մոռցած ըլ-լալ: Եւ այս՝ առանց մեկնաբա-նական լարուած ճիգի: Այդպէս է ինք, եւ կ'ըսէ թէ գծելով կ'ու-րախանայ, ինչ որ կը նշանակէ թէ կը փնտռէ երջանկութիւնը, եւ այդ հրաւէրը կ'ուղղէ բոլոր անոնց որոնք պահ մը կ'անցնին կտաւին առջեւէն, կը թափան-ցեն, կը թափանցուին, առանց պոռոտ եւ արտառոց ճիգի:

Իբրեւ հիւր-դասախօս, ան հրաւիրուած է Պէյրութի ամե-րիկեան համալսարանը, լիբա-նանեան համալսարան, Ֆիլա-տելֆիոյ եւ Նիւ Եորքի համալ-սարանները: Մասնակցած է հա-ւաքական ցուցահանդէսներու եւ ունեցած է բազմաթիւ անհա-տական ցուցահանդէսներ, Նիւ Եորք, Փարիզ, ԻՒՆԵՍԿՕ, Պէյ-րութի Նոա'ս արթ կալլըրի, Ճա-քարթա, Պէյրութի Հայկազեան համալսարան, ՄԱԿԻ պալատին մէջ՝ ԻՒՆԵՍԿՕ՝ Ժընեւ, Պելճի-քա, Եւայլն:

Լիբանանի արաբական թեր-թերը ընդարձակ յօդուածներով անդրադարձած են ժազլին Օհանեանի գործին: Անոնք շեշ-տած են իր գործերու երազային եւ թեւաւոր երեւակայութեամբ յատկանշուող աշխարհը:

Ոչ ոքի դէմ է: Կը հասկնայ որ իր ժամանակակիցները իրմէ տարբեր ըլլան, չի հակադրուիր: Ինքզինք կը սահմանէ որպէս համամարդկային սիրով տար-ուած անձ, եւ կ'աւելցնէ որ քա-ղաքականութիւն, պատերազմ-ներ, զինք չեն հետաքրքրեր, անոնք մեծերու խաղ են, անօ-գուտ եւ անհեռանկար իրարան-ցում: Ունի գեղեցիկին պաշտա-





մունքը, քանի որ գեղեցիկի հետապնդումը իրատեսութիւն է, ճշմարտութիւն: Իրականութիւնները, իր իւրայատուկ զգայնութիւններու բովէն անցնելով, կը նուաճեն խորհրդապաշտներու մթնոլորտը, ուր տեսնուածի ետին կայ նաեւ թելադրողը, որոնք արուեստասէրին կը ներկայանան չէզոք, տաք ու պաղ գոյներու ներդաշնակութեամբ, հրաւիրելով ինքնամփոփման, մտածման, եթէ բառերով խօսէ՛ր՝ անոնք կ'ըլլային բանաստեղծութիւն: Ֆրանսատառ Լ'Օրիան-Լը Ժուր թերթի արուեստի սիւնակին մէջ, բնորոշելու համար Ժազլին Օհանեանի աչքի խտիղ տուող գործերը, կ'ըսուի, չակերտի մէջ. «Երագէ՛ կեանքդ, ապրի՛ր երազներդ»: Հարկ է տրամադրուիլ ճօճանակի այս խաղին: Հեգասահ գեղեցիկի այս վկան կ'ըսէ թէ պատիկ վերաբերում մը, պատիկ «Ժեստ» մը, շատ բան կ'ըսէ իրեն, եւ կ'աւելցնէ որ

պատիկ «Ժեստ»երը կարելոր են եւ անոնք կը պակսին մարդկութեան: Այսինքն, բարիով եւ գեղեցիկով հաղորդուելու համար բացառիկ ճիգեր անհրաժեշտ չեն:

Արուեստը, եւ ընդհանրապէս ստեղծագործական աշխարհը մնայուն լարում են անցեալի եւ ժամանակակից արուեստագէտներու եւ անոնց գործերուն հետ: Այսպէս, Ժազլին Օհանեան յատուկ սէր ունի Ռամպրոնատի հանդէպ, անոր լոյսի եւ մուլթի իւրայատուկ մթնոլորտը կը կապէ գինք, իսկ հայ գեղանկարիչներէն կը սիրէ Այվազովսկիի հօր պատկերները, կը սիրէ Մինասի արուեստը ուր կայ կեանք, կառուցուած գործեր, ուր ոչինչ ձգուած է պատահականութեան: Կը սիրէ Սարեանը՝ իր ընթացիկէն հեռացող գոյներուն համար: Զրոյցի ընթացքին կը յիշուին Ժանսեմ, Գառզու, Շարթ, եւ ուրիշներ: Այսինքն, Ժազլին Օհանեան կը շարունակէ իր ինքնատիպ երկ-

խօսութիւնը ստեղծագործողներու աշխարհին հետ, իւրաքանչիւրին մօտ գտնելով արժէքներ, գեղեցկութիւն, եւ երբ սիրէ գործ մը, կը գնէ, հաւաքածոյ կը կազմէ:

Հակառակ հանդարտ արտաքինի, Ժազլին Օհանեան, իշխանութիւններու կաշկանդումէն հեռու, կը սիրէ ազատութիւնը, զայն կը գտնէ երբ կը գծէ, եւ կ'ուրախանայ: Գիտէ որ ամէն արուեստագէտ կը ցոլացնէ իր ժամանակը, հարցերը, անոնք ըլլան տնտեսական, քաղաքական թէ ընկերային, բայց չի բանտարկուիր անոնց մէջ: Իսկ ինք իր ներաշխարհի ապրումներուն ընդմէջէն կը դիտէ կեանքը, դիտելու եւ արտայայտուելու իր իւրայատուկ տեսանկիւնը ունի, քանի որ, կ'ըսէ, իւրաքանչիւր գեղանկարիչ իր հոգիին, ցանկութիւններուն, երազներուն ցոլացումը կը դնէ իր գործին մէջ: Իրեն համար կատարելութիւն չկայ, բայց ձգտումը դէպի

կատարելութիւն մնայուն պէտք է ըլլայ, ինչ որ կ'ենթադրէ ինքնագոհութեան հակադրուող ինքնաքննադատութիւն:

Զրոյցը ընթացաւ արուեստի գործը «բացատրելու» հունով: Ժազլին Օհանեան կը խորհի որ արուեստագէտը իր գործը չի կրնար բացատրել, քանի որ իւրաքանչիւր անձ իր մօտեցումը ունի, ըստ պահու եւ ըստ իր ներաշխարհին, իւրաքանչիւրը ունի «իր ձայնը», «իր տեսածը», բայց կարելի է բացատրել գծելու եղանակը, գործածուած միջոցները, «թեքնիք»ը: Արուեստագէտը ունի «իր լեզուն, որ ընթեռնելի պէտք է ըլլայ», կ'ըսէ ինք: Կ'աւելցնէ. «Մենք, արուեստագէտներս, պատգամ մը ունինք տալիք, միտք մը ունինք փոխանցելիք»: Արդարեւ, այդպէս եղած են վաւերական ստեղծագործողները, եւ ոչ միայն գեղանկարչութեան մարզին մէջ: Թէ ի՞նչ է այդ «պատգամ»ը, Ժազլին Օհանեանի մտածումը յստակ է, մարդկութիւն, մարդկայնութիւն, համայնական ապրումներ, բարին եւ գեղեցիկը, դաստիարակութիւն, մշակոյթ, արուեստ, որոնք մարդը կը մօտեցնեն մարդուն: Ասոր համար ալ ինք կը սիրէ բոլոր ստեղծագործողները, քանի որ իւրաքանչիւրը բան մը կ'ըսէ, պատգամ մը կը բերէ, բան մը կ'աւելցնէ: Այսինքն՝ ազնուացնել արուեստի ճամբով: Ուրկէ նաեւ հոգեբու-ժական որպէս միջոց գործածուող «Արթթերափի»ն, դարմանում՝ արուեստով:

Ժազլին Օհանեան կը դասախօսէ, գործադրութեան դնելով իր տեսակէտները: Կը յայտնէ, որ իր գեղանկարներուն համար կը ճշդէ մատչելի գիներ, որպէսզի մարդիկ տուն տանին արուեստի գործը եւ երբ վարժուին, սկսին հասկնալ, կը սիրեն



արուեստը: Կը խօսի կարգ մը երկիրներու մէջ գործադրուող նախաձեռնութեան մը մասին. մարդիկ գեղանկարը կը վարձեն, տուն կը տանին, եւ ապա կը վերադարձնեն: Կը յիշէ իր ցուցահանդէսը այցելած աշակերտներու պարագան, որոնք կրկին եկած են, այս անգամ իրենց հետ բերելով իրենց մայրերը: Ասոր համար ալ, կարգ մը երկիրներու մէջ կան արուեստի գործը բացատրող յատուկ անձեր, որոնք կը շրջին մէկ ցուցասրահէ միւսը: Ինչպէս կը կրկնէ, «երբ հասկնան, կը սիրեն»:

Ժազլին Օհանեան կը սիրէ հայկական տարազները, անոնց ինքնատուութեան եւ գոյներուն համար, կը ներկայացնէ գանոնք:

Ինք մեծ համարում ունի Հայաստանի երիտասարդ գեղանկարիչներուն հանդէպ, որոնք կը ստեղծագործեն նուաճուած ազատ պայմաններու մէջ: Կը հաւատայ որ անոնք բան մը ունին տալիք, տարբեր, նոր:

Ժազլին Օհանեան կ'ոչ կ'ընէ

որ մարդիկ երթան ցուցահանդէսներու, մօտենան արուեստագէտին, տեսակցին անոր հետ, փորձեն «կարդալ» գործերը, հաղորդակից դառնան: Պայման չէ որ գնեն ցուցադրուած գործերը, այլ մտնեն մթնոլորտի մը մէջ, ուր կան բարին, ազնիւը, կեանքը, մարդն ու մարդկայնութիւնը:

Եւ ի հարկէ, Ժազլին Օհանեանի այս հակումներուն պատկերացումներն են իր երազներու, գոյներու, գիծերու, պատկերներու, ցնորքի կամ յուշի մէջէն յայտնուող դէմքերը:

Մտերմութիւն, զգացում, զգայնութիւն եւ կատարելութեան ձգտում, տիրական գիծերն են Ժազլին Օհանեանի աշխարհին: Իրեն համար աներազ կեանքը փուճ է: Աւելին. կ'ըսէ. «Բացարձակը որոնող երազատես մըն եմ»:

ԲԱԳԻՆ

24 Նոյեմբեր 2008

«ԱՐԴԻ ՀԱՅ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ՝ Հայաստան-Արցախ»

Կազմեց՝ Արեւշատ Աւագեան
Երեւան - 2008




«ԿԱՄՈՒՐՁ 2006-2007»

Տարեգիրք - Վրաստանի գրողների
ստեղծագործական միութիւն
Թիֆլիս, 2007




«ԿԱՆԱԶ ՈՒ ՍԵՒ - Արցախեան օրագիր»

Թաթուլ Յակոբեան
Երեւան-Ստեփանակերտ, 2008



«ՀԻՆ ԿԱՐԱՍԻՆ ՆՈՐ ԳԻՆԻՆ»

Շահանդուխտ
Խմբագիր՝ Կարօ Յովհաննէսեան
Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան
Պէյրութ, 2008




«ՀԱՅ ԳԱՂՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»

Հրաչեայ Աճառեան
Երեւան, 2002



«ԻՆԵՍՍԱ»

Կոլիա Տէր-Յովհաննիսեան
Երեւան, 2008



**«ԳՐԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ -
Գիրքեր, դէմքեր, հարցեր»**

Յակոբ Պալեան
Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան
Փարիզ, 2008



**«ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԱՐԱՏ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ - ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ 60 ԱՄԵԱԿ»**

Գլխաւոր խմբագիր՝ Կարինէ Ղարախանեան
Խմբագրական կազմ՝ Արմէնուշ Առաքելեան,
Անահիտ Աբրահամեան, Ռուբինա Օհանեան
Թեհրան, 2007



Վարիչ խմբագիր՝
Յակոբ Պալեան

Խմբագիրի օգնական՝
Արփի Համբարեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Անուշ Թրուանց (Լիբանան)
Սարգիս Կիրակոսեան
(Լիբանան)
Մովսէս Հերկէլեան
(Լիբանան)
Հրանդ Սարգարեան
(Միացեալ Նահանգներ)
Արքմենիկ Նիկողոսեան
(Հայաստան)
Յարութիւն Պերպերեան
(Գանատա)
Յակոբ Տէր Ղուկասեան
(Լիբանան)
Զաքար Քէշիշեան
(Լիբանան)

Էջադրում՝
Զարեհ Զէօրէքճեան


Հասցէ՝
Պուրճ Համուտ,
«Հաղզոյեան» կեդրոն
Բ. յարկ
e-mail :
pakin@hamazkayin.com
Հեռ. 00961-1-241072

Տպագրութիւն՝
Համազգայինի «Վահէ
Սէթեան» տպարանի

Ցրուումի կեդրոն՝
Համազգայինի
Գրատարած,
Հաղզոյեան կեդրոն,
Պուրճ Համուտ
Հեռաձայն՝
(01)241263/4
Ֆաքս՝
(01)260329
Փոստարկղ՝
80-1096 Պ. Համուտ
E-mail :
imphamaz@inco.com.lb



Հրատարակութիւն
Համազգայինի
Կեդրոնական Վարչութեան



ԲԱԳԻՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2008
ԽՁ. ՏԱՐԻ ԹԻՒ 4

- ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՑՈԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ - 1
- ԸՆԹԵՌՆՈՒԼ ԵՒ ՄՏԱԾԵԼ՝ ՀԵՏԵԻԵԼՈՎ Գ. ԳԻԺԱԼԵԱՆԻ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆԸ ՊԱՏՄԵԼՈՒ ՓՈՐՁԻՆ - ԲԱԳԻՆ - 2
- ԵՐԱԽՏԻՔԻ ԶԳԱՑՈՒՄՈՎ - ԱԼԻՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ - 7
- ԱՆԿԱՊ ՅՈՒՇԵՐ - ՄԵԹՐ ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԼԵԱՆ - 12
- ՄՕՏԱԲՈՐ ԱՆՑԵԱԼԵՆ ՈՐ ԱՅՆՔԱՆ ԱԼ ՄՕՏԱԲՈՐ ԶԵ -
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԵԻՈՐԵԱՆ - 17
- Ի ՅՈՒՇ՝ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ՀԻՄՆԱՐԿԻՆ - Ս. Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ - 22
- ՈՒՐ ԷՔ ԶԻԻՆԵՐ - ԿԱՄԻԼԱ - 25
- ԿՈՒՍՈՒԹԻՒՆ - ԼԱԼԱ ՄԻՍԿԱՐԵԱՆ-ՄԻՆԱՍԵԱՆ - 27
- ՄԵԿԵՆԱՍԸ - ՊՕՂՈՍ ԳՈՒԲԵԼԵԱՆ - 32
- ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ - ԼԻԼԻԹ - 37
- 2008Ի ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՊԵԼԵԱՆ ԴԱՓՆԵԿԻՐԸ՝ ԲՆՈՒԹԻՒՆԸ,
ՍԱՐԴԸ ԵՒ ԻՆՔՁԻՆՔ ՅԱՐԳՈՂ
ԺԱՆ-ՄԱՐԻ ԿԻՒՍԹԱՒ ԼԸ ՔԼԵԶԻՕ - 40
- ԺԱՆ-ՄԱՐԻ ԿԻՒՍԹԱՒ ԼԸ ՔԼԵԶԻՈՅԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ - 47
- ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԵՆ ՆԱՄԱԿ ՄԸ ՊԵՏՐՈՍ ԶԱՐՈՅԵԱՆԻՆ - 49
- ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԼՈՅՍ ԵՒ ՄՏՈՒԵՐ ԱՆՑԵԱԼԵՆ-ԱՆՏՈՆԻՆԱ
ՄԱՐԱՐԻ, ՀԻԱՄՐՈՂ ՅՈՒՇԵՐ - ՄԱՐՕ ԽԱԶԱՏՐԵԱՆ - 51
- ՀԱՅԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒ
ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ
ՊԱՏՈՒԱՆԴԱՆ - Յ. ՊԱԼԵԱՆ - 72
- ԱՐՈՒԵՍՏԻ ՄԷՋ ՊԱՏԳԱՄԻ ՈՒՆԿՆԴԻՐ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒՅԻ
ԺԱԳԼԻՆ ՕՐԱՆԵԱՆ - 75
- ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ - 80

ԲԱԳԻՆ

Pakine



ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



ԱՐՈՒԵՍՏ



ԻՄԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ